Կատարսիս

Սկզբում այրեք 6-րդ էջը

Բովանդակություն

Նախաբան…………………………………………………………………
Սքեմասուրբը………………………………………………………………
Շոգ է…………………………………………………………………………
Նրա ներքևը, որ ստիպեց զարկի իմ վերևը………………………………
Մա՛մ……………………………………………………………………………
Ով ում ժպտաց ……………………………………………………………..
Մաշված տարիներ…………………………………………………………
Մի գրամ արև………………………………………………………………
Ոչնչից ամեն ինչ……………………………………………………………
Իմ աղմկոտ հայուհին…………………………………………………….
Լուսանցքներ………………………………………………………………
Ես էլ չգիտեի…………………………………………………………………
Դու ինձ՝ այո, ես քեզ՝ ոչ……………………………………………………
Թե………………………………………………………………………………
Իրենով…………………………………………………………………………
Ինքը չէր սիրում կարմիրը……………………………………………….
Կա………………………………………………………………………………
Դարձիր…………………………………………………………………………
Լսիր ինձ հենց այնպես…………………………………………………….
Իմը չէիր……………………………………………………………………….
Ժպտա՛…………………………………………………………………………
Պատիժ…………………………………………………………………………
Երջանիկ կյանքի մի պատմություն……………………………………….
Խավար ցրողը………………………………………………………………
Բարև՛…………………………………………………………………………

Գաղտնի ընկերը...
Երկաթյա ընկերը...
Լույսեր..

Նախաբան

Ես ոչ այնքան հասարակ մի ստեղծագործություն եմ, որ ծնվել է մի օր, մի տեղ և մի օր էլ վերածնվել է այստեղ։ Այն պատրաստվում է ծնվել։ Բայց ես՝ որպես մի մասնիկ այս տիեզերքի, այդ օրը ծնվեցի ու

վերածնվեցի ամեն անգամ, երբ դու խոնարհվեցիր քո հավատի առաջ: Ես ծնվեցի, քանի որ դու հավատացիր: Ես ապրում եմ, քանի որ դու հզոր ես. դու հզոր ես, որովհետև դու պետք ես ինձ: Այո՛, հենց դո՛ւ: Այդպես զարմացած մի նայիր այս տառերին: Դո՛ւ, որ կարդում ես այս տողերը, վստահ եմ, արդեն լավ գիտես իմաստն այս ամենի, միայն թե պատկերացում չունես, թե ինչ ես կարդում: Ու գիտես ինչո՞ւ, որովհետև հասարակությունը քեզ սովորեցրել է իր աշխարհայացքը ու հրամցրել իր տեսակետը, և մեկ րոպե անգամ դու չես մտածել՝ արդյո՞ք ճիշտ էր նա՝ այդ կեղծ, շինծու գրագետը, թե՝ ոչ: Գիտես՝ դու շատ հզոր ես, դու այլ ես, դու ի՛մն ես, իմ մասնիկը: Բնավ պարտադիր չէ, որ դու համաձայնես իմ մտքերին կամ իմ աշխարհայացքին: Բայց վերջում, վստահ եմ, կհամաձայնես: Գիտես, թե ինչո՞ւ, որովհետև ամեն անգամ այս ամենը կարդալիս դու այլ բան ես հասկանալու: Քո ամեն ընթերցած բառը ունի տողատակ, և դու դա բացահայտելու ես: Քո ձեռքում մի գիրք է, որը գրել եմ ես, բայց որը փոխակերպվելու է ըստ քո կյանքի ու մտքի հասկացողության: Այս փոքրիկ պատմությունները՝ առաջին հայացքից հասարակ թվացող, քեզ ուղեկցելու են ողջ կյանքում: Քո մտքի ամեն զարգացման փուլում դու կարողանալու ես մեկ բանալի գտնել և բացվել ինքդ քո առաջ:

Հուսով եմ՝ այս ժողովածուն ձեզ շատ բան կսովորեցնի:

Հաճելի ընթերցում:

Աքեմասուրբը

Հիմա պիտի հիշեմ սնամեջ ճաղերի ետևում վայր ընկած մի մսագնդի, որ սթափվեք, մարդի՛կ, որ չմոլորվեք, իմ միամի՛տ

ադամորդիներ: Հոգուս ճերմակ շղարշը կարծես տիղմի մեջ թաթախվեց, երբ տեսա նրա չարաբաստիկ ներկան իրեշտակայինիս կյանքում: Նրա մորեմերկ մարմնից մատներն էին միայն փրկված: Մսագունդը արտացոլում էր այդ մի քանի օրերի բզկտված վայրկյանները, և մժեղի պես տզզում էր՝ ներում աղերսելով նրանից, ում հոգին մատաղ էր արել իր նման «սուրբ» սատանաներին, բայց իմ «նա»-ն անկոտրում էր, այլևս ոչ մի կաղկանձ չէր ահաբեկում նրան, նրան տապալել էին: Թե 14-րդ դարը լիներ, նրան արդեն վաղուց այրել էին:

Ձմեռ էր, այն բամբակյա ծմեռներից, որի ամեն փաթիլի տակ դեռ չծաղկած ձնծաղիկն էր անգամ սարսռում: Փողոցներում խառնաշփոթ էր, մարդանման արարածները ինչ-որ շատ կարևոր գործ էին անում. բղավում էին, ծիծաղելի էր, հետոն ավելի հռհռեցնող նոտաներ ուներ...

«Նա»-ն քայլում էր, փողոցները փակ էին, աշխարհը մի կողմ էր գնում, նա՝ մեկ այլ կողմ: Քամին բերեց այդ չսպասված հրեշին, ում դեմքն անմեղ էր, խոսքերը՝ փաղաքշական: Կարճ ասած՝ տիպիկ հրեշ: Գայթակղեց «իմին», թակարդեց խեղճիս, փշալարեր տվեց ձեռքին, որ իրեն պաշտողներից անգամ պաշտպանվի: «Իմը» տրվեց հրեշի հոսքին, բնությունը ոտքի ելավ. քարուքանդ էր անում այն ճանապարհը, որով տանում էին մոլորեցնելու «իմին»: «Իմը» համառ էր, մենք նրան դեռ չվերգտած կորցրինք: Չէ՞ որ հազիվհազ էր վերանորոգվել հոգին: Ու ահա սկսվե՜ց. գմբեթով սատանայի որջում սքեմավոր «սրբերը» դեռ վաղուց էին գողանում մարդկային հոգիները: Երբ արևը ուր որ է մայր պիտի մտներ, սքեմավոր «սրբերը» զրնգոցով փակում էին որջի դուռը, և պատրաստվում սատանայական ախորժակով հուպ տալ նրա հոգին՝ հագեցնելով «վտարվածի» թափանը[1]:

---

[1] Թափան-կենդանու ստամոքս:

Բարև՛, շնորհակալ եմ քեզ, որ այնքան խելացի և բանիմաց ես գտնվել՝ գնելով այս գիրքը, էլ չեմ ասում, որ հիմա անելու ես կյանքիդ ամենախելացի քայլը։ Այս էջում դատարկություն է քեզ համար, որը դու պետք է լցնես քո վատ ու մեղքերով լի անցյալի տողերով, այնուհետև այրես: Այրումից հետո միայն սկսիր ընթերցել գիրքը։ Եղիր երջանիկ և մոռացիր մեղսավոր կյանքդ, մի՛ եղիր մարդ, եղի՛ր մաքուր հրեշտակ։

Վիթխարի անտեսանելի համոզման ուժով նրան կարողացան ծնկի իջեցնել «խորանի» առաջ, դարավոր քարերը սողունների հավաքատեղի էին դարձել:

Աղոթք հնչեց, խաչը գլխին սեղմվեց, նրա ոսկորները դողացին, քանդվեցին, ճչաց, ընկավ հատակին, չորեքթաթ սկսեց հռհռալ. նա կառավարվում էր ներշնչված դևի կողմից: Փրկիչ «սուրբը» լուռ հետևում էր: Այդ տեսարանից եկեղեցին արտասվեց, իրական սուրբ ոգին կարծես ապշահար եղավ, թե ինչ արեցին նրա անվան տակ սքեմավորված շինծու սատանայածին շանորդիները:

Ոտքի կանգնեցիր ու հրեշի հորդորով խոստացար, որ կգաս ևս մի քանի օր, և կվանեն քո դևին:

—Բայց մի բան էլ կա,-ասաց «սուրբը»,-պետք է մկրտենք: Միայն դա նրան կփրկի:

Դե իհարկե, նրանք «ամենակարող Աստված» էին:

—Այո՜, իհարկե, հա՛յր սուրբ, անխտիր,-ասացիր դու:

Օր երկրորդ: Քեզ իբրև թե մկրտեցին. հրեշին կնքեցին քեզ կնքամայր, նրա անհասկանալի և կամազուրկ ամուսնուն՝ կնքահայր: Այսօր էլ կերակրեցին «վտարվածին»(Լուցիֆերին): Մարմնիդ ամեն միլիմետրը գիտակցում էր իրականությունը, արյունդ անգամ երակներովդ վազում էր, ելք էր փնտրում, բայց ո՞ւր փախչեր. դու բանտարկել էիր նրանց բոլորին դիվահարության ներշնչանքի ճաղերի ետևում:

Օր երրորդ: Բնությունը դեռ փորձում էր քեզ պաշտպանել. ավտովթարից փրկվեցիր, բայց գնում էիր հմայված խամաճիկի պես:

Ահա և «սուրբը»: Ա՛յ թե տեսարան էր. հեռվից հազիվ էր նշմարվում նրա դեմքը, շրթունքները մի տեսակ տձև էին, ծռված, այլայլված, բայց գլանակը ագահաբար մոտեցնում էր շուրթերին, իսկ հետին պլանում վեհ, հզոր, հպարտ ու անսասան կանգնած էր եկեղեցին: Եկեղեցի, որը պղծել էին հրեշները՝ «սուրբ» կոչված:

Արևը համարյա մայր էր մտնում, և կրկին լսվեց փակվող եկեղեցու դռների ճռռոցը, որը սարսուռ էր արթնացնում: Վերջինս վերցրեց խաչը, միացրեց սատանայական ձայնն, ու սկսվեց բեմականությունը: Այսօր ավելի քան զարհուրելի էիր: «Սուրբը» գոռում էր.

—Անունդ ասա՛, անո՛ւնդ, երեքն եք, երե՛ք դև, կոչնչացնե՛մ բոլորիդ:

Ու կարդում էր հատված Քրիստոսի այլակերպությունից: Ահա այդ պահին ժամանակը քառատվեց, արձագանքելով շպրտվեց սուրբ քարերի մակերեսին, շերտ տվեց վրեժխնդրության միտումով: Ապերջանիկ զգացիր քեզ, ինքնաոչնչացման պայթուցիկը միացվեց, ոտքերդ սող տվեցին, ու դու գալարվեցիր այս անգամ օձի պես, ողջ հատակին քո մարմնով բարևեցիր: Կրկին հռհռոցդ լսեցի, հետո ողբիդ

ձայնը այնպես արձագանքեց, որ խաչը ճաք տվեց: Ի զարմանս ինձ՝ վեր կացար, համբուրեցիր խաչը, խաչակնքվեցիր ու գնացիր:

Օր չորրորդ: Այսօր քո ցավին ավելի մոտիկից էին ծանոթացել. որջի պարագլուխները իրենց մանրաորդերից իմացել էին քո արգելված սիրո մասին:

—Հը՜մմմ... լավ է,-ձեռքերի ափերը իրար մոտեցնելով և թունավոր թուքը կուլ տալով ասաց նա,-լավ է, լավ, այսօրվա համար «ժեզաբել» ունենք:

Ու սկսվե՜ց...

Գիտեք՝ ինչ էլ ասեմ, ինչպես էլ պատմեմ, անզոր եմ մեսրոպատառ, ամենահարուստ ու շքեղ հայերենով նկարագրել իմ տեսածն ու «իմի» զգացածը:

Պոռնիկ սրբերը իմ մաքրամաքուրին ոչնչացնելու միտում դեռ վաղուց ունեին: Չեմ մոռանա՝ ոնց էիր աղերսում, որ փրկեն, հետո միայն հասկացա, որ նրանցից էիր ուզում փրկվել, արդեն հասկացել էիր, որ քեզ հիպնոսացնում էին: Դու իմ հրեշտակն էիր, ով դև էր նրանց դիվային աչքերում:

Երբ խաչը կրծքավանդակիդ էր սեղմել, դու չէիր կարողանում շարժվել, մեկ այլ սքեմավոր ոտքերդ էր սեղմել հատակին, հանկարծ մոտեցավ ծուռ մռութովի ամորձիների անօրեն տիրուհին և սկսեց սեղմել մատիկներդ ողջ ուժով, անսիրտ, անաստված «սրբուհին» ուրախ էր, որ քեզ տապալել է, ասաց.

—Բա գիտեիր՝ մարսելո՞ւ ես. այդքանին ստել ես:

Ականջներս այրվեցին. ո՞վ՝ նա՞, իմ «նա՞»-ն, ինչպե՞ս կարող էր նա ստել, երբ ամբողջ քսանինը տարիները պայքար են եղել ստի դեմ:

Ես նայում էի քո փոքրիկ մարմնին, որ այդ մի քանի օրերի ընթացքում կեղեքվել ու ոսկրոտել էր, իսկ հոգուդ ու մտքիդ մասին կլռեմ...

Ախր ո՜նց, ո՜նց դու հասար էստեղ: Իրականությունից «կտրատվել» էիր...

Օր հինգերորդ: Այսօր արյունոտ ու մաշկազերծված պարանոցով և հոգու չարորակ քաղցկեղով տուն եկար, ինքդ էիր մաշկազերծել երբեմնի մարմարյա պարանոցդ, բայց ո՞վ էր դրդել և ինչպե՞ս էին ներշնչել:

Բայց այսօրվանից սկսվեց քո պայքարը. որոշվեց, որ պետք է քրքրես կենդանանման մարդկային մոլախոտերին և մայր բնությանը փրկես սպառնացող մարդահամաճարակից: Ոտնաթաթիդ անբնական ձևը սատանայության նշան անվանեցին, մարդկանց օգնելուն ստախոսություն և սրբապղծություն վերագրեցին: Հրեշտակս երկրորդ անգամ «ընկավ»: Քո իրական, անմեղ բնույթը «սքեմավորները» հուղարկավորեցին:

Այսօրվա պես հիշում եմ դեմքիդ ամեն շարժը, հիշում եմ աստվածածին, անմեղ, չարչարված դեմքդ, խոնարհված աչքերդ, դողացող, կտրված մատներդ, փլատակված կրծքավանդակդ, բացակա հոգիդ ու փլատակների տակից սողալով, կիսամեռ, ցաք ու ցրիվ եղած սիրտդ և ոռնացող, աղաղակող ու սղոցված ձեռքերով Սերդ...

Հետո...էլ ի՞նչ հետո, հետո էլ երկար ժամանկ չտեսա քեզ, ո՛չ մեկ չտեսավ քեզ...

Մի օր երեկոյան զբոսնելիս անուշ ձայնդ շոյեց ականջս, պտտվեցի, դու էիր, նույն մանչն էիր՝ ժպտերես, փոքր, բայց արտահայտիչ աչուկներով, ծիծաղում էիր, երջանիկ էիր: Մատներդ էլի շարժում էիր (դեռ փոքրուց էիր այդպիսին), թե խոսեիր, ապա անպայման նաև մատներով, բայց մյուս ձեռքդ չտեսա, հետո նկատեցի, որ նրա ձեռքի մեջ էր, նա կարծես պաշտպանում էր վիրավոր մատներդ: Նայեցիր ինձ, հիշեցիր կամ գուցե՝ ոչ, բայց անխտիր զգացիր ով լինելս, հայացքդ դատարկ էր, բայց փլատակված կրծքավանդակդ կանգուն էր, իսկ ա՛յ սիրտդ... սիրտդ կարկատված էր, տխրեցի, բայց տեսա, որ քո «նա»-ն էր կարկատել. իր սրտից թել էր մանել ու քոնը կարկատել:

Նրա հայացքը ցավով էր ողողված, ակնթարթները ամեն րոպեի՝ քեզնով հագեցած: Հերթական պատերազմում նրա սերը կրկին հաղթեց. այլերից ու այլակերպություններից, հրեշներից ու մսագնդերից քեզ պեղեց, բերեց ու դրեց քեզ իր կողքին և քո տեղում:

Մսագնդե անպետք «սրբերը» իրենց արժանի տեղում են, իրենց դատարկությունը երբեք չի լցվի, իսկ դուք, թեկուզ միլիմետրերով, բայց առաջ սլացեք:

Եվ թո՛ղ որ Նրանց կիլոմետրերով սերը փրկի մոլորակը անդառնալի վախճանից ու մարդահամաճարակից, և թո՛ղ լինի այդպես ու պիտի՛ լինի այդպես:

Շոգ է

—Շոգ է, արի հանվենք:

—Չէ, ինչո՞ւ:

—Դե գործ է, բա չանենք:

—Հա, մի քիչ կարո՞ղ ես սպասել:

—Ինչի՞ն սպասեմ, հիմա՛ր աղջիկ, ժամանակն անցնում է: Լավ էլ սիրուն մարմին ունես:

—Դե հա, մաշված է մի քիչ մարմինս, կներես:

—Հա, ոչինչ, փող կտամ, թանկ շորերի տակ չի երևա մաշված մարմինդ:

—Հա՛, հա՛, փող կտաս...

—Մեկ, երկու, երեք... երեք հարված, վերջ, ազատ ես, տիկնի՛կս, ա՛ռ էս փողը, վաղը քեզ կոշիկ կառնես:

Նա շպրտեց գումարը սեղանին ու դուրս եկավ:

Մյուս «նա»-ն պառկած էր անկողնու մեջ, մեջքի վրա էր պառկել: Նայում էր վերև, դեպի ո՞ւր էր նայում: Ե՛կ նայենք մենք էլ վերև: Մի կողմ

դիր տառերը, նայիր վերև: Ա՛յ դու, տեսա՞ր մաքուր երկինքը, ճիշտ եմ, չէ՞: Այո՛: Այն երկու ագռավն էլ այնպես են «կը՜ռ-կը՜ռ» ասում, չեն թողնում շարունակես կարդալ: Նրանք զրուցում են, քննարկում մյուս կառկառներին, որ նստած են քիչ ավելի հեռու և մարդկային կերպարանք են ստացել, նրանք վստահ են, որ մի օր կիմանան միջոցը և իրենք էլ մարդկային կերպարանք կստանան:

Մյուսը, ա՛յ դու, սիրունատե՛ս երիտասարդ, վստահ եմ՝ աջ հոնքդ հիմա ուզում ես քորել, բայց տե՛ս հա, քորելուց ձախ ձեռքով կքորես, թե չէ աջդ զբաղված է, թե՞դու ձախլիկ ես: Ինչևէ, կարևոր չէ: Նայիր երկինք, ի՞նչ ես դու տեսնում: Այնտեղ դու աստղեր ես տեսնում, և թաքուն ծխող երկու երիտասարդի ծուխը քեզ գրավում է և շեղում գրքից, ուզում ես գնալ, մի լավ ծխով հագեցնել մաքուր թոքերդ, որ հայրդ ու մայրդ այսքան տարի այսպես խնամքով պահել են: Է՜խ, ինչ ասեմ, գնա: Հետ գալուց ձեռքերդ կլվանաս, որ էջերս չցավեն մատներիդ ծխի հոտից:

Ահա այս մեկն էլ տարիքով տղամարդ է: Օ՜, ինչպիսի լրջություն: Նա փողկապն է փորձում թուլացնել, խանգարում է: Ուզո՞ւմ ես արձակել, արձակիր. ի՞նչ էլ բուրում է օծանելիքով պատված վերնաշապիկդ, վստահ եմ՝ կլորիկ գումար ես հատկացրել: Գովելի է, գնահատում եմ մաքրասեր և կայացած տղամարդկանց: Բա եկ նայենք վերև, ահա այստեղ մենք շատ անելիք ունենք: Ահա այստեղ մենք տեսնում ենք առաստաղը՝ ճերմակ ու մաքուր, այստեղ արգելված է ծխելը:

Մյուսներիդ էլ չեմ ասում, բոլորս էլ նայեցինք վերև նրա հետ միասին, բայց այն, ինչ պետք է նա տեսներ այնտեղ, այլևս չկար: Այդ փառավորն էր, այդ նա էր բոլոր «նա»-երից առավել, որ նրա կողքին էր միշտ, նախքան բոլոր «նա»-երը կհալածեին նրան: Նա նայում էր, անվերջ կանչում նրան, բայց ոչինչ չկար:

—Վայ զարկեմ ժայռերին, «ես»-դ այրեմ, մաշկազերծ անեմ ես քեզ, իմ անիրա՛վ մարմին, թող բաժին դառնամ ագռավներին, միայն թե ինձ կրկին վերհիշիր, ո՛վ բարեգութ:

Լռեց, հանկարծ ձեռքով սկսեց հպվել անկողնուն, ապա վեր ելավ տեղից: Դանդաղ քայլերով գնաց դեպի լոգարան: Լոգարանի պատերը բաց կապույտ էին: Ժամանակին սիրում էր ջինջ երկնքին նայել: Այնտեղ

հանգիստ էր, այնտեղ խաղաղ էր ու մաքուր: Գլուխը իջեցրեց ու ժպտաց: Նիհարած երեսին մի քիչ գույն եկավ: Ատամներն էլ կարծես թե հատուկ նկարած լինեին: Շրթունքները փափուկ, բայց անգույն էին: Աչքերը...նրա աչքերը մի տեսակ անգույն էին, գունավոր էին, թե՝ անգույն, չգիտեմ, չէ՛, հաստատ անգույն էին: Մատները մոտեցրեց շրթունքներին: Կրկին ժպտաց: Նա սկսեց շոշափել իր ժպիտը: «Տարիներ առաջվա ժպիտն է, նույնն է, ուղղակի մի քիչ չորացել է ժպիտդ. հա, մի քիչ, շատ չէ»,- ասաց նա ինքն իրեն: Նա շոշափելով փորձեց գտնել օճառների դարակը, մութ էր, չէր կարողանում գտնել.

—Բայց ախր տեղը չեմ փոխել, պետք է այս դարակում լինեին: Ահա թե որտեղ եք:

Բաց արեց ծորակը, ու ջուրը լցվեց մարմնի վրա: Այն վազում էր նրա մաշկի վրայով: Նա անվերջ մաքրում էր մարմինը: Օճառը վերջացավ, մի փոքր կտոր մնաց ձեռքին, դեն նետեց ու գոռաց.

—Դե ապաքինի՛ր, դե քե՛զ տեսնեմ, ապաքինի՛ր ինձ: Ես ապրե՛լ եմ ուզում, ապաքինի՛ր, գրո՛ղը քեզ տանի:

Ջուրը հափշտակել էր նրա մարմինը:

—Երգել կուզեմ, պարել կուզեմ,-նա մերկ դուրս եկավ լոգարանից: Ձայնարկիչը միացրեց, սենյակը լցվեց երաժշտությամբ**:**

Տեսարանը ճնշում էր, բայց նա շարունակում էր անվերջ պարել: Նա կանգ առավ, բայց հոգին դեռ պարում էր:

—Ցավում է, անառա՛կ, հերիք է քեզ վաճառես: Ի՞նչ ես ուզում, ի՞նչ ես կեղեքում մարմինդ: Ինչո՞ւ, ինչի՞ համար: Ասում են՝ անառակները մաքուր հոգի ունեն, ուզում եմ մաքրեմ հոգիս: Ի՛նչ հիմար ես դու...հիմարությունս էլ կմաքրվի,- ու սկսեց ժպտալ, սկսեց անիմաստ բարձր քրքջալ,-պա՜մ, պա՜մ, պա՜մ պա-պա՜մ, պա՜մ,-անվերջ լսվում էր նրա ձայնը:

Սենյակի սեղանին դրված գումարը հանկարծ ձեռքի տակ ընկավ: Շոշափեց, այնուհետև մոտեցրեց քթին, սկսեց հոտոտել.

—Ասում էր՝ այս փողին քեզ վաղը կոշիկ կառնես: Չբռնեմ փողը ոտքերիս հագնեմ, ժամանակ չկա կոշիկ առնելու:

Նա փողը մոտեցրեց ոտքերին, ուղղեց ոտքը, դրեց վրան: Մի պահ դեմքը մռայլվեց, մի բան դուրը չեկավ:

—Չէ՛, սպասի սոսնձեմ ոտքերիս, որ ամեն օր չհանեմ-հագնեմ, իզուր ժամանակի կորուստ է:

Այս անգամ նա, սողալով ողջ բնակարանով մեկ, ման եկավ, վերջապես սոսինձը գտավ:

—Ահա ա՛յ այսպես,-սոսինձը քսեց թղթադրամին ու ոտքերի տակ ամրացրեց:-Ահա սրանք էլ իմ ազատության սահմանները: Ձիերի պես հիմա ես էլ նալեր ունեմ:

Նրա մարմինը մերկ ու սլացիկ էր, ինչ խոսք: Մազերը՝ թաց, երկար, ծածկել էր կրծքավանդակը: Ձեռքով պատը շոշափելով գտավ մի նկար.

—Հիմա ես քեզ մի տեսակ նման եմ, չէ՞:

Պատի նկարը կտավե ազատություն էր, նկարում ներկերով շաղախված վայրենի մի ձի էր, որ փախչում էր երամակից ու դեպի ազատ դաշտվայր սլանում, սմբակները իրարահան էր անում հողը, երկրագունդը եկել, խցկվել էր այդ արարածի մեջ: Այն սև էր՝ նրա մազերի պես:

Նա նկարը դեն նետեց, այն փշրվեց տան աջ անկյունում:

—Ես քեզ պես եմ,-գոռում էր նա,-հա՛, քե՛զ պես ու պես-պես չեմ ձեզ պես: Այսպես ձեր «պեսերից» զատված: Հե՛տ բեր լույսն իմ աչքերի, անիծվա՛ծ, ո՞ւր են աչքերս, բե՛ր լույսերս, տեղը դիր, հե՛տ բեր իմ երկինքը, հե՛տ բեր իմ պես-պես աստղերին, իմ արցունքների կացարանը ո՞ւր տարար, մարմինս պղծեցիր, հոգիս ո՞ւր տարար:

Նա գոռում էր խելագարի պես, ապա լռեց:

Շենքում ապրող սիրունատեսը արագ քայլերով տուն էր գալիս՝ մատների մեջ մի քանի տերև պահած, որ տանը չզգային ծխախոտի հոտը: Վերելակի մոտ անուշ օծանելիքի հոտից շեղվեց ագռավների ձայնից հոգնած ընթերցասերը: Բղավոցից քարացավ միանգամից ամեն ինչ:

Լույսը վառվեց, ներս մտան բոլորը: Նրան գտան անշնչացած ու մերկ, նա այդ չէր ուզում, դա միանշանակ: Այդ տուն երբեք ոչ ոք չէր մտնում: Բոլորը նրան վհուկ էին համարում, խավարի մեջ էր արդեն քանի տարի: Տնից դուրս չէր գալիս, երբեմն տղամարդիկ էին գալիս ու գնում: Բայց տարիներ առաջ այդպիսին չէր: Շենքի բնակիչները բոլորը նոր էին, միայն մի տարեց կին էր, որ նրա մասին մի քանի բան էր հիշում. «Մի օր սիրունիկս տուն եկավ անփույթ հագնված: Մի քանի րոպե հետո ինչ-որ մեկը նրա ետևից եկավ, հետո իմ սիրունիկին բերեցին մի քանի հոգով: Բայց կապված աչքերով: Ու դրանից հետո նա երբեք տնից դուրս չեկավ: Այդ օրվանից ոչ ոք նրա մասին ոչինչ չէր հարցնում, նրան կարծես մոռացան»:

Այսօրվա բղավոցից հետո նրա տանը գտան շատ վաղուց գրված մի նամակ. «Ես այս չէի ուզում, ես կյանքը շատ էի սիրում, ապրելու համար էլ շատ եմ չապրել, դրա համար երևի չդիմացա»: Այդ օրը նրան կեղեքեցին, հետո ինչ է թե դեմքը կհիշեր, լույսից էլ զրկեցին: Սենյակում գտան մի ամբողջ կարողություն, գտան հիանալի կտավներ, սենյակը լի էր անթիվ խզբզած թղթերով, անթիվ օճառներ, մեկի վրա գրված էր. «Կոշիկ չգնեցի, հեն է, ի՞նչ վատ կոշիկ է որ: Հիմա ես նրան եմ նման, ա՛յ նրան, ես այսպիսի վախճան չէի ուզում, բայց դե կյանք է, էսպես ստացվեց»…

Նրա ներքևը, որ ստիպեց զարկի իմ վերևը

—Արի դադարենք հիշել, արի՛ դադարենք կեղեքվել ու կեղեքել մեկս մյուսիս, արի, դե մո՛տ արի, արի՛ գրկեմ, կուզե՞ս գրկեմ:

—Հա՛, կուզեմ:

—Դե ձեռքերդ բա՛ց արա:

—Ձեռքե՞րս պիտի գրկես։

Նա այնպես էր նայում ինձ, կարծես առաջվանը չէր, կարծես այլ կին էր իմ դիմաց կանգնած։ Նրա փարթամ կուրծքը հիմա ինձ չէր գայթակղում, բայց բնավ ոչ այն պատճառով, որ գրավիչ չէր…Այն, հակառակը, ավելի գրավիչ էր, ավելի արտահայտիչ էր ու միևնույն ժամանակ այնքան նուրբ։ Ես հայացքով հետևում էի նրա շարժումներին։ Աչքերս սահում էր նրա մարմնի վրայով։ Ես հայացքով շոյում էի նրա պարանոցը, շնչում նրա հոտը, որ թոքերս լցվեր նրա մարմնի հոտով։ Խելառություն է. ուզում էի շրջել նրան իմ կողմ ու սեղմել ինձ, ուզում էի ամուր սեղմել նրան, առաջվա պես զգալ նրա մարմնի շարժումները։ Երբ նա ինձ հետ էր լինում, ամեն ինչ անում էր, որ խելառության հասցներ իմ տղամարդկային խելառ ու անասնական բնազդը։ Եվ նրա մոտ ստացվում էր։ Նրա հայացքը դեռ սառած էր, իմ կողմ էր նայում, կարծես ապակու հետևից նայեր։

—Ինչո՞ւ ես այդպես նայում ինձ։

—Այդպես ինչպե՞ս։

—Այդպես զգույշ։

—Իսկ քեզ այլ կերպ ես երբևէ նայե՞լ եմ։

—Դե, համենայնդեպս, ինձ այդպես է թվացել։

—Չէ՛, ուղղակի այդպես պետք է նայեի։

—Դե հա՛, ճիշտ ես, մի ողջ կյանք է անցել։

—Գիտես՝ քեզ չեմ մոռացել, հաճախ եմ հիշում,-ու նա լռեց, խոնարհեց հայացքը, մի խորը հոգոց հանեց։ Ես ինձ ամենավերջին ստորն էի զգում, ես երազում էի նրա հայացքում գտնել ատելություն դեպի ինձ։ Նա ինձ չէր ատում, ինձ ուղղակի նայում էր (անգամ երբ չէր նայում)։ Շարունակեց կշռել շաքարավազը։ Լսեցի նրա ձայնը.

—Խնդրեմ, տիկի՛ն, ձեր շաքարավազը՝ 400 դրամ։

—Շաքարը թանկացել է հա՞,-հարցրեց ցավով տարեց կինը։

—Այո՛, մայրի՛կ ջան, բայց ասում են շատ բան է փոխվելու, ասում են, թե Նիկոլի թիվն է եկել:

—Է՜հ, աղջի՛կս, ոնց է երևում, որ թփերդ դեռ դալար են: Լավ նայիր քեզ, ես գնամ, բիձուկս մենակ է:

Կինը հեռացավ:

Մոնիկան սրբեց արցունքները: Ես շարունակում էի հետևել, թե ինչպես է նա աշխատում սեղանի այն կողմում: Երբ նրան առաջին անգամ տեսա տարիներ առաջ, նա պարում էր: Բեմի վրա նա իր այսօրվա նույնչափ փարթամ կուրծքն էր ցուցադրում: Որքան էի ես շոյել այդ կուրծքը, որքա՜ն էի ես նրան սիրում՝ չունենալով դրա իրավունքը: Նա մերկապարուհի էր, նրա մասին շատերն էին խոսում, իսկ ես նրան զգում էի: Սովորականից ավելի երկար տևեց իմ ու նրա անկողնային կյանքը: Ամեն գիշեր մեքենաս արգելակում էի գիշերային ակումբի մոտ, նրան վերցնում ու ամենուր ես վայելում էի նրա մարմինը: Զգում էի, որ կապվում է ինձ, բայց մտածում էի՝ դե, աղջիկ է էլի: Մի օր երբ մարմինն էի համբուրում, այդ ջերմ ու անուշ մարմնի վրա տեսա դաջված իմ անունը: Սիրտս սկսեց արագ զարկել: Ես բարկացա, բայց տղամարդկային ինքնասիրությունս շոյվեց, ինձ լավ էի զգում, մի էնպես էլ հպարտ էի: Երանի այսօր էլ ունենայի առիթ հպարտանալու:

Անցավ մի քանի օր, ես նրանից նամակ ստացա. «Սիրելի՛ս, ես հղի եմ»: Մի քանի ժամ քարացած մնացի: Հետո կատաղեցի, ինչ վատ բառ կար, գրեցի: Հետո զանգեց: Լաց էր լինում: Ես նրան ստիպեցի ազատվել երեխայից վաղն ևեթ: Ի՜նչ անասուն կենդանի էի ես: Նա ասաց, որ չի անի դա երբեք, որ չի հեռացնի երեխային: Ես սպառնացի նրան: Նա լռեց: Հաջորդ օրը նրանից ստացա նամակ. «Մենք մահացանք»:

Սրտիցս մի մեծ քար ընկավ: Ես մոռացա նրան: Չիմացա, թե ինչ եղավ, ուր գնաց, միայն գիտեի, որ ողջ է: Իմ տղամարդկային հպարտությունը փաստորեն դաջվածքով էր միայն շոյվում:

Հիշողություններն ինձ հափշտակել էին: Ես նրանից հետո շատ կանանց հետ եմ եղել, անհաշիվ, բայց նրան մաշկիցս պոկել չէի կարողանում: Չգիտեի՝ դա սեր էր, թե՝ կիրք, գրո՛ղը տանի: Մի օր

գինովցած մտածում էի, որ ուզում եմ ամուսնանալ և հասկացա, որ չկա մեկը, ում կուզենայի իմ կինը լիներ: Հիշեցի նրան, նրա մարմինը, նրա հավատարմությունը: Միայն հիշում եմ, որ դեկին նստած՝ աննորմալի պես գոռում էի: Արթնացա սպիտակ պալատում: Ոտքերս չէի զգում:

—Հանգիստ եղեք, հիմա անզգայացնող ենք ներարկել, մի քանի օրից կքայլեք, բայց…,-ու բժիշկը լռեց: Բայց ի՞նչ:

—Բայց մենք ստիպված էինք հեռացնել ձեր տղամարդկային սերմնարտադրության օրգանը: Ցավում եմ:

Սիրտս չէի զգում: Ես ոչինչ ասելու, անգամ լռելու ուժ չունեի: Չեմ հիշում՝ ոնց եմ ապրել հետո:

—Շատ ես սիրունացել, Մոնա՛: Փոխվել ես, ուրիշ ես: Կգա՞ս գրկեմ:

— Մի՞թե ուզում ես գրկել:

—Հա՛, շա՛տ: Ներիր ինձ, Աստված սիրես…

—Ինչի՞ համար, ես՝ փոքրիկ շնչավորս, չափից դուրս անարժան եմ դատել որևէ անարժանի:

Նրա բառերը ծակում էին ականջներս: Բայց նա եկավ. քայլերը դանդաղ էին, շունչս կտրվում էր: Նա առաջացավ, իմ կողմ էր գալիս, հանկարծ երբ սեղանից այս կողմ անցավ, ես տեսա նրա որովայնը, նրա մայրական փարթամ կուրծքն էր, որ ինձ այլ զգացում էր տվել: Բայց նա ինձ մոտ չեկավ:

—Բարև՛, քաղցրի՛կս, և ինչպե՞ս են իմ տիկինն ու իմ արքայադուստրը,- լսվեց իմ մեջքի ետևից տամարդկային խրոխտ ձայնը:

—Հոյակապ, ապագա՛ հայրիկ,-ասաց Մոնիկան ու իմ մեջքի ետևում գրկեց իր ընտանիքին: Այն ընտանիքին, որից ես զրկել էի նրան, որից հետո զրկվեցի ես:

Նրա ներքևը ստիպեց, որ զարկի իմ վերևը:

Որտե՞ղ էր ի՛մ արքայադուստրը, չծնված իմ աղջիկը…Որդիասպանի կնիքը դաջված՝ ես քայլեցի քանդած փողոցներով՝ կրծքումս քարշ տալով

քանդված հոգիս ու չիմանալով՝ ուր դնեմ մարմնիցս անիմաստ կախված անպիտան ձեռքերս:

Մա՛մ

—Մա՛յր՝ հզոր, լուսե, անմար ու անքակտ սիրով լցված,

Այդ հույսով օծված որդիդ ո՞ւր է:

—Զավակս այստեղ է,

Զավակս կողքիս է,

Անուշ շնչում է, ամուր գոգիս է:

—Մա՛յր, հա՛յ մայր, վե՛հ մայր, նրա՛ մայր,

Ժպիտդ ո՞ւր է:

—Այն սարերինն է, վազող գետերինն է,

Թաց հողերինն է, արյուն ամպերինն է,

—Մա՛յր, սիրո՛ւն մայր, քա՛ջ մայր, մե՛ր մայր,

Գույներդ ո՞ւր են:

—Բալե՛ս, այն քաթանինն[2] է,

Տղայիս արյամբ ծածկված կտավինն է,

Նրա անուշ «մա՛մ ջան»-ինն է,

Հետը չքայլած ճամփեքինն է,

[2] Քաթան-կտավատի թելից հյուսված գործվածք:

Նրա չծնված մատղաշ բալինն է,

Կիսատ թողած մի կտոր հացինն է:

—Մա՛մ, ա՛յ մամ, ի՛մ մամ, հերոսի՛ մամ,

Որդիդ գիտե՞ս ուր է:

Գլուխդ վեh պահիր, մա՛մ,

Ժպտա՛, մա՛մ ջան,

Որդիդ փլատակված, բայց չխոնարհված Սրբատանն է,

Որդիդ քո տաղարանն է,

Քո պաշտպանն է,

Հայի ժանիքն է,

Ազգս դիրտից[3] փրկողն է,

Հարյուրամյակների ոխը հանողն է:

Կներես, մա՛մ,

Տղադ արցունքովդ

Դարերի արյունը սրբողն է...

—Մա՛յր, հավատո՛վ մայր,

Աղոթքդ ո՞ւր է:

—Աղո՞թքս, աղո՞թքս հարցնում ես...

Աղոթքս բալիս սենյակում

Ողբացող, դատարկ պատերումն է,

Որդուս արդուկված ու, ավա՜ղ,

Իմ՝ կնճռոտված,մի քանի օրում ծերացած

Մատներովս ճմրթված սավանումն է...

[3] Դիրտ-կեղտ, մրուր, նստվածք:

Հ.Գ. Որքա՞ն դեռ պետք է աշխարհը, երեք կապիկների քաղաքականությունը որդեգրած, հետևի այս բեմականությանը, որտեղ մեր մատղաշ սերունդն է մսաղացի տակ, որքա՞ն դեռ պետք է դուք լռեք և քմծիծաղի առիթ տաք եղկելի թուրքին, որքա՞ն դեռ պետք է մի բուռ ազգիս արյունը այս անորակ թատրոնի դիլետանտ բեմադրիչների ձեռքին դեկորացիա դարձնեք: Լռել այլևս անհնար է, զարթնի՛ր աշխա՛րհ, ո՞ւր է ոգիդ, որ մարդասիրություն է գոռում, միայն ցուցադրելո՞ւ համար, թե մարդասեր է: Ասում եմ քեզ, աշխա՛րհ, որ հարյուրավոր հայ մոր աչք կուրացավ քո անտարբերության պատճառով, ասում եմ ձեզ «տմարդիկ»: Դուք սողալով պիտի ոչնչանաք, քանզի Արարչի աչքը ամեն չասված խոսք է լսում, և այսօրվա հայ մոր ողբը, որ ականջներս է խլացրել, պիտի լցվի ձեր տները, որ հասկանաք՝ հողն էլ, ջուրն էլ, աշխարհն էլ բոլորինս է: Այն այրված մարմիններով կիսելու համար մենք, ախր, շատ քիչ ենք, բա՛վ է անիմաստ ոգևորելով ազգիս կոտորեք, բա՛վ է…Զարթնի՛ր, հայի սո՛ւրբ ոգի, զարթնի՛ր: Գրո՛ղը տանի, բա՛վ է:

2020 թ., նոյեմբերի 9

Ով ում ժպտաց

Զբոսանքի դուրս գալու համար օրը հարմար էր, և տվնջյան լուսատուն այսօր սովորականից ավելի շատ էր շռայլում իր լույսը և իր լուծիչ ջերմությամբ կարծես բիլ երկինքն էր կուլ տալ ուզում: Եվ ինչքա՜ն դյութիչ էր այսօրվա այգաբացը, և ինչքա՜ն ահարկու էր խաժակ երկնքի և հրաբորբոք արեգի պայքարը: Այսօր օրն էր ընկղմվելու մտքերի ոլորանի մեջ ու տրվելու կրքոտ մենակության կանչին:

Անհասկանալի է հանգստությունն իմ բառերի, ու նիրհեցնող է գուցե ողջույնն իմ արևի, գուցե և չբավարարող իմ հոգու քաղցը: Եվ ահա

այս շրջադարձի համար ես պարզագույն մի քայլ կանեմ ու իմ հոգեկեղեք[4] եղած հերոսին կվերցնեմ ինձ հետ՝ դեպի իրականության և երևակայության թավ անտառ, որտեղ ես անմարմնաբար կապրեմ իր իսկ կյանքը ու կապրեցնեմ իմով: Եվ ահա ես ու նա…

Տրվեցի մենակության կանչին, ահասարսուռ մի մենություն, որը գազանաբար հափշտակեց ինձ, և մոլագար դարձա, ու սկիզբ դրվեց մոլագար կերպարի կյանքին:

Ահա ստեպ-ստեպ քայլելիս նա իր կեցվածքը ուղղեց և կերտեց հոգու ու մարմնի մի ներդաշնակություն: Եվ ցասումով լցված, ագահաբար կուլ տալով իրեն հատկացված թթվածինը, անտեսված լինելով՝ ուժ որսաց, ուժ՝ լինել անտեսանելի և ո՛չ անտեսված: Անմասն մնալով մարդկային հայացքներից՝ իր մեջ եռում էր տեսանելի լինելու ցանկությունը, լինել մասնիկը այդ ձեր շինծու հասարակության, որտեղ դուք պարուրված եք ոսկերիզ վարագույրերով և ադամանդյա լաչակներով, բայց թափանցիկ եք ու դատարկ: Այդ լաչակներից այն կողմ դուք նանիր եք, ունայն: Մի քանի երկրային ակնթարթ և նա սկսեց իր մեջ կրել վրդովմունքը կյանքի: Եվ ահա իր այդ զույգ աչքերում գոյանում էին մարդկային կտտանքներն ու բարեբախտությունները, այդ մոգական հակասությունը թովում էր հոգին, ապա փթթեցնում ծաղկի պես, վարդի նման աննման բուրում, բայց և սուր ծակում: Այդ դրվագը այլևս երբեք չէր կրկնվելու, չէր արմատավորվելու, բայց և արմատախիլ էլ չէր լինելու:

Փառահեղ մտքերը, հակասական զգացմունքները նրա կեցվածքին տիեզերական շքեղություն էին հաղորդում և նա, լինելով անդամ վարակված հասարակության, նրանցից անջատ էր: Նա նրանց մեջ էր, բայց և նրանցից զատված: Ահա զգալով նրա կերպարի ողջ լինելը՝ ես խոյանում էի իր մեջ ու հափշտակվելով դիվային մի ուժով՝ գոռալ էի ուզում: Ինքս իմ դեմ ընդվզում եմ ՝ գնա՞լ առաջ, դեպի այն կերպարը, լինե՞լ դիտորդը նրա այդ որոտալի պայքարի: Անհնար է այլևս ինձ կանգնեցնել, ես այստեղ եմ, նրա հետ, ու այս ամենը նա է զգում, նա է ապրում ու շնչում: Եվ այո՛, աննկատ է մնացել գարշելի կեղծերի մեջ, ովքեր իրենց հոգիներն էլ կվաճառեն, աճուրդի կհանեն գրոշներով անգամ: Եվ ինչի՞ համար, որ լոկ մեկ ավել ծափ էլ լսեն, որ լցնեն իրենց

[4] Հոգեկեղեք-հոգին կեղեքող, տանջող:

ցուցամոլության քաղցի ճեղքը, որ ըմբոշխնեն իրենց էժանագին խաղին ուղղված, իրենց իսկ պես փուչ ու կեղծ գովքի խոսքերը, որոնց հազարավոր ծափերն անգամ մեկը չարժեն: Ահա թե որքան ցածր են ձեր բարձր ծափերը, ո՛վ դուք՝ կեղծ, պերճաշուք հասարակության պարագլուխներ: Այդտեղ դուք չունեք բեմադրիչներ, բայց ինքներդ ձեզ շնորհել եք գլխավոր հերոսներ ու դեռ համարձակվում եք ծիծաղել ձեր իսկ հանդիսատեսի վրա, ովքեր անկախ իրենց կամքից դարձել էին ձեր այդ նախիրների շքերթի դիտողները: Ի սեր Աստծո, կողպեք ձեր երախները, լռե՛ք, անպատկառնե՛ր, նախ չորացրեք ձեր դիմակներով փակված դեմքի շպարի շերտը, որ երբ ծիծաղեք ձեր միակ դյուրահավատ հանդիսատեսի վրա, գոնե չհիասթափեցնեք նրան ձեր այդ ճաք տված, տձև դիմակով, որի տակ նա կնշմարի ձեր կենդանական հոգու պոչը, որը սկիզբ կդնի իսկը ձեր նման մարդագազանի ծնունդին:

Լռեցրեք նրան, ո՜վ տիեզերքի արարիչներ, բնության փառահե՛ղ տաղանդներ, բա՛վ է արդեն խլացնեք մեր ականջները ձեր բարբաջանքներով ու ճամարտակելով, բա՛վ է մեզ կուրացնեք ձեր «սիրունատես» սողուն հոգիներով, թող ձեր այդ եղկելի դերակատարումը փոշի դառնա ու կուրացնի ձեր աչքերը:

Լռո՞ւմ եք: Բա ինչ կանեք, կլռեք, ինչևէ թե լուռ եք, խոսեցնել եմ ուզում հիմա ես ձեզ: Պարզաբանեք, խնդրեմ, իմ այս հարցը խնդիր դարձած, որտեղ ես անկարող եմ հասկանալ՝ ո՞վ է ում վրա ծիծաղում, ո՞վ է ում հանդիսատեսը, կամ ո՞վ ո՞ւմ քննադատը. դո՞ւք, թե՞ մենք:

Ո՛չ, բնավ չեմ բաժանում ես մեզ խավերի, այլ երախներն եմ ձեր փակել ուզում, որոնք նույնացնում եմ բնանը խավարասերների, որոնք խավարն են պաշտում ի դեմ լույսի: Եվ զարմա՞նք եք կրում դուք ձեր դեռ թարմ նկարված դիմակով դեմքի վրա, թե՞ ահն է հարձակվում ձեր վրա, իսկ միգուցե ուր որ է անձրև՞ է շփելու, և քամին ձեզնից պոկելու է ձեր անհաշիվ «ես»-երը:

Մոլորվեցի՞ք, գիտեմ՝ ահասարսուռ են խոսքերն այս, դիպուկ են դրանց բառերի հոսքը ձեր հնամաշ ուղեղների համար: Մի՞թե չկա մի աթոռ, որ հատակը խազելով քաշեք ու վայր դնեք ձեր նույնքան հնամաշ հետույքները, որոնք միշտ աթոռ են տենչում: Ա՜խ հա, մոռացել էի՝ դուք աթոռ չէ, բազկաթո՛ռ եք նախընտրում, երբ մյուսը անգամ ոտք չունի, որ

հատակը զգա, երբ այն մյուսը հայրենիք չունի, որ տուն գա, երբ ահա այս մեկը որբ է, իսկ դուք, միևնույն է, դեռ բազկաթոռ եք տենչում, այն էլ բնական կաշվից, խեղճ կենդանու կաշվից, ով անտառ էր դուրս եկել իր ձագուկների համար կեր հայթայթելու և որը այդպես էլ չհագեցրեց իր ձագուկների քաղցը, բայց հագեցվեց, փաստորեն, ձեր հետույքների քաղցը:

Ո՜չ, չփորձե՜ս ասել, թե սա հակասություն է կամ օրենքը բնության, դա դու հետո կհասկանաս, երբ հարցերս խեղդեն ու բռնեն քո մսակալված, ճարպակալած պարանոցից, բայց մինչ այդ մտածիր, թե այդ օրենքները ո՞վ էր հորինում, չէ՞ որ դու էիր որոշում, երբ հերթն էր թափանիդ հարցը լուծելու: Բա՜վ է ինձ գազան դու կոչես կամ փորձես էջը փակել, միևնույն է, ես քեզ այցի եմ գալու: Դե լսի՜ր ուրեմն, զգա՜ ուրեմն, սովորիր կյանքի շտեմարանը հենց թռչուններից, կենդանիներից և բնության ստեղծած յուրաքանչյուր գոյությունից, բայց ոչ թե դրանք կուլ տալով, այլ դրանցով զմայլվելով...

Ա՜խ հա, որտե՞ղ էինք կանգ առել. աթոռակ, այո՜, աթոռակին, այն չկա՞, քեզ ախր այն հարկավոր է, որ ոտքերդ չբեզարեն, երբ այդքան երկար վատ դիմակահանդես ես նայելու: Ինչև է, չկա աթոռ, չկա և հայելի, ուրեմն նայիր այստեղ՝ իմ աչքերին, անարժա՛ն մարդ, նայիր այս զույգ աչքերին, այստեղ դու ստիպված ես, թեկուզ երերալով, կանգնել ինքդ քո առաջ, ա՜յ տես, այն լիքն է քո որկրամոլությամբ, քո անհամար «ես»-երով, այս է հայելին, արտացոլանքն է քո մեղքերի, այն այս ադամորդու արցունքի կաթիլում է: Եվ ահա այստեղ դուք փնտրում եք ինքներդ ձեզ, մոլագարի պես փնտրում անվերջ ու հենց մի պճնանք եք տեսնում, հոգոց եք հանում և կարծես հպարտանալով ասում՝ ա՜յ,ա՜յ սա ես եմ:

Հա՜, դուք, դա դո՞ւք եք, չէ՜, հարգելի՜ս, նախքան այդ պճնանքը դու տես, թե ինչ ճահիճներ են գոյացել այդ պճնանքին կից, ու թե ինչ գարշահոտություն է լցվել, որը ուր որ է տենդի է վերածվելու ու խժռելու բազում անմեղ կյանքեր: Չե՞ս ուզում, հա, տեսնել: Փակիր աչքերդ, ձեռքերով կողպիր տեսողությունդ, քոնն է իրավունքը, չեմ ստիպի: Չէ՞ որ օրենքները դու ես գրում, դու ես հորինում: Քո կամքով են օրենքները արյան գնով գրվում ճերմակ թղթի վրա, որտեղ թանաքի փոխարեն արյուն է: Եթե դու ես հորինում օրենքներն ու կանոնները, հապա էլ ո՞ւր

մնաց քո պնդած բնության օրենքը, որից կառչելով՝ դու պնդում ես, դու բնության անունից փաստում ես, որ թափանդ լցնելու համար բնությունը թույլ է տալիս զրկել ձագուկներին իրենց հորից կամ մորից:

Կակազո՞ւմ ես, բառե՞ր ես փնտրում, շփոթվեցի՞ր, բա ինչ կանես: Հեգնում եմ ես քեզ: Հեգնում եմ, բայց դեռ սառն են շուրթերս, դրանք չափազանց սառած են ժպիտի համար, չկա այդ ժպիտը, չկա այն անհո՛գ ծիծաղը:

Չմոռանաս այս ողջ ընթացքում խորհել հարցիս շուրջ, թե ով է ում վրա ծիծաղում:

Բայց եկ շեղեմ ես քեզ, վրդովմունքդ այնքան ծանոթ է ինձ: Մարմնովդ սարսուռ է անցնում, ցուրտ է, այն վայրկյան առ վայրկյան ավելի է սաստկանում, այն մտնում է հյուսվածքներիդ մեջ, դրանք շրջանցում ու հասնում ոսկորներիդ: Սառը քրտինքը պարուրում է ողջ մարմինդ, ցուրտը, սարսուռը մխրճվում են մաշկիդ տակ ու քեզ հաշմանդամի վերածում: Դու վերածվում ես անշարժ մի քարի: Եթե հասցնես, զգա վերջին անգամ, թե ինչպես է մաշկիդ տակ՝ երակներիդ անոթների միջով վազում տաք արյունը և թթվածնով հագեցնում մարմինդ ու սնուցում ողջ օրգանիզմդ: Զգո՞ւմ ես, հաճելի էր, այնպե՞ս չէ, փառահեղ զգացում է չէ՞ լինել կենդանի, լինել մարդ: Բայց հիմա, հենց այս պահին ակնթարթորեն ահաբեկվում ես, քանի որ անկարող ես զգալ այդ ամենը, դու այլևս զուրկ ես քեզ մարդ զգալու կարողությունից: Այժմ դու քեզ հաշմանդամ ես զգում: Գիտե՞ս թե ինչու, շտապեմ իմաց տալ քեզ՝ ժամը եկել է. արցունքն է հոսում աչքերիցդ, այն մի կաթիլ արցունքը, որը իր մեջ է ընդգրկում ձեր իսկ կերտած կյանքի արտացոլանքը: Ողջ մարդկության քայքայված ճակատագրերի, որբացած մանուկների, պատերազմում զոհված հերոսների, անժամանակ մահացած երկրածինների, անհետ կորած քաղաքների, կորցրած գիտելիքների, հռչակավոր տաղանդների, դավաճանված մարգարեների, այդպես էլ չծնված մանուկների ու մարդկության ձեռքով նախատակած գաղտնիքների, որոնք նույն այդ մարդկանց երջանիկ եդեմական կյանքն էին ապահովելու, այս ամենի և էլի շատ վերերկրային կորցրած արժեքների արտացոլանքն է այդ մի կաթիլ արցունքի մեջ: Այն իր մեջ էր պահել քո դարավոր կյանքի պատմությունը, և այժմ դու այն կորցնում ես, գիտակցո՞ւմ ես, դու կորցնում ես այն, ո՛վ ամենակարող մարդ: Դո՞ւ չէիր,

որ ծիծաղում էիր, որ հզոր էիր, դե մի բա՛ն արա, մի՛ կորցրու այդ կաթիլը: Տես, որ անկարող ես, փթիր ես քեզ զգում, ճշմարիտ եմ, համաձա՞յն չես: Ո՞ւր կորավ քո ոսկերից վարագույրը, ո՞ւր չքացավ քո ադամանդյա լաչակը:

Կգոռաս, կպատռես կոկորդդ` ասելով.

—Անկարո՛ղ եմ, քարացա՛ծ եմ, հաշմանդա՛մ եմ:

Կպատասխանեմ.

—Ինչո՞ւ ես արտաբերում այդ անզորությունդ բնորոշող մեկնաբանությունները, հզո՛ր ու ուժեղ մարդ, ամենակարո՛ղ մարդ: Ա՛խ, հա՛, կներես, ինչպես էի մոռացել, անդամալույծ ես, քիչ առաջ էլ ասացիր: Բայց շատ էի տարված տիեզերքի ուսումնասիրությամբ, չնկատեցի(քմծիծաղ):

Ահա և քեզ ուսմունք` երբ դեռ արյունը վազ էր տալիս աստվածային կերպարով ստեղծված մարմնովդ, այդ ժամ դու անտարբեր էիր, քննադատ էիր, ծիծաղում էիր, երախդ էիր բացել, վերացնում այն ամենը, ինչը կարող էիր ոսկի դարձնել ու կրել և՛ ներսից, և՛ դրսից: Կարծո՞ւմ էիր, թե փյունիկ ես, կվերածնվես, որ կստացվի: Չէ՛, վստահ էիր` մարմինը, որը կրում է հոգիդ, քեզ նրանք են տվել որպես բանտ, բայց ախր դու ինքդ ես բանտարկել քո հոգին այդ մարմնի մեջ, դո՛ւ, այլ ոչ թե նրանք` այնտեղ բնակվողները (ցուցամատով ցույց է տալիս երկինքը):

Հիմա դու ես քննադատվողի աթոռին, նրա մաշկի տակ, նրա անվասայլակին, կուզե՞ս քեզ տեղափոխեմ քո բուն: Սպասի՛ր, դեռ վաղ է, դեռ ճանապարհ ունենք անցնելու:

Դու երբևէ հարցրե՞լ ես քեզ, թե ինչու ես դու այդքան տկար հոգով ու այդքան անզոր այս պահին: Չէ՞ որ արցունքն «իմն» է, բայց արցունքն իր մեջ կրում է նաև քո կյանքը: Երկուսս ունենք հավասար իրավունք և կարող ենք այն փրկել, կամ գուցե խորտակել: Չգիտես թե ինչու, ես ավելի եմ հափշտակված դրա փրկությամբ: Միշտ էլ այդպես է եղել` «թույլերն» իրենց մեջքի վրա են պահել հասարակության ծանրաքաշ «ուժեղներին», այնինչ հասարակության այդ «ուժեղները» այնքան թույլ են, որ նրանցից մեկ հարյուրն անգամ ի զորու չէ պահել մեկ «թույլ» հասարակության արցունքի գոնե մեկ կաթիլը:  Բայց դու, միևնույն է, դեռ հաղթող ես, պարգևատրվելով ոսկե մեդալով` դու հաղթող ես, քանի որ ծիծաղել գիտես (այստեղ հերթով անցնում են թվարկված կերպարները), ծաղրել

գիտես այն ճաղատին, ում մազերը թափվել են հիվանդության դեմ պայքարելու պատճառով, այն ալեհեր, անընդմեջ հիվանդագին հազացող ծերունուն, ով խաչբառ է վաճառում այն իր տանը լուծելու փոխարեն, այն կնոջը, ով միշտ սև է հագնում, և դու չգիտես էլ, թե ինչու. ախր նրա որդին սահմանում զոհվեց, այն «պոռնիկին», ով քեզ իր սուրբ հոգին նվիրեց, իսկ իր մարմինն մնաց անհոգի և ինքն իրեն պոռնիկ դարձրեց, այն «մեկ արմատով» երիտասարդին, ով արևից կիզված այտերն ամաչելով է փակում, նա ստիպված է ծանր աշխատանք տանել, որպեսզի ջրի մյուս միակ «արմատը» (մորը):

Ո՛վ դու՝ ճղճի՛մ հոգի, այս անգամ ես բնավ չեմ չարանում: Թող որ «արմատներդ» քեզ միշտ ջրով օծեն: Վեհ եմ ես և իրավասու չեմ «բառեր շռայլել»:

Այնպես ես բերանդ բացել, կարծես արդարացի քննադատողն էիր դու, թե ինչու էին թափվել ճաղատի մազերը, թե ինչու էր վաճառում խաչբառ այն ծերունին, ինչու է սև, մաշված զգեստը այդպես հպարտորեն կրում այդ կինը, ինչու է այդ անմեղ աղջիկը հոգին նվիրել այն այլանդակին և ինքն այժմ մնացել այլանդակ մարմնում առանց հոգու, և ինչու է արևից կիզվել այդ որբ երիտասարդի դեռ մանկան պես նուրբ մաշկը: Ինչ գիտես՝ ինչպես է նա ողբում իր մյուս արմատի կորուստը,ականջիս այդ ողբը ծաղրի ես վերածում: Ո՞վ ես դու. ես քեզ կասեմ՝ ծաղրածո՛ւ ես նույն այդ արհամարվածների համար, այդ վեհ մարդկանց համար, որոնց վրա նետել էիր քո դիվային հայացքը, որը անհասկանալի էր կանացի, թե տղամարդկային էր, ու նողկալի ձայներ էիր արձակում: Ահա այստեղ, այս պահին դու կարող էիր կանգնել ինքդ քո առաջ և ասել.

—Տիկի՛ն, նման սենտիմենտալ բաները երբեք չեն անհանգստացրել ինձ: Դուք, ինչ է, կարծո՞ւմ եք ես պետք է կանգնեմ ինքս իմ առջև, հա՛-հա՛-հա՛, ինչպիսի հիմարություն, ի սեր Աստծո:

—Ես քեզ հավատալ հրաժարվում եմ, դու, լինելով մակաբույծ, չես կարող ուղղակի խոստովանել, որ կերազեիր կանգնել ինքդ քո առջև:

—Ի՞նչ եք խոսում, տիկի՛ն, վերջացրեք, ազատեք ինձ ուղղակի, ես ձեզ կտամ այնքան ոսկի, որքան ունեմ, միայն թե վերջացրեք ձեր այս ներկայացումը: Ես խոստանում եմ անգամ հովանավորել ձեր մյուս բեմադրությունները: Անկեղծ եմ ասում՝ իրավ եմ ես, միայն շուտ վերջաբանին հասեք:

—Բարբաջում ես հա, խոստումներ ես տալիս, ուզում ես փախչել, ո՛չ, ոչ մի տեղ չե՛ս գնա: Նայիր այստեղ, քեզ ասում եմ նայի՛ր՝ արցունք, միմիկաների խաղ,-մատով ցույց է տալիս աչքերը և մոտենում բեմահարթակի ամենաեզրին, անիմաստ նայում մի կետի, խոսքը շարունակում է՝ կրկնելով վերջինը,-ես հրաժարվում եմ քեզ հավատալ, նայիր այս հոսող կաթիլին, այն հոսում է, սահում այտերիս վրայով, հասնում շրթունքիս, ես հնարավորություն եմ ստանում այն կուլ տալ, հասկանո՞ւմ ես, հենց հիմա ունեմ հնարավորություն կուլ տալ իմ արցունքը, որի մեջ քո կյանքն է, ես կխժռեմ քո կյանքը, անխելքի՛ մեկը: Ի՞նչ ես կանգնել, մի բա՛ն արա: Այդ հնարավորությունը ինձ տալիս է ու միշտ է տվել տիեզերքը:

—Այդ ինչպե՞ս, տիեզերքն ի՞նչ կապ ունի:

—Տիեզերակա՛ն ուժը:

—Առավել ևս տիեզերական ուժը:

—Տիեզերական ձգողականությա՛ն ուժը:

—Հա՛-հա՛-հա՛, արդեն չափազանց է, մի ծիծաղեցրու,–հեգնանքով կրկնում է խոսքերը,—օ՛յ- օ՛յ- օ՛յ, տիեզերական ձգողականության ուժը:

—Լսի՛ր, եղկելի՛ մարդ արարած, եթե չլիներ ձգողականության ուժը, այս մի կաթիլ արցունքը չէր հոսի և կճախրեր օդում, թեպետ որտեղից քեզ այդչափ միտք: Ես ավելի լավ է լռեմ: Եվ ի՞նչ եմ ես որոշում, կասե՞ս: Ես անմասն եմ մնում ոճիր գործելու հնարավորությունից և զարմանք եմ ապրում, երբ կրկին հռհռոցդ եմ լսում: Դու ծիծաղում ես սենտիմենտալ լացող մարդու վրա:

Ծիծաղում է, մատով ցույց տալով այն կնոջը, ով կանգնած է բեմի եզրին, բեմում լսվում է դիվային հռհռոց, հնչում է հատված «Dead Silence» ստեղծագործությունից սաունդթրեքը, պարում են միստիկ ժանրի մեջ մի քանի պարուհիներ:

—Դու բաց ես թողնում քո վերջին հնարավորությունը: Դու դեռ հափշտակված ես քո այդ դիմակահանդեսով, որտեղ դու հաղթող ես, ուժեղ, դու այդպես էլ չհասկացար, որ այսքան ժամանակ դու ծաղրում էիր ինքդ քեզ: Դե՛ ասա տեսնեմ՝ հիմա ո՞վ է ում վրա ծիծաղում (կինը տապալվում է գետնին, բայց խոսքերը դեռ լսվում են):

Քամի, ցուրտ, մորմոք. վախն է հիմա պատել քեզ, բայց այլևս ուշ է, քանի որ այսուհետ մարմնիս ջերմաստիճանը միշտ նույնը կլինի, իսկ դու,

թե տապ զգաս, ջուր կխմես՝ պաղ ջուր, այնպես ծարավեցի, ջուր եմ ուզում (բեմ է մտնում մի փոքրիկ՝ ձեռքին մի բաժակ ջուր, տալիս ընկած կնոջն ու գնում): Իսկ դե դու, եթե մրսես, ինչ է եղել որ, ջուրը կտաքացնես, եռ կտա ու չինական կամ անգլիական անմահական թեյ կխմես և կհագեցնես մարմնիդ դողն էլ, ծարավն էլ:

Քայլում էր նա այդ գեղեցիկ օրը:

—Ասում ես՝ քայլո՞ւմ էր, թե՞... թույլ տուր մի փոքր քեզ ուղղեմ, չէ՞ որ գոնե հիմա մի քիչ ունեմ այդ իրավունքը,-պառկած կինը ասում է լսվող ձայնին,-նա ոչ թե քայլում էր, այլ նրան տանում էին, նույն այդ ճաղատը, երիտասարդը, ծերունին, պոռնիկը, սևազգեստ կինը, բոլոր «նրանք», այլ ոչ թե քո շքերթի անհոգ մասնակիցները:

Գոռում է.

—Դե՛, ձեզ տեսնեմ, ծիծաղե՛ք, ծիծաղե՛ք, հռհռացեք, ծաղրեք նրա վերջին զբոսանքը: Միևնույն է թեկուզ նրան տանում էին, թեկուզ նա չուներ մարմնի վրա ոչ մի շարժվող տեղ բացի աչքերից, նա քայլում էր, նրա հոգին վազում էր: Նրան նայելով՝ կարելի էր մտածել, թե ժամանակը կանգ է առել նրա շուրջ: Այնինչ ժամանակը գնա՜ց՝ տիկ-տակ, տիկ-տակ, գնա՜ց, տարավ և՛ նրան, և՛ ձեզ, և՛ իմ այս ցասումով գրված տողերը:

Ու հանկարծ հեռվում լսվեց ուժեղ մի աղմուկ, նա ընկավ քարքարոտ ճանապարհին: Նա անշարժ է առաջվա պես, կարծես հողն է համբուրում և գեթ մի շարժում, աչքերի թարթ ու վերջին արցունք: Դու այն տեսար, անհավատալի է, դու տեսար այդ արցունքը, դու վազում ես նրա մոտ, այս ինչպե՜ս ես դողում, դու էլ չես հռհռում, գրկել ես նրա անշունչ մարմինը, և անհասկանալի զգացում է քեզ պարուրել, դու ինքդ ես լացում, դու զգում ես, ապրում ես, կարեկցում ես: Պատասխան քո ծանակի՝ նա քեզ տվեց իր կյանքը, դու ծանոթացար մարդկային մի հոյակապ, փառահեղ զգացումի, որը նախկինում անծանոթ էր քեզ, դու սկսեցիր սիրել ոչ միայն քեզ, այլ նաև դիմացինիդ: Նա օժտեց քեզ կարեկցանքի ու սիրո զգացումով: Եվ դու ազատեցիր հոգիդ դիվայինի ճաղերից: Իր վախճանով նա քեզ համար դարձավ ուսուցիչ՝ կյանքի իրական շքերթի ուսուցիչ, վերածնվեց որպես վարպետ մաքրամաքուր դասախոսության:

Վերջ, վեր կացեք կարող եք չծափահարել այս աբսուրդի վրա, ուղղակի եթե ինձ տեսնեք փողոցում, ժպտացեք ու անցեք, բայց տեսեք

հա՛, հանկարծ չծիծաղեք ու այսուհետ ամեն հնչեցրած հեգնական քրքիջից առաջ մտածեք, թե վերջում ով ում վրա ծիծաղեց և ով ում ժպտաց:

Մաշված տարիներ

—Արագացրե՛ք, հավաքեք սեղանները, ժամանակն է, հե՛յ, Ամեա՛, ի՞նչ ես կանգնել։

—Ես ուղղակի անուղղակիորեն դատարկվեցի հենց նոր:

—Հիմար է այս աղջիկը, ուշքի՛ արի, արագացրո՛ւ:

—Հեշտ եք ասում, ինչո՞վ հավաքեմ սեղանները, երբ ձեռքերս կտրեցին։

Ամեան երկար ժամանակ է մատուցողուհի էր աշխատում, բայց չէր նկատում, որ աշխատում է, նա իր «նա»-ին կրում էր իր մեջ ու ապրում ամեն օր նրա կողքին, նրա շնչով ու մարմնով:

Այսօր ամսի տասն է, այսօր նրանք դարձան 11 տարեկան: Այսօր էլ հենց նրանց տարիքը կորցրեց բոլոր թվերը, բոլոր գումարումներն ու հավասարումները: Մեկը մյուսից անջատ, մեկը մյուսից կտրտված ու քրքրված, առանց տոկոսների ու վերջնական հանգուցալուծման նրանք միմյանցից անջատ նշում էին իրենց բաժանման կամ թե հանդիպման, իսկ գուցե ծանոթության 11 տարին։ Մահկանացուները հետաքրքիր քայլող ուղեղներ են, չէ՞: Ով իմանա՝ ինչ կորոշեն, ում կսիրեն, կարևորը որ մաշկի հետ լուծվեն ու կարողանան հասարակության մեջ տարրալուծվել այդ մաշկի հոտով:

—Հե՛յ, Ամեա՛, ո՞ւր ես։

Նա, կոնյակի բաժակը ձեռքին, ծնկի էր եկել ռեստորանի դռան առաջ: Կողքին կատուն էր մլավում:

—Տղանե՛ր, այստեղ եկեք, Ամեան լավ չէ:

Բոլորը եկան: Նա հայացքը բարձրացրեց, կատուն, կողքին նստած, թաթերը ավելի մոտեցրեց աղջկան, եկավ ու նստեց նրա որովայնի մոտ: Ոչ մեկ ոչ մի գրամ թթվածին չէր շնչում: Օդը կանգ էր առել, Ամեան ձեռքը դրել էր կատվի որովայնին: Կատուն ուր որ է ձագուկներ լույս աշխարհ կբերեր: Նրան բարձրացրին: Նա կոնյակը թողեց ծյան վրա: Ինչքան ցավ կար այդ աղջկա մեջ: Տեսնես ինչո՞ւ էր այդպես, ի՞նչն էր քրքրել նրա հոգին, այ դա ոչ մեկ չիմացավ: Մի քանի օրից բոլորը խոսում էին, թե Ամեան խմել էր, իրեն կորցրել: Բայց նա չէր խմել, իրեն կորցրել: Այդ օրը՝ ցերեկը, նրա հիվանդության պատճառով նա ստիպված էր եղել սպանել իր չծնված երեխային: Իսկ նրա կյանքը այնքան լիքն էր, որ դատարկվելու համար այդքան դատարկ ո՛չ ականջ կար, ո՛չ հոգի, ո՛չ ընկեր, ո՛չ էլ մահկանացուներ՝ «ուղեղներով»: Կատուն եկավ նրա ցավից մի քիչ վերցրեց ու գնաց, բայց միևնույն է, նրա ցավը ոսկորներն էր, նրա երիտասարդ մաշկի վրա ծերացած ոսկորների հետքերն էին և չմակարդված, արյունոտ արցունքները, որ հավերժ պիտի մնային այդ 11 տարվա հերթական կորստի մեջ, 11-րդ ձմեռվա փաթիլների տակ:

Մի քանի ամսից նա էլ չհաշվեց ոչ մի 11-րդ տարվան մոտեցող օր: Նրա տարիները խորտակվեցին հալչող ձմեռվա գարնան սկզբին, ողջ օրը նա ցաք ու ցրիվ եղավ քաղաքով մեկ, ողջ օրը «թափրտվեց» փողոցներում: Աշունը կուլ տվեց մեկ օրում, հափշտակվեց մինչ ոսկորները, բայց նրան չգտավ:

—Որտե՞ղ ես:

—Այստեղ եմ, կողքդ:

—Չկաս, ո՞ւր ես:

Նա սկսեց քաղաքի կենտրոնական հրապարակում խենթի պես պտտվել:

—Բավ է, մի՛ քրքրի հոգիս, մի՛ գնա, հե՛տ արի, ո՞ւր ես, արի, ցույց տուր երակներիդ հոսքը, սրտիդ բաբախը, ցույց տուր մխիս մեջ անվերջ մխրճվող եղունգներիդ գույնը, մազերիդ նոսր, բայց հարազատ հոտը:

Նա խենթի նման էր իրեն պահում:

—Հե՜յ-հե՜յ, սպասե՛ք, ասացեք նրան, որ այստեղ ես առանց նրա չորացել եմ, ասացեք, որ ախր էդպես չէինք պայմանավորվել:

Նա նայում է վերև: Թռչունների երամն էր, որ մգեցրել էր իր երկինքը: Նա վեր ելավ ու սկսեց վայելել թթվածինը.

—Վա՜յ, եկար: Ապրե՛ս, ի՛մ անուշս, իմ բջիջների միա՛կ կացարան:

Նրանք գրկվեցին: Միասին քայլում էին փողոցներով:

—Երևանը այնքա՜ն անուշ հոտ ունի, երբ քեզ հետ եմ:

—Ո՞ւր գնանք:

—Չգիտեմ, ինձ համար մեկ է, քեզ հետ ամեն տեղն է ինձ համար ամենատեղը:

—Արի հոտոտեմ քեզ: Արի լցվեմ քեզնով, որ դատարկվելիս տեղդ ցավեցնի, բայց քո տված ցավը լինի:

—Դու խենթ ես, ի՛մ սիրուն: Ինչքան շատ ես դու իմ մեջ, ի՛մ անէություն, ի՛մ հրեշտակային, ոչ երկրային: Մտածե՞լ ես այսօր իմ մասին:

—Ես այսօր քո մասին մտածելիս ինձ գտա այն մտքի վրա, որ ես անգամ քո մասին մտածելիս քո մասին եմ մտածում:

Նրանք մատներով իրար էին գրկել ու լուռ քայլում էին:

—Ի՜նչ անուշ է օդը՝ հագեցած քեզնով: Ի՜նչ անուշ է ունենալ քեզ, իմ կարևո՛ր մարդ, ի՛մ լռություն:

Նրանք ամեն քայլով ավելի էին լցվում մեկը մյուսի մեջ:

—Արի այսօր թատրոն գնանք: Արվեստը իսկական արվեստ է դառնում, երբ իմ արվեստի գլուխգործոցն ինձ հետ է: Արվեստն սկսում է նորովի ապրել ու ոգեշնչվել, երբ շնչում եմ քեզ արվեստի մեջ:

Նրանք գնեցին տոմսը: Տիկին Սեդան մուտքի մոտ պատռեց տոմսը, նա այնքան լուրջ դեմք ուներ, նրանք միմյանց մեջ քրքջալով անցան տիկնոջ կողքով, Սեդան երկար նայում էր նրանց ետևից:

—Տեսա՞ր ոնց էր նայում: Ուրիշ ձև էր նայում, մի տեսակ այլ եղանակով, ու տարբեր երաժշտություն կար նրա հայացքում:

—Չէ, սովորականի պես մի կետրոնացի, արի մոտս, կպիր ինձ:

Նրանք նստեցին սպասասրահում: Նա հանեց պայուսակից խցիկը և սկսեց նկարել:

—Ուզում եմ անմահանալ այս պահերին, քեզ հավերժ ունենալ իմ լուսանկարներում: Դե ժպտա՛:

—Չեմ սիրում ժպտալ այնպես, որ ատամներս երևան:

—Իսկ ես սիրում եմ:

Նրանք լուսանկարվում էին անվերջ: Զանգը լսվեց: Ներկայացումը սկսվում էր: Հանկարծ մի կարմիր գլխարկ ընկավ նրանց ոտքերի տակ, գլուխը բարձրացրեց՝ մի քանի երեխա էին, ինչ էին խոսում իրար մեջ՝ անհասկանալի էր: Միայն լսվեց. «Հը՞ն, նա՞ է:-Հա, հա:-Դե՛ իջիր, համ գլխարկը բեր, համ էլ կասես»:

Տղաներից մեկն իջավ ու չարաճճի հայացքով աչքերը լայն բացած՝ նայեց նրանց կողմն ու ասաց.

—Կներեք, դուք դերասանուհի եք, չէ՞:

—Այո՛, -զարմացած ասաց նա:

—Կարելի՞ է նկարվել ձեզ հետ:

—Այո՛, իհարկե:

Նրանք երեքով նկարվեցին: Հետո եկան ևս երկու տղա երեխա, նրանք նույնպես նկարվեցին, բայց գնալիս մի տեսակ շատ երկար էին նայում:

—Տես է, ոնց էլ ճանաչեցին:

—Հա՛,-ու լռեց:

—Դրա համար էին երևի էդպես նայում, այսօր բոլորը մեզ մի տեսակ այնպես երկտեսակ են նայում:

—Չէ՛, անգի՜նս, իմ շնչառությունն այդպես չէ, դու այնքան գեղեցիկ ես, քեզ այլ կերպ նայել չի կարելի:

—Լավ, արի նայենք, սկսվեց:

Վարագույրն իջավ: Նրանք դուրս եկան թատրոնից: Մուտքի մոտ նրանք միամիտ հանդիպեցին երեխաներին:

—Հե՜յ, տղանե՛ր, նկարները ցույց կտա՞ք:

—Հա՛, իհարկե:

Մոտ վազեցին, նրանք իրար գրկված անհամբեր նայում էին նկարներին, հանկարծ նա սկսեց բղավել.

—Աաաա՜, Աստվա՜ծ իմ, ո՜չ, տա՛ր, տար հեռու, ես կո՞ւյր եմ, ինչ է: Ո՞ւր ես, դու չկաս նկարում, ո՞ւր կորար, չէ՛, սխալմունք է հաստատ: Ես ինձ մոտ ունեմ նկարներ իմ խցիկում, հիմա, հենց իմա կհանեմ, թե չէ, ով գիտե, էս երեխաները ոնց են նկարել:

Հանեց խցիկը: Քար լռությունը, սրտի բաբախ: Միայն մի ակնթարթում աշխարհներ փոխվեցին: Ոչ մի լուսանկարում նրանք միասին չէին: Նա մենակ էր: Հեռվում լսվեց վախեցած, վազող երեխաների ոտնաձայները: Նրա շուրջ հավաքվել էր ամբոխը: Նա մանկան պես կուչ էր եկել ու խցիկն էր համբուրում, շոյում: Լսվում էր նրա շշուկը.

—Էս էլ էս դարի խցիկները, ողջ օրը լուսանկարես կյանքիդ երջանկությունը ու լուսանկարում միայնակ լինես: Բան չկա, մի այլ խցիկ կգնեմ քեզ, սիրուն կնկարեմ, անո՛ւշս:

Նրան ներարկեցին ամենաուժեղ հանգստացնողը:

Իր սիրելի հուղարկավորությանը նրան չտարան: Փափուկ սիրտը չդիմացավ: Նրա հանգրվանը դարձավ փափուկ պատեր ունեցող, թվացյալ իրենց կացարանը: Որտեղ վերջապես նրանք խմեցին իրենց տաքուկ թեյը ու...էլ ու-եր չմնացին, էլ ինչ ասեմ, լավ է լռեմ...

Մի գրամ արև

Ամեն ինչ սկսվեց մի գրամ մայր մտնող արևից: Արևը հալվեց, քո չորացած մատների արանքով ծորաց ու տարրալուծվելով գալարվեց պարանոցիդ վրայով, ջերմացնելով մոտեցավ սրտիդ: Ահա այդտեղ էլ արևը մայր մտավ:

Չէ՛, սխալ նախաբան էր, ամեն ինչ սկսվեց մի բաց ու անիմաստ պատուհանի փեղկից, որից այն կողմ նրա ակները այսուհետ կնճռոտված էին լինելու: Ով գիտեր, որ նրա կնճռոտած ձեռքերից զատ դեռ հուշեր էլ էին կնճռոտվելու: Պատուհանից նայելիս ցասումի մի որոտ էր խլացրել նրա մատաղ մարմինը, այն կծկված էր ու չորացած: Արեգը զգույշ փորձեց շոշափել նրա տափակ դարձած հոգին, բայց կարծես թե զգայարանները վաղուց էին մրափ մտել: Արեգը չհանձնվեց. լցվեց նրա հյուսվածքների մեջ: Սա էլ չօգնեց: Արեգը իր լույսին մի փոքր մութ ավելացրեց, ահա այս անգամ նրա կնճռոտած մատները թեթև շարժվեցին: Ոսկորների ճռճռոցը դեռ ականջներիս մեջ են: Նրա այդ ոսկրային աղմուկը մոռանալ չի լինի: Նա գրկել էր ինքն իր մարմինը, տարուբերում էր: Հազար որոտ էլ ի զորու չէր կանգնեցնել նրա փոթորիկը: Ձմռան մեջ քարացավ այդ տեսարանը, ու աններելի ցուրտը անմահացրեց նրա խայտառակ չարչարանքը, նրա զարհուրելի, ահասարսուռ, համրանալու, խլանալու և անզգայանալու չափ հոգեհան անող այդ տեսարանը: Մոլորակը շնչում էր նրա արցունքներից հետո թողած գոլորշին, որը փորագրված պետք է մնար այդ հատակին, այդ քարերից ներս գլորվող արևից թաքուն: Լույսը

կարևոր չէր առանց մթի, էլ ուր մնաց թե իմ գոյությունն առանց նրա։ Եվ եթե մի օր իմ մատները ճանկռոտել ուզեն նրան գրկած մարմինը, ես կգնամ նրա մութի ետևից, որ մի ցնորված տեսիլքով պապանձեմ նրա գոյությունն իմ անցյալի կնճռոտած հուշերում։ Երկրպագեմ թող քեզ, թող քո «նա»-երը «մենք»-երի վերածեմ, որ օդից բռնես սկզբիս անիմաստ թանաքոտված վերջն ու արևից մի գրամ էլ վերցնելով՝ քոնը գրես, քո նորը գրես, որ իմ չորացած մատները չխազեն քո նոր ծնվող արևի լույսը...

Ոչնչից ամեն ինչ

1989 թվական։ Քաղաք Երևան։ Առավոտ։ Նա զարթնեց մի սուր ցավից, որը դեռ երեկվանից անհանգստացնում էր նրան, ի՞նչ էր դա, մի՞թե սկսվելու է։ Վերջին մի քանի ամիսների ընթացքում նա չէր կարողանում հանգստություն գտնել, ինչպես ծովում մոլորված ծերունին է սրտի թրթիռով սպասում, թե երբ է արևը մայր մտնելու, երբ աստղերը, այդ պահին նրա միակ ընկերները դառնալով, հնարավոր փրկության ուղի ցույց կտան, այդպես էլ այդ աղջիկն էր իր փրկությունը գտնում այդքան սպասված օրվա հույսով։ Նրա նուրբ մարմնի ամեն հատվածը կարծես մի ահազանգ էր տալիս իրեն, որ չշտապի և սպասի։ Նա ոտքի թեթև շարժումով մոտ քաշեց իրենից աջ դրված հին, շագանակագույն, բայց այդ գույնից զուրկ աթոռը, որի վրա դրված էր նույնչափ հին բաժակը, այդ բաժակի մեջ դեռ երեկ ջուր էր լցրել։ Նա միշտ այդպես էր վարվում, չնայած իր տարիքին՝ շատ ավելի խելացի էր, քան կարող էր լինել նրա տարիքի մեկ այլ կին։ Ջուրը զգուշությամբ վերցրեց և այնպիսի ագահությամբ ըմպեց, որը հատուկ չէր նրա հանդարտ բնավորությանը։ Իսկ ինչո՞ւ ջուր ըմպելն համեմատել մարդու բնավորության հետ. չէ՞ որ մարդն իր յուրաքանչյուր շարժումով մի ամբողջ տեղեկություն է փոխանցում իր մասին։ Վեր կենալ ցանկացավ, բայց ինչ-որ թուլություն զգաց ողջ մարմնում, նորից պառկեց, և անուշ քունը պարուրեց նրան մինչև կեսօր։ Մինչ աշնանային արևը ջերմացնում էր մոլորակի յուրաքանչյուր թուփ ու ճյուղ, գեղեցկուհին քնած էր։ Աչքերը այնքան

նուրբ էր փակված, շնչառությունը՝ խաղաղ, լուսավոր: Կարծես նրա մարմինը ոչ մի տանջանք չէր տեսել, կարծես ոչինչ նրա հոգին չէր խռովել: Գուցե ժամանակն էր, որ վերջ դրվեր նրա տանջանքներին: Բայց ո՞ւր գնար, ի՞նչ աներ: Նա այստեղ է այժմ, նա եկել էր այստեղ, որպեսզի իրեն ավելի ամուր զգար, զերծ մնար այն բանտից, որը նրա միտքն ու կյանքն էին սահմանափակում: Իսկ միգուցե բանտից փախչելով՝ հույս ուներ, որ կգտներ այլ վայրում իր երազած ազատությունը, սխալվում էր: Գուցե կան հարցեր, որոնց պատասխաններն միայն տարիներ հետո են հասկանում մարդիկ: Հարկավոր է զարգացնել կանացի բնությունը, հարկավոր է զարգացնել բարձրագույն արժեքները, որոնք մոռացվել են:

Ուժեղ, հզոր ուժը մայրական ուժն է, որը կնոջը դարձնում է աստվածային կերպար: Դա անհերքելի փաստ է: Բնավ չեմ շարադրում այս միտքը այն պատճառով, որ ինքս կին եմ, և նշեմ, սիրելի՛ ընթերցող, հպարտ եմ, որ կին եմ և նույն այդ հպարտությամբ եմ կրում կանացի բոլոր տանջանքներն ու փորձությունները, որոնք դարերի ընթացքում մեր գլխի վրա լճացրել են տղամարդիկ և հազվադեպ են փխրեցրել հողը մեր ոտքերի տակի:

—Զարթնի՛ր, հրեշտա՛կ, ի՞նչ ես քնել, զարթնիր, հե՛յ, դու լսո՞ւմ ես: Ա՛խ ի՛մ չարաճճի, դու քնել ես այդտեղ առանց կասկածելու անգամ, որ ես քեզ սպասում եմ կարծես դարեր շարունակ: Աղջի՛կս, զարթնիր: Ինչո՞ւ չի շարժվում:

Այդ անդորրը տեղի տվեց տագնապի այն էլ այս վերջին օրերին, ու հանկարծ, կարծես լսելով մոր ձայնը, նա արձագանքեց, նա, այն նա-ն, ով շուտով լցնելու էր Ամեայի կյանքը:

Նա հանկարծ զգաց, թե ինչ աներևակայելի արագությամբ է եռ տալիս իր երակներում արյունը, սկսեց արագ շնչել, մաշկի արտաքին շերտը ամբողջությամբ կարծես պատվեց եղյամով, սկզբում մրսեց, այդ փակ սենյակում նա քամու ձայն էր լսում, քամին, կարծես հայկական լեռներից փոթորկված, վազ էր տվել ու լցվել Ամեայի սենյակ: Քամին գրկեց նրա ողջ մարմինը: Նա տագնապահար էր լինում, բայց ոչ մի րոպե չէր դադարում պահպանել իր հանգստությունը: Լինելով անհասկանալի զգացողությունների մեջ, պարուրված լինելով անհասկանալի եղանակով՝ նա մաշկի տակ զգաց այդ լեռնային քամու փոփոխությունը: Հանկարծ

ամեն ինչ խաղաղվեց: Նա ձեռքը մոտեցրեց որովայնին: Նուրբ շոյեց և աչքերը փակելով՝ սկսեց օրորոցային շշնջալ: Ինչպիսի՜ կանացիություն և մայրական ինչպիսի՜ ելևէջներ, անհնար է նույնիսկ նկարագրել.

«Նոր արթնացող թիթեռնիկի
Ճախրի պես թեթև
երազն է քո պահվել փափուկ ամպերի ետև:
Բարի գիշեր քո երազին, ճախրանք անարգել,
Դու էլ քնիր,
Փոքրիկ իմ լավ,
Գիշեր է արդեն...» /Յուրի Սահակյան/

Եվ այսպես նրանց թթվածինը հագեցավ բարությամբ ու իրենց հեքիաթով, որ շուտով իսպառ վերանալու էր իրենց կյանքից: Նա ննջեց, իր մեջ գրկելով իր փոքրիկին, փոքրիկը ննջեց մոր ներսում՝ գրկելով մոր հոգին:

—Պա՜պ, այսօր հարիսա եմ պատրաստելու, մաման նույնպես սիրում է հարիսա:

—Եփիր, աղջի՛կս, միայն թե տես աղը շատ չանես, երիկամներին վնաս է, թե չէ գիտես, Իսան ցավեր ունի: Ա՛յ երբ փոքրիկ Իսան ծնվի, վստահ եմ՝ մեծ Իսայի ցավերը կմեղմանան:

—Երեկ կրկին տարօրինակ զգացողություններ եմ ունեցել: Ինձ թվում է՝ աղջիկս շատ խելացի է լինելու:

Սկեսրայրը, ում Ամեան հայրիկ էր ասում, ալեհեր մարդ էր: Ցածրահասակ, նշաձև աչքերով, լայն ճակատով, շրթունքի վերևում սափր էր միշտ պահում և պարտադիր ամեն առավոտ խնամում էր ու հետևում, որ ոչ մի թերություն չլիներ: Շատ խելացի անձնավորություն էր: Նրան երբեմն դիմում էին վարպետ մականունով: Եվ իզուր չէր. նա հիանալի տիրապետում էր մաթեմատիկա և ֆիզիկա գիտություններին: Որքան էլ որ հակասական է, նաև սիրում էր ստեղծագործել: Գրադարան ուներ և միշտ ազատ ժամանակը տրամադրում էր ընթերցանությանը: Աշխատասեր մարդ էր: Տնից բավական հեռու մեծ հողատարածք ունեին: Ամեն առավոտ վաղ արթնանում էր, քթի տակ երգ մրմնջալով անպայման նախաճաշում, խնամքով ուղղում դեղին բեղերը, ինչպես ամեն օր,

վերցնում էր ծխամորճը, բաիը, մի շիշ ջուր և գնում իր կյանքի մայրամուտի այգին: Այո, այդ հողակտորը իր կյանքի վաստակն էր իր երեխաների ու թոռների համար: Նա բարի մարդ էր: Նա այնքան շատ էր իր այդ փոքր, տանջված մարմնի մեջ, որ շատ քիչ էր հասարակության գիտակցության համար:

—Այո՛, աղջի՛կս, անխտիր քեզ պես գեղեցիկ, անուշիկ ու խելացի:

Ծերուկը ատամներ չունենալու պատճառով առավոտյան նախաճաշը դժվարությամբ էր ուտում, երբեմն մտքերով էր ընկնում, երկար մնում սեղանի մոտ, ծերությունից մաշվել էր նրա հոգին, բայց ո՛չ, սխալ է ասված, ծերությունից չի մաշվում հոգին, այլ՝ տանջված կյանքից: Այդ միտքը ազդեց Ամեայի վրա: Նրա նշաձև ու թախծոտ աչքերն էլ ավելի թախծոտվեցին: Ձեռքը մոտեցրեց որովայնին և շշնջաց.

—Ա՛յ, կծնվես, աղջի՛կս, և պապիկիդ տանջված ու տարիների միապաղաղությունից սառած սրտին ուրախություն կտաս:

Այսօր հայկական լեռներից սառը քամին կրկին լցվեց նրա սենյակ, սառնությունից նա բացեց աչքերը, շարժվել չէր ուզում: Ամուսինը ուշ էր եկել տուն, դժվար էր գիշերը նրա համար: Թախտը շատ էր մաշված, նա այդ թախտին ամեն անգամ պառկելուց ժպտում էր ու ասում ինքն իրեն, որ լավ կլինի, բոլորի մոտ է այսպես: Քաղց զգաց, բայց ինչ աներ: Արևածագ էր, բայց այդ աշնան ամենագեղեցիկ օրերի համար շատ անձրևոտ էր, քամին էլ մի կողմից: Հանկարծ հիշեց՝ պահարանում մի քիչ բրինձ ուներ պահած նեղ օրվա համար, բայց էլ ինչ նեղ օր: Նրանց բոլոր օրերն էին արդեն նեղացել: Օրերը, բայց ո՛չ հոգիները:

Պետք էր շարժվել, պետք էր պատրաստել: Հարիսայից մի քիչ մնացել էր: Նրա համար այլևս անտանելի էր դառնում այդ տան հոտը: Պատերը շնչում էին իր մաքուր բնույթի բույրը և արտաշնչում անտանելի մի թույն, որը նրան օր օրի սպանում էր: Նա զգուշորեն փորձեց վեր ելնել, որպեսզի չարթնացնի ամուսնուն: Արդեն լուսանում էր: Տան պատերը մի տեսակ մռայլ էին: Նա ձեռքով մի կողմ տարավ վարագույրը, որը մի փոքր սենյակը երկու մասի էր բաժանել, իբրև թե երկու սենյակ էր դարձել այդ տնակը: Ոտքերի մատների վրա կամաց-կամաց մոտեցավ այն աթոռին,

որը գիշերը իր ջրի համար հանգրվան էր ծառայում: Մոտ քաշեց ու նստեց: Խորը շունչ քաշեց.

—Ինչ անեմ, աղջի՛կս, եկ այսօր քեզ մի հեքիաթ պատմեմ՝ լինում է, չի լինում, լինում է, չի լինում…,- ու լռեց: Սկսեց նայել իր ոտքերին, գլուխը մի փոքր աջ թեքեց և այլևս չէր շարժում ոչ մի դիմագիծ: Նա տարրալուծվեց այդ անշուք տան մեջ, կտավի նմանվեց, նրա որովայնում կյանք էր ապրում, կյանք մի կյանքի մեջ, ով ապրում էր կյանքին հատուկ անկյանք կյանքով: Նա ոտքերին նայելիս սկսեց գլուխը մեղմ, հեզորեն տարուբերել մեկ աջ, մեկ ձախ: Մեջքը ուղղեց, ու լսվեց նրա ձայնը.

—Է՛հ, աղջի՛կս, ինչ հեքիաթ, քեզ հեքիաթներ դեռ շատերը կպատմեն, եկ ես քեզ պարել սովորեցնեմ:

Որտեղից այդ աղջնակի մեջ այդքան մայրություն դեռ չմայրացած: Նա ոտքերը սկսեց շարժել, ձեռքերը նույնպես՝ մեղմիկ երգելով: Ոտքի կանգնեց, բաց արեց պատուհանը, թոքերը լցվեց այդ անուշ առավոտյան պարով: Թթվածինը վազեց ու աներևակայելի արագությամբ նստեց պատշգամբին: Օրը մռայլ էր, էլ ինչպես մռայլ չլիներ, ողջ տիեզերքն էր եկել, լցվել այդ սենյակ, արևն անգամ այսօր հանգստյան օր էր վերցրել, բնությունը հետևում էր մի նոր սկզբի, որը…ցավոք, որը սկիզբն էր վերջի:

—Դե՛ այսպես՝ մեկ աջ, մեկ ձախ, ոտքերը առաջ, մյուսը ետ, դեմքին ժպիտ ու կես քայլ մեջտեղում ցատկ, դեմքին ժպիտը չմոռանալ: Եվս մեկ պտույտ, ա՛յ այսպես, թող լցվեն անոթներդ երջանկությամբ, աղջի՛կս, եկ պարենք ևս մեկ անգամ: Վա՜յ, այս ինչ արեցի:

Նա միանգամից կանգ առավ, բաժակը կոտրվեց: Մոտեցավ, հատակից վերցրեց բաժակի բեկորները: Թթվածինը պատշգամբից դեռ հետևում էր նրան: Ամեան այդ պսպղուն աչուկները հառեց վարագույրից այն կողմ: Լռությունից աղմկում էր նրա սիրտը. «Միայն թե չարթնանա, միայն թե չարթնանա»: Ու լսվեց.

—Այդ ի՞նչ ձայն է, անպիտանի՛ մեկը: Չեք թողնի մարդ քնի: Հիմա ես քեզ ցույց կտամ:

Ամեան վախից մռայլվեց, կծկվեց: Ի՞նչ կարող էր անել, ոչինչ: Թթվածինը քիչ- քիչ հեռանում էր պատուհանից, բայց հույս ուներ կարծես, որ կտեսնի պարի շարունակությունը, մի քիչ էլ էր սպասում:

Ամեան գեղեցիկ ու նուրբ մատիկներով գրկեց որովայնը.

—Շշշ, փոքրի՜կս, նա մեզ չի վնասի, նա հիմա կքնի, մենք էլ:

—Ո՞ւր ես, անիրա՜վ, չես թողնում հանգիստ մի րոպե աչքս կպցնեմ:

Վարագույրը բացվեց, նրա բացվելուն պես պատկերը մռայլվեց մի մարդու ներկայությամբ, ով երկու էություն ուներ, թթվածինը միանգամից լքեց սենյակը, անտանելի ալկոհոլի հոտը վռնդեց թթվածնին սենյակից:

—Ինչո՞ւ ես գետնին, քե՜զ հետ եմ:

Հարցին չպատասխանելով՝ Ամեան աչքերը արագ փակեց՝ ձեռքերը դնելով որովայնին, և շշնջաց. «Չվախենաս, հիմա մենք խաղ ենք խաղում, մայրիկը մի փոքր կցնցվի, հետո դու կծնվես, ու ես քեզ կպատմեմ խաղի կանոնները»:

Լսվեց միայն ապտակի ձայնը, ոչ մի այլ ձայն, նրա համեստությունը փոթորկվեց, բայց ցնորքի հասնող լռությամբ մոռացվեց, բայց ոչ բնության կողմից…

Նա հեռացավ սենյակից՝ թողնելով հետքեր, որոնք այրելուց չեն այրվում, իսկ թե պահես էլ, քեզ են այրում: Նա հեռացավ՝ Ամեայի՝ ցորենից ստացված ալյուրի պես ճերմակ մաշկի վրա թողնելով մռայլ երկնքի կապույտը: Վեր ելավ, սրբեց արցունքները, հավաքեց մնացած բեկորները: Փակեց պատուհանը, նստեց աթոռակին, աթոռակն էլ այնքան չոր էր, որ մեջքը ցավեցրեց: Առաջ եկավ, փոխեց դիրքը ու կարծես հարմարվեց: Ինչ աներ, հարմարվել էր պետք նրա անհարմարությանը, հակառակ դեպքում մաքրել էր պետք անհարմարության թողած հետքերը: Իսկ ինչպե՞ս մաքրես այն հետքերը, որոնք այրվելուց չեն այրվում, իսկ պահելուց էլ քեզ են այրում:

—Չէ՜, ուրեմն դրանք սիրել էր պետք, հա աղջի՜կս, նրա՛ն էլ սիրել էր պետք: Խաղը ավարտվեց, մի քանի օրից դու կծնվես: Մռայլ առավոտ էր այսօր, մռայլ առավոտներից ցերեկներն ավելի լուսավոր են դառնում, դե գիշերներն էլ՝ ինչպես գիտես…

Դրսում թթվածինը վազում էր ու վազում, գնում ու գալիս, ներս մտնել էր ուզում. թթվածինը պայքարելուց հոգնեց, նստեց այս անգամ դրսի կողմից ու սկսեց հետևել նրա շնչառությանը: Նա ննջեց աթոռակին,

բա էլ ո՞ւր ննջեր. սեփական անկողին էլ չուներ: Երանի այդ օրը այդ աթոռակին չքներ, որ գոնե տարիների վրա չձայնագրվեր նրա անանկողին գիշերներն ու անժպիտ առավոտները, որ գոնե նրա պարող ոտքերի ու ճերմակ մաշկի տակ չգրվեր այսպիսի մռայլ առավոտների մռայլ կապույտները, երանի այդ օրը նա չքներ, երանի…

Թթվածինը դեռ նայում էր: Լսվեց Ամեայի ձայնը.

—Դե՛ մեկ աջ, մեկ ձախ, կես քայլ առաջ, կես քայլ հետ: Ապրե՛ս, սիրո՛ւնս, դե վազիր այստեղ, եկ գրկեմ չգրկված մարմինդ, ե՛կ, անո՛ւշս, մեկ քայլ առաջ, մեկ քայլ հետ:

Սրտի բաբախները գնալով արագանում էին: Նա ոչինչ չէր զգում, միայն հասկանում էր, որ գտնվում է մի վայրում, որտեղ նրան տալու են տոմս դեպի դժոխային մի աշխարհ և այդտեղից չէր լինելու հետդարձի տոմս: Այդ նա դեռ վաղուց էր հասկացել:

Իմ աղմկոտ հայուհին

Անձրևի խշշոցը թույլ չէր տալիս, որպեսզի լսվեր փողոցի անցուդարձի ձայնը: Այն գնալով սաստկանում էր, և քամին, խառնվելով անձրևի հետ, շարունակում էր անդադար հարվածել նրա դեմքին: Նա արագացնում էր քայլերը, և այդ ամենը վերածվում էր երթի: Նրա երթին մասնակից էր բնությունը: Անձրևն ու քամին նրան հանգիստ չէին թողնում: Ի՞նչ էր նա ուզում, ի՞նչ էր փնտրում, անհասկանալի էր: Ի՞նչ էր նրան հարկավոր, մի պահ ինքներդ մտածեք, մի պահ դադար տվեք և մտածեք`  ի՞նչ է ձեզ հարկավոր, ի՞նչ եք դուք ուզում կյանքից: Ոչի՛նչ, ոչի՛նչ էլ հարկավոր չէ ձեզ: Այդ ով է ասել, որ կյանքից որևէ բան պետք է ուզել կամ այն ձեզ ինչ-որ բան պետք է տա: Բնավ, ընդհակառակը, այդ մենք` գոյերս, պարտավոր ենք նրան լցնել, հագեցնել, պարուրել մեզնով: Մենք ստեղծված ենք հետաքրքրացնելու կյանքը` այս խեղճ ու կրակ աշխարհը, որ մեզնից միշտ սպասում ունենալով, այնուամենայնիվ, չի դադարում մեր սպասումներն արդարեցնել:

Արդեն մթնում էր: Նա ամբողջությամբ թրջվել էր անձրևից, բայց դա կարծես նրան բնավ չէր հետաքրքրում: Նրա համար աշխարհը շարունակում էր գոյություն ունենալ իր մտահորիզոնի սահմաններում: Նա ոչ շատ բարձրահասակ էր, նշաձև աչքերով, սլացիկ կազմվածքով, մարմինը ծածկում էր հայկական որդան կարմիր գույնով հագեցած զգեստը, բարակ երկար պարանոցը փաթաթված էր մետաքսյա բաց մարմնագույն շարֆով, որը կիսով չափ արձակվել էր, և քամին այն տարուբերում էր: Անձրևից թրջված զգեստը գրկել էր նրա մարմինը: Ջրի կաթիլները, նուրբ սողալով ու շոյելով նրա պարանոցը, իջնում էին ներքև և կորում գործվածքի լաբիրինթոսում: Նա գեղեցիկ էր, դեմքին շպարի ոչ մի նշույլ չկար, եթե անգամ լիներ էլ, անձրն արդեն լվացած կլիներ այն: Դեմքը նման էր նորահաս ծիրանի, որի վրա գարնան անձրևը իր արցունքներն էր թողել: Նրա ներկայությունը զգացի, երբ նրա լուռ աղմուկը ցնցեց իմ ականջները: Նա արագ քայլերով, ճանկռոտելով մաշկը, քայլում էր անհասկանալի է, թե ուր: Այդ ինչպե՞ս և ինչո՞ւ էր նա կեղեքում իր իսկ մարմինը: Իր յուրաքանչյուր շարժման ու հայացքի մեջ այնպիսի ատելություն կար, ինչպիսին ես չէի տեսել և ոչ մեկի աչքերում: Նա սրել էր եղունգները և գազանի պես դրանք մխրճեց մաշկի տակ, արյունը երակներից սկսեց դուրս գալ: Նա ինձ գազազած հովազ էր հիշեցնում, բայց այդ նրան քիչ էր, նա չէր հանգստանում: Էլի էր ուզում, նա արյուն էր տենչում, իրեն էր մեղադրում, ինքն իրեն էր տանջում, կարևոր չէր արդեն, թե որն էր պատճառը:

Յուրաքանչյուրս պատասխանատու ենք մեր ներկա վիճակի համար, ինչ էլ որ լինի մեզ հետ, մենք՝ երկրածիններս ենք պատասխանատու ու մեղավոր մեր կյանքում կատարվող յուրաքանչյուր երևույթի համար: Նա այդ ամենը ցույց էր տալիս իր շարժուձևով, արարքներով: Նրա պահվածքը դառնում էր ավելի քան ոչ մարդկային: Այն փողոցը, որտեղ կատարվում էր այս ամենը, այդքան էլ մարդաշատ չէր: Միայն երբեմն մեքենաներ էին անցնում, որպեսզի մոռացնել չտային, որ մենք շարունակում ենք գոյություն ունենալ այս իրականության մեջ: Նա սկսեց քայլերն արագացնել, այնուհետև հասնելով մի ծառի՝ հենվեց: Սկսեց տրորել պարանոցը. երակները լարվել էին, մի քիչ եթե մոտ կանգնած լինեի, վստահ եմ, կտեսնեի, թե ինչպես էր հոսում արյունը նրա երակների միջով: Նա ծնկի իջավ: Կիսահենվելով ծառի բնին՝ աղոթող

ադամորդու կերպար ստեղծեց: Հանկարծ լսեցի նրա բղավոցը, այդպիսի բղավոց ես երբեք չեմ լսել: Դա նման էր նույն այն կատաղած հովազի բղավոցին: Նա ծնկների վրա առաջ եկավ, սկսեց ավելի սաստիկ կեղեքել իր մարմինը. անդադար բղավում էր, հետո սկսեց ինչ-որ բան փնտրել: Երկար փնտրեց և հանկարծ ետևի գրպանից հանեց մի ոսկեգույն տուփ: Այն դանդաղ բաց արեց: Մոտեցրեց դեմքին, լուռ նայեց իր արտացոլանքին: Այս ակնթարթը հագեցած էր իր մարմնի լռությամբ, բայց հոգին հանկարծ բղավեց ավելի սաստիկ ու ավելի գազանաբար, այնպես, որ ես խլացա: Ես նրա հոգու աղմուկը լսել այլևս անկարող էի: Նա խենթի պես դեն նետեց հայելին ու պառկելով ցեխաջրերի մեջ, գալարվելով ու ճանկռոտելով մարմինը՝ այնքան ջանաց, մինչև արյունոտեց ողջ մարմինը: Ձեռքերը մոտեցրեց դեմքին ու դեմքը սկսեց ծածկել իր արյունով: Բղավում էր նրա անաղմուկ մարմինն ու հոգին: Նա սկսեց փնտրել հայելին, երբ գտավ ոսկեգույն տուփը, մի փոքր մաքրեց և շատ զգույշ նայեց հայելու մեջ: Այն, ինչ տեսավ այնտեղ, կարծես նրան դուր եկավ, այո՜, անխտիր դուր եկավ: Ծիրանե երեսով իմ հայուհին ժպտաց: Սկսեց զմայլվել իրենով: Դե ժպտա՛, լայն ժպտա՛, ի՛մ հայուհի, ավելի՜ լայն ժպտա, դու արժանի ես, դե քեզ տեսնեմ: Նա սկսեց ցնորվածի պես ծիծաղել բարձր, ավելի, ավելի՜ բարձր՝ հա՛-հա՛-հա՛...Նա ծիծաղում էր, ծիծաղը գնալով վերածվում էր հռհռոցի, նա երանության մեջ էր: Հանկարծ սկսեց հանել շորերը: Ի՞նչ էր սկսվելու այժմ. հանեց շորերը, անձրևի տակ կիսամերկ կանգնեց, ձեռքերը պարզեց վեր, միայն վզի շարփը չհանեց: Հայացքը հառեց երկնքում հազիվ նշմարվող աստղերին: Լուսինը սակայն ավելի պարզ էր, անտեսելով ամպամած եղանակը, այն իր մոգական լույսով պարուրեց իմ հայուհու դեմքը: Լուսնի լույսից սկսեց պսպղալ նրա արյունոտ դեմքի վրա միակ անվնաս մնացած տեղը՝ նշաձև աչքերը: Ես կախարդված ու մոլեգնած շարունակում էի անհագուրդ ցանկությամբ սուզվել այդ աչքերի մեջ: Նա պարանոցը կտրուկ թեքեց ուղիղ իմ կողմ: Սարսուռ անցավ մարմնովս, նա վայրի կատվի պես առաջացավ իմ կողմ, մի քանի քայլ անելուց հետո կանգ առավ և անտանելի ուշադրությամբ հափշտակեց հայացքս: Չգիտեմ՝ ինչքան տևեց այդ ամենը, միայն գիտեմ, որ նրա աչքերում ես երկու կաթիլ տեսա: Չհասցրի անգամ կարեկցանք զգալ, նա անհետացավ մթի մեջ: Ես հետևեցի նրան: Մենք հայտնվեցինք մի վայրում, որտեղից ոչ շատ հեռու

անդունդ էր: Նա արցունքները փոխարինեց այն անտանելի ծիծաղով: Զգեստը ձեռքին մոտեցավ անդունդի եզրին, գցեց այն: Բարձր հոգոց հանեց, զգեստի ետևից ներքև նայելով՝ ժպտաց. դրանք ազատության ժեստեր էին: Քարացավ մի դիրքով բավական երկար ժամանակ: Տխրություն իջավ վրաս: Նրա այդ անշարժ դիրքից ես դատարկություն զգացի: Ինձ նրա աղմուկն էր պակասում, ես ուզում էի զգալ նրա լուռ աղմուկը: Նրա մեջ այնպիսի մի բղավոց էր խտացել, այնպիսի մի ողբ: Նրանից մի քանի մետր հեռավորության վրա կանգնած էի, երբ քամին նրա արյան հոտը մոտեցրեց: Ես կարծես մտա նրա մաշկի տակ, նրա հյուսվածքների մեջ: Երակներումս եռ տվեց ողբը, որը անհնար էր չլսել, որին անհնար էր անտարբեր մնալ: Այդ աղմուկը սարերն էլ տեղաշարժ կաներ: Տեսա, թե ինչպես այն, լցվելով հայկական լեռների մեջ, միաձուլվեց քարերի տակից բխող աղբյուրներին, խելագար արագությամբ հոսեց դեպի ջրվեժները, քարերի հետ պայքարելով՝ դրանց վրա կրկին մեր պատմությունը դաջեց, գլորվեց դեպի մեր Արցախ, Մոնթեի ոգին արթնացրեց, նրա բղավոցից Արաքսի արյունոտ հոսքը ավելի արագացավ, գետը վարարեց, իր հունից դուրս եկավ պոռնիկ թուրքին իր ջրե ճանկերով խեղդելու պատրաստակամությամբ: Բայց այս անգամ էլ հայի վրեժը լռեց, մեր նահատակված Անիի ու Վանի ողբը, Արաքսին փաթաթվելով, դեպ երկինք ձգվեց, մեր երակներում, մեր մաշկի տակ դաջված մեկ ու կես միլիոնի ոգիները արթնացրեց, մեր ծնվածների ու չծնվածների մահը հիշեց: Նրանց աղմուկը բարձրացավ վեր ու մեծ թափով ինձ ներքև շպրտեց: Նա իսկական հայուհի էր, ձեռքերը նուրբ էին, նա արձակեց թաց մազերը, դրանք թափվեցին նրա քրքրված մարմնի վրա: Գրեթե ոչ մի տեղ չէր մնացել, որտեղ քերծվածք չլիներ: Ես հեռվից հայացքով գրկեցի նրան: Ձեռքը մոտեցրեց վզին ու այն, ինչ փնտրում էր, չգտավ, ես հասկացա, որ նա պարանոցին ինչ-որ բան պետք է ունենար, որը բացակայում էր: Նա մեղմ խոնարհեց հայացքը: Ներկայիս լռությունը այլևս այն լռությունը չէր, այն աղմուկն էլ չէր, որ ինձ խլացրել էր: Այս անգամվա նրա բղավոցը ավելին էր, քան գազազած հովազինը, ավելին էր, քան իմ ու քո Անիի, Վանի, Էրզրումի, Դիարբեքիրի կորուստյան ողբը: Այն ավելին էր անգամ մեր մեկ ու կես միլիոնի ողբը: Սա մարդկային ոգու կորստի, մարմնի անառակության գիտակցման, բարության ոտնահարման, մարդասիրության անկման, մարմնական

տանջանքի ցավ էր, որ բանտարկել էր սեփական հոգին և դուրս պրծնել էր ուզում: Նա իրեն էր մեղադրում: Մի՞թե դրանից առավել պատիժ կա աշխարհիս երեսին, մի՞թե ավելի եղկելի բան կա աշխարհիս երեսին, քան գիտակցել ողջ մարդկության սխալներն ու այդ ամենը կրել սեփական մաշկի տակ: Թե ինչպես էր նա իր մարմնի մեջ խցկել դարերի պատմությունը, այդ ես անկարող էի հասկանալ և թե որտեղից նրան այդքան համարձակություն մեկ անձի մեջ կուտակել ոգու այդքան ճիչ ու աղմուկ: Նա ծնկի իջավ, սկսեց երգել շատ կամաց, ավելի քան նուրբ: Ինչպես մետաքսն է նուրբ սահում, այդպես նա հեզորեն բարձրացավ: Այո՛, նա կիսամերկ էր, բայց երբ ես լսեցի հեռվից նրա ձայնը, միտքս ինձ տարավ Արարատյան դաշտավայրի ոսկե դաշտերը, տարավ դեպի կանաչով հագեցած խաղողի այգիները: Ես արբեցի հայկական գինու բույրից: Իմ հայուհու մերկությունը իմ աչքերում ծածկվեց ամենաասքանչելի տարազով, որը կարել էր հայ ամենաճկուն մոր ձեռքը: Նա և՛ երգում էր, և՛ պարում: Նրա մատները ճկուն պտտվում էին դեմքի շուրջ, պարանոցը մեղմիկ ու անուշ զրուցում էր քամու հետ, և հայացքը շրջում էր ամեն անգամ այն ուղղությամբ, որ կողմ ձեռքերն էին շարժում: Նա կարծես խաղողի այգում շոյելիս լիներ դեռ չհասած խաղողի ողկույզները: Այնքա՜ն անուշ էր այդ մի քանի ակնթարթյա նրա աղմուկը.

«Մախմուր աղջիկ,
Քիչ տխուր աղջիկ,
Աչքերդ հազարախոս,
Շուրթդ լուռ աղջիկ:
Երնեկ նրան,
Ով որ կանգնի քո դռան,
Ջուրդ խմի, կաթնաղբյուր աղջիկ:
Նազով աղջիկ,
Թուխ մազերով աղջիկ,
Ծաղիկ ես, չթառամես
Մուրազով աղջիկ:
Մնա քնքուշ,
Բուրիր բույրով քո անուշ,
Աշխարհի լցրու երազով աղջիկ»:

Այս մեղեդին նրա մերկությունը ծածկեց: Հայկական տարազի չորս տարերքի գույները կարծես կախարդանքով սկսեցին հագցնել իմ աղմկոտ հայուհուն սքանչելի զգեստով, որի մեջ կային սևն ու կարմիրը, սպիտակն ու դեղինը՝ իմ անուշ Հայաստան երկրի սևությունը, զուլալ ջրերի ճերմակությունը, ծիրանիս դեղնությունն ու օդի կարմիրը: Ահա իմ հայկական տարազով աղջկա վայրկենական երթը դեպի իր արմատներ: Կայծակի ձայնը և ուժեղ քամին պոկեցին նրա հեքիաթը, նա կիսամերկ շպրտվեց գետնին, եթե մինչ այդ նա չէր գիտակցում իր մերկությունը, այժմ ակնթարթորեն զգաց իր մերկության ամոթը: Սկսեց խելագարի պես դես ու դեն նայել: Եդեմից վտարված Եվային հիշեցի: Ես անշարժ կանգնած էի, չէի կարողանում անգամ շարժվել, իրավունք էլ չունեի խոչընդոտել այդ կյանքի ներկայացմանը: Ես պետք է հանդիսատեսի համակ լռությամբ հետևեի այդ տեսարանին: Նա գլուխը մեղմ սկսեց շարժել: Շուտ հարմարվեց իր մերկության ամոթին:

Գրո՜ղը տանի ձեզ, մարդի՛կ, ինչպիսին է ձեր բնույթը: Բնությունը չունի ավելի կատարյալ բան, քան դուք: Այո՛, հենց դո՛ւ, որ կարդում ես այս տողերը: Երևի մտածում ես, թե ինքդ կատարյալ չես, ինչ է թե շատ գումար չունես, կամ հաշմանդամ ես, կամ չկարողացար ընկերոջդ կյանքը փրկել կամ էլ կարծում ես՝ կատարյալ չես, ինչ է թե մի հիմար գրքում կարդացել ես, թե մարդը կատարյալ լինել չի կարող: Դո՛ւք՝ մարդի՛կ, բոլորդ կարծում եք կամ վստահ եք, թե կատարելությունը հատուկ չէ ձեզ: Բա՛վ է, այլևս հրաժարվում եմ լսել ձեր այդ բարբաջանքը: Այսուհետ ես քեզ հրամայում եմ, ո՛վ մարդ, իմանալ ու անխախտ դաջել քո մտքում, որ դու կատարյալ ես անգամ քո անկատարության մեջ: Նա՝ Բարձրյալը, քեզ ստեղծել է, որպեսզի դու գնահատես Նրա կատարելությունը, չմոռանաս Նրա կատարյալ ձեռքը, որով Նա կերտեց քեզ իր պատկերով: Այո կասեմ այնքան, մինչև բառի կրկնությունից աչքերդ շաղվեն: Դու ադամորդի ես, դու կատարյալ ես, լսո՞ւմ ես՝ կատարյա՛լ, կատարյա՛լ կատարյա՛լ…

Ո՞ւր է իմ աղմկոտ հայուհին: Կտրուկ հայացքը թեքեց ձախ ու արագ հանելով շարֆը՝ գցեց հողի վրա: Նա սկսեց իր լռությունը լցնել: Այս անգամ լսեցի մի այլ մեղեդի, նա սկսեց երգել, այդքան էլ լավ չէի հասկանում, մի փոքր մոտեցա և ահա.

—Քեզ հավատամ, խոստովանիմ,

Անմահական սուրբ Տիրամեր,
Քու տաճարին երկրպագիմ,
Շատ պատվական սո՜ւրբ Տիրամեր:

Նա կտրուկ լռեց, վերցրեց գետնից շարֆը, փաթաթեց ու սկսեց օրորել մայրական նուրբ շարժումներով և շարունակեց երգել.

—Քու քումպեթն է շինած բալաք,
Դու էր վրեն՝ հուրի մալաք,
Վին կը զարներ՝ կեներ հալաք,
Ջառահ-հեքիմ սուրբ Տիրամեր:
Մըջ ըռախտին քու ծին՝ նըխշ է,
Ջիուդ քամին մարդ կը քշե,
Էնոր զարկած յարեն քըշ է,
Ջառահ-հեքիմ սուրբ Տիրամեր:

Սա բնավ օրորոցային չէր, բայց նա փոքրիկի էր օրորում, նա այդ էր հասկացնում: Նրա ձայնը դողում էր, անվերջ նայում էր, գրկում շարֆով փաթաթված «փոքրիկին».

—Քնեք, ի՛մ բալեք, դե՛ քնեք, ձեզ էլ ոչ ոք չի վնասի, քնեք, ի՛մ զինվորներ, իմ հզո՛ր տղեք, քնեք, ձեզ ոչ մի անգութ թուրք էլ չի կոտորի: Օրոր ասեմ ձեզ, ի՛մ ռազմիկներ, իմ քա՛ղցր բալեք, ձեզ օրոր երգեմ, իմ ազգի ապագա՛ զինվորներ:

Ես զգացի, որ իմ հայուհին շատ էր բեզարել. նրա կեղեքված մարմինը այլևս անզոր էր դիմանալու այդ ամենին: Նա շարունակում էր օրորել ու հանկարծ սարսափահար ձեռքերը վեր բարձրացրեց, շարֆի միջից դուրս թռավ մի քանի խոտ ու փայտի մի քանի կտոր: Նա բարկությունից եղունգները խրեց հողի մեջ, սկսեց անդադար արմատախիլ անել խոտերը, վերցրեց դատարկված շարֆը, չորեքթաթ սողալով գնաց դեպի վեր, որտեղ նեղ փողոցներ էին, ու հասավ մի ցայտաղբյուրի մոտ: Կարծեցի ծարավ էր: Ձեռքը մոտեցրեց ջրին, բայց չխմեց, մատները միայն ջրոտեց, քսեց շրթունքներին: Նա իրեն շարունակ պատժում էր: Հենվեց մի սյան ու ոտքերը ծալապատիկ նստեց: Մազերի հետ էլ խաղալով՝ պարբերաբար իր մարմինն էր սրբում, մեկ աջ էր նայում, մեկ՝ ձախ, կրկին նույն անհասկանալի աղմուկն էր լսվում, երբ նա լուռ էր: Շատ մութ էր, ես նրա դեմքը այլևս չէի տեսնում: Միայն մտածում

էի՝ երբ է դադարելու այս ամենը, և ես երբ եմ օգնելու նրան: Բայց նա օգնություն չէր ուզում, նա ներում էր ուզում: Չգիտեմ՝ ինչպես նա վերածվեց մի հանգիստ, խաղաղ գետակի ու սկսեց մեղմ քայլերով հոսել դեպի առաջ: Նա գիտեր, թե որտեղ էր իր կանգառը: Ձեռքը կրկին մոտեցրեց պարանոցին, այս անգամ էլ այն դատարկ էր, չգտավ այն, ինչ պետք է լիներ այդտեղ: Բայց նա ուներ անտեսանելին. համբուրեց խաչը, որը միայն ինքն էր տեսնում: Ականջս շոյեց նրա մեղմ շշուկը: Ես ոչ մի բառ չէի կարողանում հասկանալ՝ ո՞վ էր նա, ինչո՞ւ էր այդտեղ, կիմանայի արդյո՞ք երբևէ նրա պատմությունը, ահա այս հարցերը սկսեցին վազ տալ իմ մտքում: Մի քիչ մոտեցա, մի փոքր էլ, ու նրա ձայնը ավելի պարզ էր լսվում: Աղոթք հիշեցնող բառեր որսացի: Իմ կեղեքված հայուհին շարֆը գցեց թաց մազերին, խոնարհեց գլուխը, միացրեց արյունոտ ձեռքերը, ու ես լսեցի. «Ողորմիր ինձ, ով Աստուած, ողորմիր ինձ. Որովհետեւ քեզ է յուսացած իմ անձը. Եւ ես քո թեւերի շուքին կ'յուսամ մինչեւ որ չարիքն անցնին»: Սաղմոս 57

Նա բարձրացնում էր իր ձայնն ու ավելի բարձր աղոթում: Նա ինձ տվեց բանալի ամենը բացահայտելու. ասաց խոսքեր, որոնց մասին ես՝ կատարյալս, քեզ հետ, իմ կատարյա՛լ ընթերցող, դեռ կբացահայտեմ: Եթե քո աչքերը դեռ վազում են իմ տողերի վրայով, դա նշանակում է, որ դու, ինչ խոսք, կատարյալ ես: Նրա աղոթքը երկարում էր, բառերը մեղեդու պես էին հնչում նրա շուրթերից. «Արդարը կորչում է եւ ուշադրութիւն անող մարդ չկայ, եւ բարի մարդիկ վեր են առնվում առանց մէկի իմանալու, թէ չարիքի առաջից վեր առնուեցաւ արդարը: Նա մտնում է խաղաղութեան մէջ. Նորանք հանգչում են իրանց հանգչարաններումը, որոնք ուղղութեամբ են վարվում: Բայց դուք այստեղ մօտեցէք, ով վհուկ կնոջ որդիք, ով պոռնկի եւ բոզի սերունդ: Ո՞ւմ վերայ էք ծաղրում, ո՞ւմ վերայ էք լայնացնում ձեր բերանը, եւ լեզուն՝ երկարացնում. Չէ՞ որ դուք անօրէնութեան զաւակներ՝ ստութեան սերունդ էք. Որ տաքանում էք բեւեկնիի կուռքերով ամեն կանաչ ծառի տակին, որ մորթում էք մանուկներին ձորերում վէմերի խոռոչների տակին: Ձորի կոկած քարերն էին քո բաժինը. Նորանք են՝ նորանք քո վիճակը. Նորանց էլ թափեցիր նուէր՝ մատուցրիր ընծայ. Մի՞թէ ես կդիմանամ սորանց: Բարձրացած եւ վեր ելած սարի վերայ դրիր քո անկողինը, այնտեղ էլ բարձրացար զոհ զոհելու համար: Եւ դռների եւ դրանդիների ետեւ դրիր քո յիշեցուցիչները,

որ ինձանից հեռու մերկացնես, ու վեր ելնես. Լայնացրիր անկողինդ եւ դաշինքով վարձեցիր քեզ համար նորանցից, նորանց անկողինը սիրեցիր, ուր որ էլ տեսար: Դու թագաւորի մօտը գնացիր իւղով, եւ շատացրիր քո անուշահոտութիւնները, եւ դեսպաններիդ մինչեւ հեռու տեղեր ուղարկեցիր, եւ խոնարհուեցար մինչեւ դժոխքը: Քո ճանապարհի շատութիւնից վաստակեցիր, բայց մէկ չասեցիր թէ Յոյս չկայ. Ձեռքիդ վերակենդանութիւնը գտար, դորա համար ցաւ չունեցար: Եւ ո՞ւմից էիր զարհուրում եւ վախենում, որ սուտ ասեցիր, եւ ինձ չյիշեցիր եւ հոգս չարիր. չէ՞ որ ես լռել եմ եւ այն էլ վաղուց ի վեր, եւ դու ինձանից չես վախենում: Ես պիտի յայտնեմ քո արդարութիւնը, եւ քո գործերը, եւ նորանք քեզ օգուտ չունին: Դու աղաղակելիս՝ թող ժողոված կուռքերդ քեզ փրկեն. Բայց նորանց ամենն էլ քամին պիտի տանի, մէկ շունչ պիտի վեր առնէ, բայց ինձ յուսացողը պիտի ժառանգէ երկիրը, եւ ստանայ իմ սուրբ սարը: Եւ նա ասում է. Հորդեցէք, հորդեցէք, ճանապարհ բացէք, վեր առէք խոչն իմ ժողովրդի ճանապարհիցը: Որովհետեւ այսպէս է ասում բարձրը եւ Բարձրեալը, յաւիտենականութեան մէջ բնակողը, եւ որի անունը Սուրբ է. Ես բնակվում եմ բարձրումը եւ սուրբ տեղը, բայց լինում եմ կոտրած եւ խոնարհ հոգի ունեցողի հետ, որ խոնարհների հոգին կենդանացնեմ, եւ կենդանացնեմ սրտով կոտրուածներին: Որովհետեւ ես չեմ վիճելու յաւիտեան, եւ չեմ բարկանալու միշտ, նորա համար որ կնուաղէին իմ առաջին հոգին եւ ոգիները, որոնք ես ստեղծել եմ: Ես նորա ագահութեան անօրէնութեանը համար բարկացայ, եւ նորան զարկեցի. Ես ծածկուեցայ եւ բարկացայ, եւ նա ետ ետ գնաց իր սրտի ճանապարհովը: Նորա ճանապարհները ես տեսել եմ, եւ ես բժշկելու եմ նորան. Եւ նորան առաջնորդելու ու նորան եւ նորա սգաւորներին մխիթարելու եմ: Շրթունքների պտուղն ստեղծելով, Խաղաղութիւն, խաղաղութիւն լինի հեռուներին եւ մօտիներին, ասում է Տէրը, եւ ես պիտի բժշկեմ նորան: Բայց ամբարիշտները ալէծուփ ծովի նման են, որ չէ կարող հանդարտել, եւ նորա ջուրերը տիղմ ու ցեխ են դուրս տալիս: Խաղաղութիւն չկայ, ասում է իմ Աստուածը, ամբարիշտների համար»: Եսայի 57

Նա ավարտեց այս տողերը, որոնք ես այսուհետ անգիր եմ հիշում, ու թե ինչո՞ւ հենց այս տողերը, նա ասաց այդ: Ես հետո հասկացա: Ես շատ անհարմար տեղից էի հետևում նրան: Անձրևից թաց հողին դնելով ոտքս՝ սայթաքեցի ու ընկա, երբ արթնացա, արդեն լույսը բացվել էր, ես գետնին

էի ընկած, բայց գլխիս տակ նրա շարֆն էր արյունոտված, և նրա բույրն էր, որ անցյալ օրը զգացել էի: Նրանից մայրական հոգատարության շունչ էր մնացել, որ հատուկ էր հայ մորը: Տեսնես որտե՞ղ է, ո՞ւր գնաց, ի՞նչ եղավ նրա հետ...

Ինչ էր եղել նրա հետ, ես հետո տարիներ անց գնացի նրա հետքերով: Ես խաչակնքվեցի ու հեռացա՝ իմ հուշերում պահելով իմ աղմկոտ հայուհուն:

Լուսանցքներ

1

Դու լուսավոր ես,
Մեկ-մեկ մութ ես,
Այնքան մութ ես, որ խոսելիս դու լուռ ես,
Ինձ թվում է՝ դու դու չես.
Ախր այնքա՜ն հասարակ ես,
Դու աննկատ ես,
Դու իմ շշուկն ես,
Իմ մութ գիշերվա վառ լույսն ես,
Ժպտա՛, ի՛մ քաջ,
Չէ՞ որ դու իմ հպարտությունն ես:

2

Ուրեմն այսուհետ քո հոգու հայելում
Աչքերդ հաճախ ժպտալու են,
Քո ոճիրը ներված է,
Քեզ ես խղճալու եմ,
Երբեմն էլ սիրելու եմ.
Գիտե՞ս ինչի համար,
Որ երկմտել եմ, որ կոտրվել, բայց և վերածնվել եմ,

Որ ատել եմ, բայց, միևնույն է, սիրել եմ,
Որ եղկելի քո տեսքից,
Քո զազրելի ձայնից,
Քո աննպատակ բառերից,
Ստերից, կեղծիքից, թունավոր լեզվից
Ես մաքրվել եմ:
Շնորհակալ եմ քեզ, ի՛մ լուսավոր,
Քո մութ հոգուց
Ես իմ լուսավոր հոգին պեղել եմ:
Ախր այնքա՜ն շշմեցուցիչ է.
Դու հասարակ ես, դու լուռ ես,
Իսկ հոգիդ այնքա՜ն ճերմակ է:
Դե լո՛ւռ մնա, մի՛ խոսիր,
Չէ՞ որ ամեն տառդ
Թունավոր է,
Վայելի՛ր այս պահը,
Երբ երջանկությունդ այդքա՜ն աննկատ է…

3

Հայացքներ կան, որ տարբերվում են ամբոխի մեջ, կան հայացքներ, որ տարբերվում են անգամ, երբ չկան տարբերակներ տարբերվելու համար։ Նրա աչքերի քարտեզը տարբերվում էր ցանկացած եղանակին, նրա հայացքի ժա՜նրն էր ուրիշ։

4

Սպասումը գրեթե միշտ կոտրում է մարդուն, խորտակում աներևույթ մտածմունքների մեջ, բայց դու՝ երկրածինդ, սպասման մեջ անգամ վեհ ես դրսևորվում, այլ են քո ժեստերն ու աննկատ շարժումները, իմ ժամանակի սպասման մեջ է քո իրական շարժումը։

2014

5

Այն, ինչ կարողացավ քեզ տալ,
Ընդամենը խզբզած թուղթն էր
Ու լիքը անկեղծ ատելության խոստովանություն:
Ասա նրան՝ մնաս չարով,
Ասա, որ սխալվեցիր այս վերջին անգամն էլ,
Ասա, որ սուրճը խմելիս մրուրն ավելի համեղ է,
Նրա մրուրից մաքրվիր
Ու շաքարով նոր սուրճ պատրաստիր,
Շաքարով սուրճն ավելի համեղ է...

6

Արի՛ փաթաթվեմ քեզ,

Փաթաթվեմ անխոս, անբառ, անմարմին քո եթերին,

Արի՛ լսեմ, արի՛ հետևեմ արյանդ խոսքին ու հոսքին,

Արի՛ մարմինդ մարմնիս անմարմին հոգու հետ կարկատեմ,

Որ փոթորիկներից ցած երբեք չանդունդվեմ:

Ես էլ չգիտեի

Այո՛, գուցե նա հասարակ էր, չուներ որևէ յուրահատկություն, բայց խտացվել էր իմ մեջ, որ դարեր կամ գուցե հազարամյակներ էր պետք, որ մի կերպ դատարկեի նրան իմ ներսից:

—Ի՞նչ ես ասում, դա այնքան էլ բարդ չէ: Աշխարհներ են փոխվում, մարդիկ են մեռնում ու ծնվում: Եղածն ի՞նչ է. մի քանի գրամ զգացմունք չէ՞:

—Լռի՛ր, ի՞նչ ես դու հասկանում լույսից, ի՞նչ ես դու հասկանում սիրուց, դու անգամ չես տեսնում շրթունքներիս դողը, ներսիս աղմուկը ու իմ փոշիացող մարմինը, երբ նրա անունն եմ տալիս:

—Իսկ դու մի՛ տուր նրա անունը, —հեգնանքով ասաց նա:

Եվ ահա այստեղ քարացավ եռ տվող նրա սիրտը, նա հասկացավ, որ այլևս անհնար է ապրել այդ ամենի մեջ: Նա հիվանդ էր, հիվանդ էր ինքն իրենով, իր ստեղծածով, խզբզոցով ու բղավոցով, այն ամենով ինչն անգամ չէր հասցրել ստեղծել:

—Իսկ ի՞նչ անեմ ես,-ցածրաձայն ասաց նա և ոսկրոտ մատիկները սողեցրեց նրա նվիրածի վրայով:

—Ի՞նչ ես կարծում, անգո՛ւյն, պե՞տք է որ նրանից կտրվեմ, մասնատվեմ:

—Այո՛, խոսիր հետը, քաշիր վերջին ճակատագրի պառակտվող հյուսվածքների պոչից:

—Նա խորը շունչ քաշեց, հավաքվեց, ուղղվեց, ձայնը տարրալուծվեց թթվածնի հետ:

Արձագանքը մի քանի անգամ ցավոտ հարվածեց նրա փոքրիկ մարմնին, ցած ընկավ, լսեց բառերը, որոնք գիտեր, թե չէր լսելու:

—Գիտես՝ ես էլ քեզ էնպես չեմ սիրում, ոնց գրում եմ կամ նկարում:

Մյուս կողմում նա զգաց՝ ոնց է լույսը մթնում, ոնց է նորածին լուսինը խավարում:

Դատարկությունը քարուքանդ արեց նրա հազիվհազ սոսնձված հոգին: Դե թող, թո՛ղ նրա նոտաները, թո՛ղ նրա հետևից գնացող բույրը, որ ամեն անկյունում փաթաթվում էր շնչուղիներիդ, թո՛ղ նրա ստվերը, որ ամեն միլիմետրի վրա պաշտպանում էր քոնին: Թո՛ղ ու փախի՛ր, գնա՛ դեպ նրա գծած արահետը, որտեղ քեզ կգծագրի մեկ ուրիշը ու կներկի քեզ մեկ այլը: Մնաս բարով, ի՛մ անուշ, ի՛մ սիրուն, չստացված, անօրեն սեր, իմ ոսկորների կենարա՛ր ուժ: Այս անգամ քեզ անուն չեմ դնում. դու սեր էիր ու անսեռ էիր, դու մարդ էիր, բայց և չէիր, քեզ իմ անգույնով կմաքրեմ, հիշողություն էլ չի մնացել, որ քեզ հիշեմ, մնում է միայն

արձագանքող խրճիթում ամեն հատիկ նյութը քո անունով կոչեմ ու մկրտեմ մեր չստացված սիրո անունով: Չգիտեմ էլ, թե ինչու չգիտեմ, որ քեզ լռության մեջ եմ լսել, իսկ ջնջվելդ սգացել եմ աղմուկիս մեջ, այնինչ, ինձ պետք էր, որ աղմկոտ սիրեիր, ես էլ չգիտեի, որ մենք բաժանվում էինք հավերժ միասին լինելու համար:

Դու ինձ՝ այո, ես քեզ՝ ոչ

Մեղմիկ, քնքուշ ու աննկատ տողերումս տեղավորվեց: Ալեկոծ ու գանահարված կյանքիս նկուղում անկյուն վարձեց: Գունավորեց, լազուրեց, կակաչեց, բայց ա՛յ վերնահարկում մի լավ աղմկեց:

Մնջվեցի, սիրեցի, գույներում թաթախվեցի: Դեմքն առա ափերիս մեջ ու կարկամեցի: Կոպերը շնչեցի, մաշկի վրա մեղմիկ, հեզ պար հյուսեցի, իր կյանքի ամեն սահող ակնթարթում մատներս դաջեցի: Շուրթերս դեմքին օրորեցի, եդեմահամը հափշտակեցի, մազանոթներս շնչեց:

Սրտից իմ անգույնին առասան[5] գցեց, վրայով սերը լարապար պարեց: Անդորրի մեջ նրա վրձինը աղաղակ գծագրեց: Վերցրեց ու նոր աշխարհներ արարեց:

Սերն իմ խեղճացավ, լռեց, կծկվեց ու գալարվեց, որքան որ մոտեցել էր, կրկնակի հեռացրեց, սերն իմ հետ նայեց, գույներն իր հազարավոր կտավներում ներծծված գտավ:

Սերն այդ, ավա՜ղ, կարճ ապրեց: Բայց բոլոր դերերում ժպիտով լցվեց ու իմ ոլորավտանգ կյանքում մի քանի տարի էլ ավելացրեց:

Այդ գծագրած աշխարհներում վրձինը հին ու նոր կտավներում շաղախեց ու թանկ վաճառեց: Սերը խեղճ, նորածին, որբ գահադրվեց, գնաց վրձնի գծերի արանքներում լուռ պատսպարվեց: Սերն այդ խոսել սովորեց: Վերևներում լույսը սիրուն համոզեց, վրձնի մոլեկուլները սիրո ատոմներից մի կերպ տարանջատեց, բղավեց.

—Բոլորի՛նն են նրա կտավները, հիմար մի՛ լինի:

---

[5] Առասան-թոկ, պարան, ժապավեն:

Սերն ըմբոստացավ, հակառակվեց, ինքն իրեն պատժեց։ Աիռելի թևերը աիասարսուռ ձայնային տատանում բացեց ու վեր սավառնեց։ Այդ սերը երկար լռեց։ Մի օր փետուրները քրքրված արթնացավ։ Այս անգամ այն մրմնջաց.

—Անգույններում իմ քրքրված ոլորանների, ներկաներիդ ու աղոցածներիդ փորձերը քեզ թող որ լուսել սովորեցնեն, քանզի դու ինձ, այո՛, սովորեցրիր, իսկ ես քեզ՝ ոչ, տկարացա։

Եվ «սիրել»-ներում 5:29-ի, «ատել»-ներում 22:22-ի և մի քանի թվային հավասարումների արանքներում վրձնիդ կտրատող գծերի նկուղներում հավերժ կարձագանքի.

—Դու ինձ՝ «այո»-ն, ես քեզ՝ «ոչ»-ը։

Թե

Թե եկար, թող գալդ բարով լինի,
Ինձնով լինի,
Իմ քահ-քահոցով լինի,
Առանց քորոցների լինի,
Թե չեկար,
Թող խրճիթդ միշտ մաքուր լինի,
Անտիղմ լինի։
Թե մնացիր,
Թող ողերիդ արանքում
Իմ անգույնի շերտը
Անվերջ քո արյան կարմիրին ապավեն լինի։

Իրենով

Ես իրենով, իր հետ, իր մեջ,
Ինքն ինձնով, ինձ հետ, իմ մեջ,
Իմ դատարկ անոթներով հոսողն է,
Իր ամբոխում բղավողն եմ,
Իմ ստվերի հետ հյուսվածն է,
Իր մատնահետքերով ներկվածն եմ։
2020

Ինքը չէր սիրում կարմիրը

Ինքը չէր սիրում կարմիրը,
Կարմիրը ներծծված էր առանց այդ էլ նրա մազանոթներում,
Նա չէր հանդուրժում փոթորիկը,
Այն առանց այդ էլ տարել էր իր կյանքի հոսքը։
Ինքը չէր սիրում հասարակը,
Հասարակը քայքայել էր առանց այդ էլ իր սողացող հոգին։
Ինքը փնտրում էր,
Նա գնում էր,
Նա գտնում էր,
Ինքը գնում էր,
Գրկում էր անգույնը, որ գրկվել սովորեր,
Ինքը գրկվել չէր սիրում,
Նա գոյություն ուներ անգույնում,
Բայց ինքը կարմիր էր։
Նա էլ չուներ մարմին ապրելու,
Ինքը նկարեց կարմիր մարմինը,

Բայց նա, միևնույն է, չէր սիրում կարմիրը։

Կա

Գեղեցիկի ու իրականի միջև մի եռ կա,
Սիրո ու հիասթափության միջև երկու հատիկ կաթիլ կա,
Մարդկայինի և վերերկրայինի միջև
Մի քանի գրամ ավելացած հպարտություն կա,
Քաղաքի՝ խառնաշփոթ, անիմաստ, եղկելի,
Կեղծ շնչածի մեջ, պարանոցիս մոտ,
Մաշկիցս մի քանի միլիմետր վեր արտաշնչածդ թթվածինը կա,
Անիմաստ վատնած տարիներիս լուսանցքներում
Տեղավորված մատնահետքերիդ խզբզոցը կա,
Անգույնիս մեջ ավիշիդ հետ կցոնված
Այն երկու հատիկ եռացող կաթիլով այրված,
Կակազող «Ես քեզ սիրում եմ»-ը կա։

Դարձիր

Ետ դարձիր, ի՜մ սեր,
Ի՜մ միակն այս խենթ ամբոխի մեջ,
Ի՜մ անգին, միայն թե դու վերադարձիր,
Քո ջերմ շնչով նվիրիր ինձ օրեր նորից,
Իմ ուրախությունն ու հրճվանքը դարձիր,
Բե՜ր օրերն այն թեկուզ օտար երազից,
Թող ասեմ քեզ թեկուզ անթափանց ապակու ետևից՝
Դու ինձ ժպտալ սովորեցրիր,

Ինձ ապրեցրիր, քո լույսով ինձ օրհնեցիր,
Դու քո ուժեղ ձեռքերով
Սառած սիրտն իմ ջերմացրիր,
Բայց ինչո՞ւ ինձնից այդքան թույլ գտնվեցիր,
Ինչո՞ւ այն օրն, այն պահին, րոպեին, այն տագնապալից
Հայացքին իմ զարհուրելի լռությամբ ապտակեցիր,
Ինձ հակառակն ինչո՞ւ չապացուցեցիր։
Ափսոսանքի հայացքդ միայն գնալուցս ինձ տվեցիր,
Ավա՜ղ, այն արդեն հարկավոր չէր ինձ քեզնից։
Չէ՞ որ հեռանալս թույլ տվեցիր,
Ինքդ այդ օրը շատ անզոր գտնվեցիր,
Հիմա արդեն հեռու եմ քեզնից,
Հեռու անգամ ինքս ինձնից,
Ինձ ու քեզ տանջող մեր ներկայությունից,
Հեռու այդ չստացված ներկայացումից:
Փախչելով այդ ներկայացման գլխավոր դերերից՝
Փորձե՞նք գուցե փախչել մեկս մյուսից՝
Ազատելով հոգիները մեր այս ճղճիմ մտորումներից,
Բայց ասա՜ ո՞ւր փախչենք մենք մեր զգացմունքներից,
Որտե՞ղ թաքցնենք,
Դրանք տիեզերքի գենից ինչպե՞ս ջնջենք,
Չէ՞ որ դրանք ամպերն են այս անձրևի,
Շողերն այս արևի,
Լուսինն այս գիշերվա,
Թթվածինն այս մոլորակի,
Իմաստն այս մեր անիծված օրհնանքի:
Դե՜, քեզ տեսնեմ, փախչի՜ր, թե կարող ես,
Մոռացիր, թե ուզում ես,
Ժպտա, թե կստացվի,
Ապրիր, շնչիր, ողբա՜, գոռա՜, վերածնվի՜ր,
Ասա, որ կկարողանաս, ո՞չ,
Ասա, որ գոնե կկարոտես:
Իսկ դո՞ւ, ի՞նչ ես անում դու.

Դու այդ ամենը խորը փոսում ես թաղում
Իբրև քեզ ապավեն,
Մեր սերն ես այնտեղ թաղում,
Մեկ այլ ծաղիկ ես տնկում,
Այն քնքշորեն փայփայում,
Պարտաճանաչ կերպով ջրով ցողում,
Այդ ծաղկի՞ն ես դու սիրել ուզում:
Մեր սիրո փոխարեն քեզ կեղծ ապավեն ես փնտրում:
Գիտես՝ ես արդեն չեմ էլ զարմանում,
Աչքերս էլ չեմ արցունքոտում,
Քեզ անգամ տեսնել չեմ ուզում,
Քեզ միայն հուշեր եմ թողնում,
Բայց լա՛վ իմացիր, երբե՛ք այսպես չի լինում:
Դու մտածիր, որ սպասված ներկայացման ավարտին
Կհայտնվեն արցունքներ, ոչ այդքան տեղին
Ծափահարություններ չեն հնչի դահլիճում,
Չէ՛, հանդիսատեսը լոկ հզոր սիրո պիեսն է քննադատում,
Եվ դու քո այդ կերպարում,
Քո այդ թաքնված երազում
Իմ արցունքներն ես թորել ուզում,
Դու թաքուն իմ այդ զուլալ արցունքներով
Քո այդ նոր «ապավեն» ծաղկի արմատներն ես ցողում:
Միևնույն է, արդեն քեզնից հեռու եմ շնչում,
Ես էլ եմ կերպար կերտում,
Այնտեղ ես կույր եմ խաղում,
Ոչնչով այլևս չեմ ուրախանում,
Միայն թե կարծես չեմ խրատվում,
Կրկին քեզ եմ ես կարոտում,
Քո թթվածինն եմ շնչել ուզում,
Այս պարզ բառերն եմ շարադրում
Ու կարծես անհավատ հավատացյալ եմ խաղում,
Աստծուց քեզ համար միայն մի բան եմ խնդրում.
Քո ծաղկի կողմից քեզ համար

Ամուր արմատներ ու բուրավետ ծաղիկներ եմ ցանկանում:
Հարցնում ես՝ ինձ համար ի՞նչ եմ ուզում.
Ի սեր Աստծո, այս մենախոսությունն ավարտել եմ ուզում,
Արդեն բղավում, իմ խոսքերը երկինք եմ ուղղում.
—Աստղե՜ր, նրան մոռանալ եմ ուզում:

Լսիր ինձ հենց այնպես

Այդ ուտե՞ղ էիր, ինչո՞ւ եկար,
Այդ քո գալուստով իմ կույր հոգու հետ այս ի՜նչ ես արել.
Նրան տեսողություն ես պարգևել,
Քո ամոքիչ լուսե շողն ես սփռել,
Սիրտն ես իմ բժշկել,
Դու իմ ճրագը կրակի ես վերածել,
Լսի՜ր, դու քանի՞ կրթություն ես ստացել,
Ուզում եմ այսուհետ խորհրդովդ առաջնորդվել:
Կարճաժամկետ այս օրերում ինչպե՞ս ես կարողացել
Սիրո ճանապարհ ինձ համար գծագրել:
Սիրելի՜ս, քեզ ախր ամենուր եմ փնտրել,
Գիտես՝ երեկ աչքերդ ինձ թաքուն են շշնջացել,
Որ այդ դու ես ինձ գտել:
Անգի՜նս, քեզ ամեն ակնթարթ եմ սկսել կարոտել,
Աչքերիս փայլի վրա ես էլ եմ զարմացել,
Զարմանքն անգամ անծանոթ հայացքումդ եմ նշմարել,
Այն անկախ կամքիցս լռությանս մեջ եմ արտագրել,
Ու թե երկնքին չեմ նայել,
Այժմ այն իմ ներսում է արտացոլվել,
Սիրո քնքուշ ու գույցե հասարակ տողեր է շարադրել,
Այն իմ կյանքի էջերն է ընթերցել,
Սխալներիս ուսուցիչ է նշանակվել:

Դու այս ամենին այդ ինչպե՞ս ես հասել,
Սիրուս մեղավորն ես դարձել,
Այսքան երջանկություն դու որտեղի՞ց ես բերել,
Այս որքան ես փնտրել ու պրպտել։
Ներիր, քեզ կասկածել դեռ չեմ դադարել,
Գիտես՝ականջներով սիրելս բառարանիցս վաղուց եմ ջնջել։
Քեզ այնքան անհամբերությամբ եմ սպասել,
Մինչ այս մահկանացու ենք եղել,
Հիմա իրավ միմյանց համար արարչագործման լույսի ենք փոխակերպվել։
Բախմանը այս ստվերները մեր դարեր են սպասել,
Բայց առեղծվածով միմյանց դեռ շատ վաղուց էին գտել,
Իսկ մե՞նք…մենք՝ միամիտներս, նրանց այլ տեղում ենք փնտրել,
Այնինչ նրանք հավիտենության մեջ մեզ թևեր են եղել:
Ինչ կասես, թո՞ւյլ տանք, որ սովորեն միմյանց զգվել,
Հավատա՛, նրանք ևս գիտեն կարոտել,
Զգացմունքները նրանց այդքան էլ օտար չեն եղել,
Զուր ենք մենք այսքան անհավատ եղել,
Չէ՞ որ ստվերն անգամ թաքուն սեր է հյուսել,
Համաձայնվիր, որ շատ համարձակ են վարվել,
Իսկ մենք, մենք ի՞նչ ենք արել.
Կեղծ հպարտներ ենք ձևացել,
Ցանկացել ենք ատել,
Չարությամբ ենք ներարկվել,
Ներարկիչն անգամ սառը թույնով ենք լիցքավորել,
Սրտերը մեր պաղ
Ջերմացնել անգամ չենք էլ փորձել։
Ու կարծում ես այդպես երջանի՞կ ենք եղել։
Պատասխանի՛ր, վախենում ես՝ քեզ թույլ կարող եմ համարել:
Լռությամբ կուզեի հետդ խոսել,
Այստեղ վեհ կարող եմ լինել
Ու կարոտիցդ անգամ
Ինքնամոռաց արտասվել։
Չես հարցնում, թե այդ ի՞նչ եմ որոշել քեզ ասել.

Մենք շինծու երջանկությամբ ենք ապրել,
Շիտակ աստվածայինը մեր հոգու սևերում ենք նահատակել,
Իբրև թե վրձնից օգտվել ենք սովորել
Եվ կեղծ ժպիտներ ենք նկարել,
Միայն թե գունավորել ենք մոռացել,
Իսկ սրտերը մեր գիտե՞ս ինչպես են շնչահեղձ եղել.
Չգիտե՛ս, լավ, ես այդ մասին կլռեմ:
Նրանց ինքնագոհ ենք բանտարկել,
Գոնե արտասուքով չենք սնուցել:
Այսքան դաժանություն մեզ որտեղի՞ց էր տրվել.
Այնտեղ բոլորի մուտքն ենք արգելել,
Մեզ այդ իրավունքն ո՞վ էր տվել,
Մենք մեզ դատավոր ենք նշանակել,
Ատյաններում այդ
Մեր հորինած օրենքներն ենք շարադրել,
Իսկ հիմա նրանց ազատ ենք թողել,
Այդ անմեղ մեղավոր սրտերին քայլել ենք սովորեցրել:
Գիտես՝ ինձ համար գաղտնաբառ էլ եմ ընտրել,
Քո սիրտն իմ սրտի սրտապահին եմ դարձրել,
Ասա՛, որքա՞ն ես այստեղ որոշել բնակվել:
Ի՛մ անուշ, ի՛մ անգին, մի բան եմ ուզում քեզ խնդրել,
Երբ այդքան համարձակությամբ ներս ես խուժել,
Ասա՛, որ միայն անարատ ծաղիկներ ես որոշել աճեցնել:

Ա՛խ, ի՛մ հոգի, մի զարմացիր,
Բնավ չեմ ցանկանում քեզ իմ այգեպանը դարձնել:
Տե՛ս՝ անգամ ժպտալ ենք սովորել,
Բայց թե հակառակ իմ խնդրանքի
Մտադրվել ես սիրտս փշոտել,
Գոնե գնալիս հողը կփխրեցնես,
Ասում են, թե ժամանակ է եղել,
Որ փխրեցրած հողում
Մոլախոտն անգամ անուշ է բուրել:

Չեմ ուզում էլ քեզ կասկածել,
Մոլախոտի բույրն անգամ ուզում եմ հիշել,
Ասեմ քեզ, ի՜մ փոքրիկ, որ այդքան դաժան պետք չէ վարվել,
Ասել եմ՝ չէ որ տեսողությունս ես վերականգնել:
Եկ համարձակվենք խոստովանել, որ հիմարներ ենք եղել,
Որ խուսափել ենք ու սերը հերքել,
Բավ է այլևս այսպես ապրել,
Ե՜կ այսօրվանից համատեղ սկսենք քայլել,
Կորցրած օրերը սկսենք վերանորոգել,
Արի ամուր միմյանց գգվենք,
Հակառակ բոլորին մեզ ազատ արձակենք,
Ու կոտրելով անգամ ամենահզոր կաղապարներն էլ,
Թողնելով բոլոր ցավերն էլ՝
Միայն սեր փորձենք կուտակել,
Այն մեկ ափսեում տեղավորենք
Ու միմյանց դեռ չգրված սիրով սիրենք,
Մի հղում ունեմ միայն քեզ՝
Քեզ իմ սիրո այբբենարանն էր պետք սովորել:

Իմը չէիր

Նրա անցյալն ես, իմ ներկան, իմը չէիր,
Քոնն էլ չէիր դու, ինքդ քոնը չէիր,
Բոլորի համար միակ,
Ինձ համար միևնույն էիր,
Ամեն ուր էիր, բայց ախր իմը չէիր:
Ում էիր պետք, եթե շունչդ իմը չէր,
Երկուսիս շուրթերին ժպիտն անձանոթ էր,

Ճակատագրով իմը, բայց առանձին էիր,
Օտարների մեջ ձուլված
Մեր աշխարհում բայց այնքան մոտ էինք,
Թթվածնում մոլեկուլդ իմ կողքին էր,
Իսկ նրա մոլեկուլը այլևս ոչ մեկինը չէր,
Չգիտեմ, թե զգացածիցդ ինչ էիր սպասում,
Բայց անշուշտ ամեն քայլիդ հետ
Ինձ կողքիդ էիր գամում,
Շշուկների մեջ կայի ես,
Դու չկայիր գոնե աղմուկի մեջ:
Զուր ես ամաչում կամ հայացքդ փախցնում,
Ի՜մ վեհություն, ի՜մ հպարտություն,
Քեզնից ես բնավ չեմ նեղանում,
Կարճված կյանքիս ամեն մուտքում
Քո կնիքի պակասն եմ զգում,
Ինչ անեմ, ասա՛, քեզ ես վաղուց էի սպասում:
Դու իմ սպասումն ես արդարացնում,
Իսկ ինչո՞ւ ես վախենում,
Խուսափում.
Հերթական արկածը քո լինել բնավ չեմ ուզում,
Այլևս քեզ ներում չեմ պարգևում...

Ժպտա՛

Ու հոսում էր արյունը նրա երակներում,
Ու ապրում էր նա երազներով լեցուն,
Կաս դու, չկա նա,
Անէանում, աներևույթ եմ ես դառնում,
Քո կորուստը ինձ չի ոչնչացնում,

Թե կարող եմ, կլինեմ ես այստեղ,
Կապրեմ ու կգոյատևեմ թափանցիկ
Երակներում քո երկնագույն
Ու պայքարներում քո անիմաստ:
Այստեղ որքան գույներ ես դու պղտորում,
Դրանք սրով փոխարինում,
Գրողը տանի, ի՞նչ ես դու ուզում:
Ապրիր այս թվաքանակի ներսում,
Շնչիր այդ ամենից քանդակած քո խավարում,
Գուցե շնչահեղձ լինես մի օր հենց այդ անէությունում,
Գուցե գոռաս կամ գուցե լռես, բայց հիշի՛ր՝
Խավարից հետ չեն գալիս
Ու սևից գույները չեն վերականգնվում,
Մի՛ կորցրու քեզ քո ոլորաններում:
Գտնե՞լ, փնտրե՞լ, ո՞ւմ,
Ի՞նձ, քե՞զ
Իսկ գո՞ւցե մեզ:
Ինչ էլ բարբաջես,
Քեզ, թե ինձ այս հազարամյակներում
Չի տրվել ոչինչ մյուսներից առավել,
Մոլորվե՞լ ես ուզում, ինչևէ,
Չէ որ դա էլ քեզ է ապրեցնում:
Հիշի՛ր՝ իմ ունայնությունում
Դու դեռ քո առաջվա օդն ես
Ագահաբար հափշտակում,
Ավա՜ղ, այս անգամ ես միայն քո թափանցիկում եմ կենցաղվում,
Ինձ քո ստվերին ընկեր չեմ կոչում,
Քո դեմ պայքարներում բոլոր
Դառնում եմ առավել հզոր:
Ո՛չ քեզ և ո՛չ էլ ինձ,
Կամ գուցե կասես մեզ.
Ո՛չ, ես չեմ հաղթում,
Միայն զրոյական հաշիվ եմ պահանջում,

Չէ՞ որ զրոն շրջան է կազմում,
Իսկ այդ շրջանում
Երկուսիս խաղաքարտերը
Միայն հաղթանակած են վայր դրվում,
Բայց գիտես՝ վաղուց է ինչ
Հաղթողներին պարգևներ չեն տրվում
Ու թե տրվում էլ են,
Ապա դրանց ներսում
Դատարկությունն է անիմաստ լռում.
Ո՞վ է մրցավարը, ո՞վ խաղացողը,
Ի՞նչ են նրանք զուր բառեր շռայլում,
Ինչո՞ւ են իրենց խեղճ, կծկված կյանքը սողեցնում։
Անապատում անգամ առանց քամի ավազը չի սողում,
Ուրեմն մեկն առանց մյուսի անգամ սողալ չի կարողանում։
Ու ինչու ես դու ձեռնունայն,
Դատարկ են ափերդ,
Բայց ծանր են քայլերդ,
Ասում են, թե խելացի մարդիկ
Հոգու ծանրությունը ժպիտով են քողարկում,
Դե ինչ ես դու դանդաղում,
Չէ՞ որ քո շնչով եմ ես ապրում.
Իմ ծանրությունն եմ ես «ժպտում»,
Մի՞թե դեռ չես թեթևանում
Ու քայլերդ են ավելի դանդաղում,
Ժպիտովս ես դու ժպտում,
Բայց ժպտո՞ւմ արդյոք
Եվ դա դու ժպի՞տ ես կոչում։
Ո՛չ, մի՛ խաղա այս պայքարում,
Վե՛ր պահիր քեզ այս աշխարհում։
Կանգ ես առնում, նորից ժպտում։
Ես քեզ լավ եմ հասկանում,
Դու ետ դառնալ ես ուզում։
Ծանրությունդ վերցնում ու քեզ ազատ եմ թողնում,

Միևնույն է, երբեք ժպիտները հարատև չեն լինում,
Ու որքան էլ այս խաղում ամենաուժեղը դու ես համարվում,
Հոգուդ կաղությունը ինձ բնավ չի մոտենում,
Ամեն ակնթարթ քո մոտենալիս
Իմ ժպիտի զորությունը քեզ ինձնից հեռու է շպրտում:
Գնա՛, սիրելի՛ս, ապրիր անհոգ,
Քո ձեռագիրը իմ մարմնից քամին արդեն վաղուց է մաքրում,
Ու սողում են տառերը արդեն առանց քո օգնության,
Առանց քո բացակա ներկայության:
Գնա՛, հարգելի՛ս, զուր ես երկմտում,
Զուր ես սողում ու կարկամում,
Թղթերը մաքուր էլ են ինձ գրավում:
Շնչիր, վազիր, մաքրիր ու գնա,
Հետքերը քո թող էլ չերևան:
Ինձ ապրելն էլ ես զուր սովորեցնում,
Քո անորոշ գալով ինձ դու չես սպանում,
Հիշի՛ր՝ գծագրություններն առանց գունավորման էլ են կյանքի կոչվում,
Դրանք միայն մաքրությանն են մոտենում,
Եվ կանոնները բնավ չեն փոխվում,
Անկոչ հյուրերին,
Անիմաստ բառերին, թույլ կապանքներին
Ու անընթեռնելի գրքերին
Միայն թույլերն են ձգտում:
Ո՛չ, քեզ ես թույլ չեմ անվանում
Եվ իմ գալուստը անկոչ չեմ համարում,
Իմ բառերը դու անիմաստ չես կոչում,
Քո կապանքները թույլ չեն լինում,
Իմ գրքերը անընթեռնելի չեն մնում,
Միայն այդ բառերի, այդ ներկաների,
Այդ կապանքների ու գրքերի համար
Դու «մոլորված» ես թագադրվում:
Ի՞նչ ես այդպես նայում,
Քեզ ես ոչինչ չեմ սովորեցնում,

Հարցնում ես, թե ես ինչ եմ փնտրում.
Քեզ քայլել ես չեմ ստիպում,
Գիտեմ՝ ճանապարհները քեզ երկար են թվում,
Ու դու վախենում, հետ ես գնում,
Ինքդ քեզ ես պատժում
Ու առաջ չես գնում,
Կրկին ինձ ես նայում ու հարցնում,
—Սիրելի՛ս, դու ի՞նչ ես ուզում:
Ի պատասխան՝ ես լռությամբ եմ քեզ հետ զրուցում,
Ես քո երակներից արյան մի քանի կաթիլ եմ ուզում
Ու այս պայքարին վերջակետեր նկարել եմ ուզում,
Մրցանակի փոխարեն քեզ մի քանի տառ եմ նվիրաբերում,
Նորից ունայնության մեջ խոսքս քեզ եմ ուղղում.
—Ժպտա՛, սիրելի՛ս, թե չես գալու, գոնե ժպտա՛...

Պատիժ

Երազում քեզ տեսնել,
Քեզ ամուր գրկել,
Կրծքիս սեղմել,
Քեզնով բարուրվել,
Կյանքիս կարգախոսն է դարձել:
Մթության մեջ քո տեսիլքը գտնել,
Քեզ հետ խոսել, երբ դու չես եղել,
Անունդ շշնջալ,
Քեզ ամենուր փնտրել:
Կարելի է ինձ խենթ համարել.
Քեզ կորցնել ու էլ չսպասել,

Ուրիշի գրկում քեզ գրկել,
Նրան համբուրել, բայց քոնը երազել,
Չգիտեմ՝ հանուն ինչի՞ եմ արել:
Քեզ կարոտել, կարոտից քայքայվել,
Մտքում ինքս ինձ ատել,
Ամեն օր լուսնի հետ արտասուքով զրուցել,
Սերդ երբեք չհամտեսել,
Երևի Աստված էլ ինձ այդպես է պատժել…

Երջանիկ կյանքի մի պատմություն

Կազմում եմ գիրքը, նշում այն գրելու ամսաթիվը, մտովի վերապրում ամեն տողի, ամեն տառի ջերմությունը: Փակում եմ գիրքը, հնչում է մեղմ մի երաժշտություն, այն պարուրում է իմ էությունը՝ իմ լռողությունը ավելի երփներանգ դարձնելով, այնպես ինչպես կլսեի բնության հրաշք՝ մի անմեղ թռչունի դայլայլ: Հոսում է մի կյանքի պատմության գետ, սարերի միջով վազում, հպվում քարերին, մաքրվում ամեն սևից ու փոշուց, զուլալվում, այն տարածում ողջ աշխարհով մեկ: Եվ ահա կարծես թե ես էլ լսում եմ մի ելևէջ, մի քանի նոտա ու ձայներ, դրանք իմ տուն են մտնում և ինչպես նորաթուխ լուսաբաց, արևի շողերի պես ջերմացնում իմ կացարանը: Գետի ջուրը իմ պատմությունը տարածում է մեր ժամանակակից խողովակների մեջ: Եվ եթե կարողանաս որսալ պահը, ապա ծորակը բացելիս այն կշշնջա այդ երջանիկ պատմությունը: Այսպիսին է իմ այս մեղմիկ երաժշտությամբ պարուրված օրը: Ինչպես համեղ բուրում է տատիկիս պատրաստած ավանդական ուտեստը և տարածվում ողջ տնով մեկ, այնպես էլ ինձ պարուրեց այսօր ձեր պատմությունը: Տանս պատերը ջերմ են, հատակն անգամ շիկացել է, այդ ինչպես է ձեր երջանկությունը պարուրել իմ բնակարանի սյուները:

Զգում եմ մաշկիս ամեն միլիմետրով, թե ինչպես եք ժպտում, ինչպիսին են ձեր նպատակները, գալիք տարվա ձեր հույսերը: Կարծես

լսելիս լինեք Մոցարտի և Վիվալդիի անհավանական, հրաշագեղ երաժշտությունը: Աստվա՜ծ իմ, ի՜նչ մատաղ են ձեր սրտերը:

Ահա մայրդ է. շոյում է գլուխդ, մի պահ հայացքդ հառում ես մորդ դեմքին և ուզում արտահայտել այն սիրո բերկրանքը, որը պարուրել է հոգիդ նրա հանդեպ, ավա՜ղ լռում ես, հայացքդ խոնարհում, ակամայից հիշում ես հորդ, հորդ ամուր ձեռքերը, և ահա նա տուն է մտնում, ձեռքին մի փոքր ծաղիկ, ինքն էլ մի փոքր գինովցած է, բայց ինչքան ուրախ է. իր սիրած մեխակն է: Աստվա՜ծ իմ, մորդ տարեդարձն է:

Ես դա հասկացա հորդ դեմքի ժպիտից: Տեսնում եմ, թե ինչպես եք բոլորդ ապշած նայում հայրիկիդ ու այդ ծաղիկին, որը մի փոքր հողոտ է: Մայրդ ժպտում է, և դու հասկանում ես, որ չի կարողացել գնել հայրդ այդ ծաղիկը և քաղել է որևէ տան կամ գուցե ուղղակի փողոցի այգուց: Մայրդ դեռ ժպտում է հայեցի ու մեղմ, լուռ վերցնում ծաղիկն ու վայելում դրա բույրը, զգում եմ, թե ինչ թարմ է այն: Մայրդ շնորհակալություն է հայտնում հորդ ու կամաց քայլերով գնում խոհանոց: Խոհանոցի գազօջախին եփվում է ձեր տան միակ ավանդական դարձած կարտոֆիլը: Դուք դեռ ապշած նայում եք այդ տեսարանին, բայց ինչո՞ւ: Մայրդ աղն է ավելացնում կարտոֆիլին: Դուք արդեն բազում անգամներ է ինչ միայն դա եք ուտում, բայց այնպես եք ուրախանում ամեն անգամ, կարծես ամեն օր նոր մի ճաշատեսակ է: Բայց դուք քաջ գիտեք, ու ծնողներդ էլ բազմիցս ասել են, որ չպետք է ապրել ուտելու համար: Եվ ահա դուք կրկին ժպտում եք, ձեր հացի սեղանը թեպետ առանց հացի այնքան լի է: Հայրդ գլուխը շրջում է դեպի քեզ, այո՛, հենց դեպի քեզ, դու անհարմար ես զգում քո այդ քարացած կեցվածքից: Նա ասում է.

—Աղջի՛կս, ո՞ւր է նվագարկիչը, միացրու, քեֆ անենք:

Դու ոչինչ չես պատասխանում, նայում ես նվագարկիչի դատարկ սեղանին, տխրություն եմ զգում աչքերումդ, դու գիտակցում ես հորդ խոսքերի խորությունը: Նա, գիտենալով, որ նվագարկիչը այլևս չկա, ցանկանում է, որ դու հավատաս դրա գոյությանը, դուք բոլորդ հավատաք ու լսեք իր լսած թվացյալ երաժշտությունը:

Դու հանկարծ ետին պլանում նկատում ես մորդ հայացքը, աչքերը. նայելով քեզ՝ շշուկով, աննկատ հասկացնում է քեզ, որ լռես, բայց ինչո՞ւ,

չես հասկանում: Դուք լուռ զրուցում եք: Ի պատասխան՝ հորդ հետ գնում ես հյուրասենյակ: Նա այնքան երջանիկ է: Մայրդ դառն է ժպտում, բայց երջանիկ է ձեզնով, ձեր գոյությամբ: Ի՜նչ անուշ է այդ մի ակնթարթյա երջանկությունը, որ որսացել եք և փորձում եք ատամներով պահել, դուք ապրում եք այդ անիրական տաքուկ օջախում:

Եվ ի՞նչ, արդյո՞ք մորդ ծննդյան օրն է այսօր:Նկատում ես, որ այդ մտքի վրա հայրդ մորդ պարի է հրավիրում: Նրանք փայլում են, ձեր տան հատակը մեկ ակնթարթում վերածվում է պալատական պարահանդեսի մարմարյա հատակի: Ինչքա՜ն երկար եք դուք երազել նրանց միշտ այսպես տեսնել: Դուք ագահաբար ամեն պահը փորձում եք դրոշմել հիշողության մեջ, գիտենալով, որ գուցե էլ երբեք չտեսնեք այդ «պարահանդես»-ը: Նրանք պարում են առանց երաժշտության: Հնչում է Մոցարտի և Վիվալդիի թվացյալ երաժշտությունը: Դու երջանիկ ես այդ ակնթարթով, այդ երկնային պահով: Հանկարծ պարելու ընթացքում շրջվելիս մայրդ շշնջում է քեզ.

—Չասես հորդ, որ այսօր չէ տարեդարձս, աղջի՛կս:

Դու աչքերդ մեղմ իջեցնում ես (այդ հայացքի մեղմությունը մորիցդ ես ժառանգել): Մտքում թաքուն հպարտանում ես, որ հենց նա է մայրդ:

Քայլերդ ուղղում ես դեպի ննջարան, նստում մահճակալի եզրին: Մի պահ ուղղակի վայելում պահը, ձեռքդ տանում պահարանի վերևում դրված ծրարին, ծրարը բացում ես ու մահճակալին լցնում մի քանի օր առաջ պատռված ձեր ընտանեկան միակ լուսանկարը: Լուսանկար, որը դու շատ ես սիրում: Փորձում ես այն հավաքել, կցոտել, սոսնձել, չի ստացվում: Ձեռքիդ կաթիլ ես զգում. արցունք, արցունքն է աչքերիցդ հոսում: Ձեռքերդ դողում են, հյուրասենյակից լսվում են ծնողներիդ «երջանիկ» ձայները, ոտնաձայները, որոնք պար են կերտում: Դու լավ գիտես, որ դա ուղղակի երջանիկ պատահականություն է, սրբում ես արցունքներդ ու դրանք փոխարինում ժպիտով: Ձեռքումդ սեղմած դեռ պահում ես նկարի կտորները, աչքերդ փակում ես:

Ժամանակ. վազող ժամանակը սողում է, սլանում, անհավանական արագությամբ գլորվում ծովերի, անապատների, երկնքի միջով: Արագ բաց ես անում աչքերդ, այս ի՞նչ է կատարվում: Նստած ես նույն այդ

մահճակալին, ձեռքումդ նույն ձեր նկարն է, ձեր ընտանեկան լուսանկարը, այն սոսնձված է: Պատկերը երևում է: Տեսնում եմ, նայում եմ լուսանկարին, այնտեղ ես եմ՝ փոքրիկ, անպաշտպան, դու ես՝ իմ մայր և դու՝ իմ հայր։ Դո՛ւ, որ այժմ պառկած ես մեր այն նույն հյուրասենյակում՝ սառը, անշարժ: Քեզ եմ ես տեսնում, բայց էլ չեմ լսում։ Ձեր ուրախ, հեքիաթային պարի երջանիկ ոտնաձայները խլացել են այլևս։ Դրանց փոխարեն լսում եմ մորս համեստ լացի ձայնը. լաց քո դիակի կողքին, քո բացակայության համար է նա լացում, քո կորստի ցավն է սգում։

Հա՛յր իմ, դո՛ւ, հենց դո՛ւ սոսնձեցիր մեր լուսանկարը, երբ մահիցդ մեկ ամիս առաջ եկա, դու այն տարիներ հետո վերականգնեցիր, այն զգուշաբար բերեցիր ու դրեցիր մեր հյուրասենյակի՝ առանց հացի լի ու լի սեղանին՝ ասելով.

—Կներես, աղջի՛կս, չկարողացա իդեալական հայր լինել քեզ համար, կներես։

Նկարը տեսնելով՝ ափսոսանքի արցունք սրբեցի քո ու իմ աչքերից: Դու ինձ այդ օրը վերջին անգամ այնքան ջերմ գրկեցիր:

Սլացան տարիները, անցան օրերն ու ամիսները, մամայի տարեդարձը հիմա էլ ենք մենք քո նշած օրը նշում։ Նկարը ձեռքիս է, մոտեցնում եմ այն կրծքիս, այդպես քեզ ավելի մոտ եմ զգում, պա՛պ։ Այս նկարում դու աջ կողմում ես, մաման՝ ձախ, իսկ հիմա՞, ո՞ւր ես դու հիմա, ո՛չ աջիցս ես և ո՛չ ձախից. հորիզոնական, անշարժ պառկած ես, այնքան հանգիստ ես, դա՞ էր քո խաղաղությունը։

Դու իմ երջանիկ արտասուքն էիր, իմ բաղձալի, չստացված, բայց և տաքուկ տան սյունը։ Դուք իմն էիք, ի՛մ ընտանիքը։ Մամայի անիրական տարեդարձը արդեն մերը դարձավ։

Ու հոսում է ջուրը, ես ծարավ եմ, շրթունքներս ցամաքել են, փակում եմ գիրքս, նշում այն ավարտելու օրը, մոտենում իմ հուշերի ծորակին, մի բաժակ ջուր խմում ու կամաց, «պարի» քայլերով ուղորդվում դեպի քո իրականություն, քեզ հետ եմ ես պարում մեր չիրականացված պարը, իմ հուշերում քեզ եմ ես կարոտում, ի՛մ ՊԱՊԱ։

Խավար ցրողը

Բարև՜, սիրելի՜ս: Թեպետ այս ամենը դյուրին չէ բացատրել քեզ, բայց ես կիանդգնեմ շարադրել այս տառերից բաղկացած նախադասությունները և պատմել քեզ իմ աշխարհը ու այնտեղի երազը: Քեզ այնտեղ եմ ես տեսել, դու այնտեղ էիր, ինձ շատ մոտ, իմ փակ աչքերի տակ, իմ քնած մարմնի կողքին: Ու ղողանջում էին զանգեր, լսո՞ւմ ես, անգին ի՜մ սրտակից, լսիր ու զգա, թե ինչպես է իմ մարմնի հյուսվածքների, ոսկորների միջով հոսում արյունը ու վազում դեպ սիրտն իմ, որ ավելի մոտիկից զգամ այդ անիրական կյանքը՝ երազ դարձած: Ահա և ղողանջը երրորդ անգամ է հափշտակում էությունս, և ես ահասարսուռ նայում եմ շուրջբոլորս և տեսնում՝ մթություն, խավար, մեգ է տիրել շուրջս, ու կարծես ինչ-որ մեկը ժամանակ է սահմանել և այդ մեկը խաղում է իր խաղը: Այս ինչ տձև մթություն է այստեղ: Ես արթնանալ եմ ուզում: Բայց, ավա՜ղ, դրա փոխարեն մեգի միջից դանդաղ շնչառություն է լսվում, ոտքերիս տակ քարերի և տերևների խոչընդոտներն են:

Մեգ է, մշուշ...

Ես անհագ ցանկությամբ եմ պարուրվում, զգում եմ, թե ինչպես են մաշկիս ծակոտկենները շնչում: Ինչ հրա՜շք է. երազում ես զգում եմ՝ ինչպես եմ շնչում: Տեսնես ի՞նչն է մղում ինձ դեպի այդ շնչառությունը, ի՞նչն է ինձ ու իմ հոգուն տիրել:

Ես մեղմ, հուշիկ, կամացուկ քայլում եմ ու ձեռքս մեկնում դեպի այդ շունչը: Փորձում եմ ընկալել, ապրել այդ ջերմությունն ու կենդանության նշույլ եմ զգում: Այո՜, նա երկրածին է, չեմ կարողանում նշմարել նրան: Տեր Աստվա՜ծ, ի՞նչ է սա, ո՞վ ես դու, երիտասա՞րդ, թե՞ ծերունի: Ով էլ լինես, երկրածին ես, ադամորդի՜:

Ես քո հետևորդն եմ, դու՝ իմ: Շարունակում եմ մոտենալ, բայց չի ստացվում նշմարել դեմքը: Կարծես թե նորածին երեխայի պես ես կույր եմ, չեմ տեսնում նրան, բայց զգում եմ՝ մարմինս ապրում է, և այդ երազը

հափշտակում է այս մռայլ գիշերը: Ձեռքս աննկատ մեկնում եմ նրան, մատներս վերջապես շոշափում են նրան՝ իմ մշուշի հարազատ ոգուն: Մենք այնքա՜ն մոտ ենք, մեզ բաժանում է միայն մեջը և իմ կույր ոսպնյակները: Նա տխուր է, կարծես տարիների հարվածները նրան մահամերձ են դարձրել: Դեռ ծանր է նրա շնչառությունը: Ծնկի գալով՝ ձեռքով ամուր բռնած եմ պահում նրա նուրբ մատները: Նա ոչինչ չի անում, ոչ մի բառ չի արտաբերում: Ձախ ձեռքի վրա պառկած է հողին ու միայն շնչում է: Հանկարծ ձեռքս ուժգին սեղմում է, երբ ուզում եմ հետ քաշել, բաց չի թողնում: Տագնապն է տիրում էությանս: Ես, հազիվ ազատվելով նրա այդ զարմանալի ուժգին սեղմոցից, հետ եմ խույանում: Սկսում եմ քայլել դեպի ղողանջող զանգերը: Բայց երբ քայլում եմ, զանգերը դադարում են: Ես մոլորված կանգ եմ առնում, ինչպես մոլորված թռչուն, որ ետ է մնացել իր երամից: Գոռալ եմ ուզում այս անելանելի մղձավանջից, ելնել եմ ուզում, բայց ա՛յ, ա՛յ, կարծես կրկին զանգերի ղողանջներն են, բայց ո՞ր կողմից է: Ո՛չ, միայն ոչ այն կողմից, որտեղից քիչ առաջ փախել եմ: Ես չեմ համարձակվում հետևել այդ զանգի ձայնին, բայց և անզոր եմ, հարկավոր է գնալ: Ես հասնում եմ նույն տեղին, նույն մեգին, կրկին նրա սրտի բաբախներն են ու նրա շնչառությունը: Բայց ներքին ինչ-որ սարսափ կա. չեմ կարողանում մոտենալ նրան: Ինչ-որ տխրություն է լցվում ու բարուրվում հոգուս: Փորձում եմ դիպչել նրա դեմքին, փակում եմ աչքերս և զգալով նրան ամեն միլիմետրի վրա՝ շոշափում եմ նրա մետաքսի պես հարթ այտերը, դեմքի ուրվագծերը. նա գեղեցիկ դիմագծեր ունի, բոլորիս նման է, գեղեցիկ հոնքեր ունի և երկար արտևանունքներ: Փորձում եմ զգալ աչքերի ձևը, նա անշարժ է, ոչ մի կտրուկ շարժում չի անում, միայն հևիհև շնչում է: Տպավորություն է, որ ոչ մի այլ շարժում անելու ուժ չունի: Սա վշտացած շնչառություն է, ես դա լավ գիտեմ: Աչքերին դիպչելիս զգում եմ, որ դեմքի վրայով վազեց մի կաթիլ: Մի՞թե արտասվեցիր:

Իմ ձայնը արձագանքի պես կրկնվում է՝ մի՞թե, մի՞թե արտասվեցիր, արտասվեցիր: Նա ձեռքս մոտեցնում է իր կրծքին ու ամուր սեղմում: Կարծես կարոտած լինի, կարծես կարոտից է արտասվում ու ցավից է լռում, այնքան հոգեհարազատ է ինձ:

Ես սկսում եմ արտասվել առանց պատճառի ու չեմ կարողանում կանգնեցնել հեկեկոցս: Նա ողջ մարմնով կծկվում է, ինչպես փոքրիկը մոր

արգանդում, ու ընկղմվում հողի մեջ, ցնցոտիներով է, բայց զգում եմ, որ շատ հպարտ կեցվածք ունի: Տեսնես ի՞նչն է նրան տապալել, ինչո՞ւ է նա տենչում հողն ու իմ ձեռքը, ինչպիսի՞ն է այն կողմում իր աշխարհը: Պառկելով գետնին՝ ընդունում եմ հենց այն դիրքը՝ իր մանկան դիրքը, ինչպես որ նա: Փակում եմ աչքերս: Նա ժամանակ առ ժամանակ սեղմում է ձեռքս ու ինչ-որ մանկական երգ մրմնջում: Չի խոսում, միայն թափվող արցունքներն եմ զգում մատներիս. նա կարծես հաշմանդամ լինի, բայց՝ հոգով: Ընկղմվում եմ քնի մեջ, ես երազիս մեջ քնում եմ: Հանկարծ վեր եմ թռչում մի ահարկու ձայնից, նա է: Նա նստել է, ձեռքս մոտեցնում եմ, շոշափում իր շուրջբոլորը, զգում եմ, որ թղթեր են, լսում եմ նրա ձայնը՝ լացի ու մի տեսակ նվոցի: Հոգիս կծկվում է, մի բուռ դառնում, օգնել եմ ուզում, փորձում եմ վերցնել թղթերը, բայց ձեռքերս ցեխոտվում են. նրա շուրջը տիղմ է, նա արտասուքից ու հողից ցեխ է կերտել և կարծես ապրում է այդտեղ: Տեսնես ինչո՞ւ է ինձ հափշտակել նրան օգնելու ցանկությունը:

Կրկին զանգի ձայնը զրնգաց այդ ամայության մեջ, ուզում եմ նրան հարցնել, թե ինչո՞ւ չի հետևում զանգի ձայնին, որ գնա դեպի ավելի լայն արահետով: Բայց դեռ բառ չարտաբերած՝ նա, կարծես մտքերս կարդալով, սկսում է շաղախվել ցեխի մեջ՝ մեկնելով ինձ իր ձեռքը: Իր այդ ցեխոտ մատներով սկսում է շոյել դեմքս, ապա իր թղթերից մեկով այնպես հոգատար փորձում է մաքրել ձեռքերիս ցեխը, որոնցով փորձել էի քիչ առաջ օգնել իրեն: Նա ինձ թեքում է դեպի զանգերի կողմը, բայց ես գնալ չեմ ուզում, նա կարծես խնդրում է ինձ գնալ: Ես մեղմ քամի եմ զգում դեմքիս, մաքուր օդը լցվում է շնչուղիներս, այնպե՜ս հաճելի է. խոնավ, անուշ բույր է, թաց տերևների շունչ է: Բնությունն ու հոգիս երկխոսում են: Զգում եմ յուրաքանչյուր միջատի շարժ, թռչունների թևերի թափահարում, աղվեսի խորամանկ հայացք, արջի ծանր շունչ, օձի սողալը խոնավ հողի վրայով: Մեգը կարծես ցրվում է, ես մի ջերմություն եմ զգում, ամպերը մի կողմ են գնում, լույս է ընկնում դեմքիս, ու ականջիս մեջ որսում եմ գետակի խշշոցը: Թարմ խոտի հոտը այնքան բերկրալի է, մեղուների բզզոցը, արևի ժպիտը, մարմինս սկսում է ջերմանալ, ջերմությունը փաթաթվում է ոտքերիս: Աչքերս բացվում են, որոնք կույր էին, աչքերով որսում եմ լույսը, նրա լույսն է դա, ուշադիր նայում եմ նրա մարմնին ներքևից մինչև դեմք:

Մի՞թե դա ես եմ, սա պատրանքի է նման, այդ ինչպե՞ս: Իմ մարմինն է, իմ ձեռքերը, իմ աչքերը. կանգնած եմ ինքս իմ առջև: Մարմինս մի տեսակ սարսռում է այդ տեսարանից: Միայն շնչում եմ իր պես՝ իմ պես: Ցեխի մեջ թաթախված՝ սրբում է դեմքը ու ձեռքիցս բռնած տանում ինձ իր աշխարհ: Ես ոտք եմ դնում մի այլ մոլորակ: Այնտեղ մութ է, քամի, խոնավ, տառապանք, ցավ, դավաճանության հոտ: Մահն է այնտեղի բնակիչը: Տեսնում եմ մարդկանց, ովքեր անցել են իմ արահետով, տեսնում եմ իրեր, որոնք դեն եմ նետել կամ այրել, լսում եմ բառեր, որոնք ինձ սպանել են: Զգում եմ ցավ, որը ինձ քայքայել է. իմ անցյալն է, իմ ամեն միլիմետրի վրայի տառապանքն ու պայքարը չարի հետ: Ամեն ինչ մահացած է այստեղ: Եվ այդ ամենի մեջ կանգնած եմ ես դատարկաձեռն ու ցեխոտ: Այդ բոլորի ցեխն ու տիղմն է, որ հպարտորեն մաքրելով կրել եմ ու էլի կկրեմ: Ու նորից ահա զանգերի ձայնը: Հանկարծ իմ խավարի ընկերը, թողնելով ձեռքս, հեռանում է դեպ լույսի կողմ, հասնելով այնտեղ՝ ետ է շրջվում, ժպտում: Արևը, ընկնելով իր վրա, չորացնում է նրա վրայի տիղմը, այն հող է դառնում ու փոշիանում, քամին տանում է փոշին և ավելի պարզ եմ տեսնում ինքս ինձ: Նա ուղղակի նստում է ծիթենու ծառի տակ ու կարծես սպասում ինձ: Ես փորձում եմ առաջանալ, բայց մթնում է, վազում եմ կույրի պես, միայն զանգի ձայնն է ինձ ուղղորդում: Դիպչում է մի չոր պատի, և իմ ու պատի դիպչելուց կարծես լույս է շողում: Տեսնում եմ հսկայական մի վեհ տաճար, հպարտ կանգնած է, բնության հերոսի պես: Այն մարդու ստեղծած տաճարների նման չէ, բնության ստեղծած է: Մթի մեջ նշմարվում է մի կերպար: Ես զգում եմ քեզ, մա՛մ: Դու ես ու դու էիր զանգերը տարուբերում, ինձ ճանապարհ հարթում: Ուզում եմ գրկել քեզ, մա՛մ: Կլինի՞ գամ մոտդ, մա՛մ:

Դու ձայն չես հանում: Գեղեցիկ բացում ես թևերդ, հրեշտակի պես ու լռությամբ ինձ գիրկդ կանչում, շոյում ես գլուխս ու աղոթում ինձ համար: Այնքա՜ն անուշ է բույրդ, մայրական այդ մանկության անո՜ւշ բույրդ: Սեղմում եմ քեզ կրծքիս: Ուզում եմ մնալ քո տաճարում, մա՛մ, քո մաքուր, անբիծ տաճարում: Դու շրջվում ես ու գնում ներս, լսում եմ միայն.

—Շշշշ, ես միշտ կլինեմ այստեղ:

Երբ հետ եմ պտտվում, տիղմը վերացած է լինում, արահետը մաքուր է ու կանաչ: Ես հայացքս վեր եմ ուղղում .

—Շնորհակալ եմ, մա՛մ:

Փոխարենը դու ինձ արթնացնում ես.

—Հե՛յ, արջո՛ւկ, վե՛ր կաց, օրը ճաշ դարձավ, բավ է քնես:

Ես գրկում եմ արդեն քեզ զգալով և երջանկությունից անխոս ու թաքուն ժպտում: Շնորհակալ եմ, մա՛մ, որ իմ խավարը լույս դարձրիր: Շնորհակա՛լ եմ ուղղակի:

2015

Բարև՛

Բարև՛, սիրելի՛ս: Բարին քեզ ու քո աշխարհին, քո զորավոր սրտին, քո հեռավոր աչքերին, քո փշալարված սրտին: Բազում բարևներ քեզ չեմ հղել: Գուցե լռել եմ սոսկ վախից կամ զարհուրելի անկանխատեսելիից: Քո խելացնոր հայացքում ես կործանվել եմ, քո եռացող արյամբ ես արբել եմ, քո շնչառությամբ ես շնչել ու թունավորվել եմ, բայց բարևներդ անտեսել եմ: Հաճախ է լինում, երբ մտքիս թռիչքը, ժամանակի մեքենայի փոխակերպվելով, տանում է ինձ այնտեղ, որտեղ դեռ տաք են քո մատնահետքերը: Շնչառությունդ, շփվելով թթվածնի հետ, գոլորշի է ստեղծում, և դրա մոլեկուլները աննկատ շարվում են մարմնիս վրա. շնչառությանդ կաթիլներն են դրանք, սահում են մաշկիս ամեն մի միլիմետրի վրայով: Մենք այնտեղ ենք՝ աղմկոտ ու լուռ, անիրական ու իրական: Զատ ենք աշխարհից ու աշխարհիկից, աքսորված ենք անգամ տիեզերքից: Այստեղ կարծես երկրագնդի երկրակեղևից տաշված, աղետների հետ մաքառած, հրաբխից թրծված, մոլեգին քամիներից սերված, հուր կրակից արարված, տաք ու նոր արարչագործված լինենք: Այնպիսիններն ենք, ինչպիսինները չկան այլևս երկրիս վրա: Այստեղ չկա ձգողականության ուժ, չկան մտքեր, չկան ողորմելի սողուն հոգիներ, բացակա են եղկելի մարդկային տեսակները, որոնք ունեն կարիք իրենց ճղճիմ մարդկային տեսակը զտելու ու այն անաղարտ, մաքուր հոգով լցնելու, այլ ոչ թե սուտ, զարհուրելի ու նողկալի, կեղծ խոսքերով

դիմակավորվելու: Այստեղ կան լոկ զգայարաններ, հպումներ, զգացմունքների ցասում, մարմինների տարփանք: Այստեղ անհագ սիրո ցանկությունը զերծ է գծուծ լինելուց: Այն ագահ է, գուցե և ընչասեր: Այն իմն է՝ ներարկված քո գոյությամբ: Ա՛յ թե զգաս, հոգի՛ս, այս անխուժելի անկյունում է խտացված ողջ կյանքիս դողը, խոշտանգված սրտիս անհագ կյանքի ծարավը: Հասնել հոգևոր ներդաշնակության, այն պարուրել կրքով, քո մարմինը միայն գետնանցում է դեպի քո հոգի, որտեղ սողոսկելով ես բռնում եմ անենթակա մի ուղի, որտեղ ես, քո մեջ լինելով, քեզ եմ փնտրում, քո երակներին եմ ձուլվում: Եվ ագահաբար շնչում ենք մեզ հատկացված մի քանի գրամ թթվածինը: Այն մեր թոքերում եռ է տալիս վերերկրային մի ուժով: Այլևս մահկանացու չլինելով՝ ես թափ եմ առնում ու այս անէության մեջ քո մարմնով եմ բարուրվում: Ակնթարթային արագությամբ ագահաբար խլում ես վերջին ուժերս, հոգուս մորմոքն ու ժպիտը միախառնում ես ու ինձ դաջում այնտեղ քո գոյության կնիքով: Քո սրտատրոփ սպասումը հագեցվում է հոգուս հպարտ կեցվածքով: Շուրջբոլորս լռություն է: Անձայն, անշարժ ենք, այլևս ճեղքված ենք սահմաններից, անխոսուն են արդեն օրենքները, որոնք սահմանված են անշիտակ մարդկային գոյությունների կողմից: Նշմարելով քայլերդ, որոնք նմանվում են աննմանի՝ ես հանկարծ սթափվում եմ: Միայն ոչ թե քեզ հետ մղելու համար, այլ՝ խոյանալու դեպի քեզ, ի պատասխան քո սպասված գալստյան՝ հպարտորեն ընդունելու քո համարձակ, տիեզերական, անիրական պատերազմը, հոգիների ու մարմինների մենամարտը, որտեղ ո՛չ ես և ո՛չ դու չենք թագադրվելու իբրև հաղթողներ կամ տիրակալներ: Այնտեղ հաղթանակը ցնծալու է միայն բնության խաղով, այն ողողվելու է ճաճանչով, ցոլք ու փայլով, լցվելու է բազում խազերով, նոտաներով ու ձայնանիշերով՝ քանդակելով մի վսեմ սիմֆոնիա, սիմֆոնիա հոգու և մարմնի, ծննդի ու ռեքվիհեմի, շքեղաշուք հանդիսության պատվին: Այդ մեղսագործ պատերազմից ես տակավին չեմ վախենում: Ահասարսուռ վախերը սողուն հոգիներին են բնորոշ միայն, ես քո գոյությամբ եմ անվախ ու հպարտ քայլում դեպի անխուսափելի պայքարը, որտեղ թե ինձ բիրտորեն դավաճանես, կործանումն անխուսափելի է: Այստեղ մարտը սկսելու համար դրված են երկրածիններին վերից տրված վստահություն կոչված խաղաքարտերը: Ահա այստեղ է, որ դատարկ հողը անգամ սնուցված է քո ոտնահետքով: Քո մարտն է: Լռություն է,

աղետալի լռություն: Հանկարծ մայր բնությունը տարուբերում է այս հողածածկույթը ու կարծես մորը հատուկ օրորում, հափշտակում է ինձ դեպի անհատակ անդունդը, ինչպես Զևսը իր զավակին, մայր բնությունը կուլ է տալիս ինձ:

Մի՞թե վերջ: Այսքանով ավարտվե՞ց ճակատամարտը, թե՞ մեկ այլ կանոններ են արդեն թելադրվում: Գուցե այստեղ միայնակ խաղացողներ են հարկավոր: Ու չկաս դու, ու չկամ ես: Չկա ոչինչ, չկա ոչ ոք: Շշշ… հանկարծ սրտի խփոց, մարդկային մի արտաշունչ, հեռվից մոտեցող ձայնային տատանումներ: Սկսվե՞ց…Այստեղ ամենուր հակառակ հոսք է, և անճշմարիտ է թվում ամեն բան, սակավ է կենդանությունը: Ամեն ինչն է քարացած ու անշարժ՝ կրկին ու կրկին դրոշմված սպասման կնիքով: Բոլորն են անհամբեր: Ինչ-որ կարևորի, հզորի, գալստյան սպասման մեջ են: Ի՞նչ է դա կամ ո՞վ է նա, գալո՞ւ է արդյոք: Հարցեր միմյանց նման, բայց և տարբեր, տարբեր քեզ պես, քո պատասխաններին հատուկ:

Մյուս կողմում նորից անհիմն բարբաջանքն է կրնկակոխ հետևում ինձ: Անտեղի խոսքեր, անպատեհ խառնաշփոթ, անիրական գործողություններ: Սա էլ ահա մեկ այլ հոսք է, այլ անջրպետ, մի այլ աշխարհ՝ լցված լիությամբ և աղմուկով, ապրած-չապրածով, հորիզոնում նկատվող մահամերձ ծառերով, բույրից քամված ծաղիկներով, զարհուրելի նպատակներով, ու հանկարծ նորից ինքը՝ ահռելի հզոր ձգողականության ուժը, այդտեղ էլ է կուլ տալիս իմ իրականությունը, իմ մարմինը: Այն նմանվում է քաղցած, սարսափելի մի հրեշի: Շշշշ…

Ու կրկին այդ լռությունը. բնությունն է կանխատեսել այդ բախումը, և հանկարծ աղքատ հողի տակից կարծես արարչագործման սկզբունքով, հանճարեղի ձեռքով ճաք է տալիս հողը, աղմուկը տարածում անծայրածիր երկնակամարով, ու ծիլ է տալիս իմ երիցուկը, այն փթթում է, մեծանում, ակնթարթային արագությամբ ազատ տարածությունը ողողում իր եդեմական բույրով: Ահա այդ աշխարհում է իր վերջաբանին մոտենում այն պայքարը, որը հորինել էր բնությունը: Մեկ ծիսակատարությունը կարծես բավ չէ այս հաղթանակի համար, այստեղ ծափահարությունների միլիարդավոր տարափն էլ է աղքատ թվում: Չէ որ վստահություն կոչվածը չկործանեցիր, չհաղթեցիր, բայց և պարտված էլ չես, դու՝ իմ վեհ հոգով օժտված տիեզերորդի, դու՝ իմ հպարտության

մեղավոր: Այստեղ ամեն բան զրկված է օրենքներից, ներդաշնակ է անգամ քաոսը, որը հանճարեղ կտավի սկիզբն է հուշում: Բնությունը դեռ շարունակում է ցնծալ, ոսկեդեղնավուն արտերն են պարում, երբ մոտենաս դրանց, ամեն մի թուփը քեզ իր պտեմը կշշնջա, և գուցե կհափշտակվես նրանց լալագին երգով: Ահա մի ճանապարհ էլ, ոլորված ու մխրճված երկրագնդի սրտի մեջ, որը տանում է դեպի ահռելի խորություն ունեցող հրաշագեղ ծով: Կա սպասում, կրկին սպասում, մի փոքր էլ ու այն կտանի կործանման: Եվ մենք կգահավիժենք դեպի անծայրածիր անծանոթը: Մոտենում է մարմնիդ գոյության ձայնը: Լսում եմ, թե երակներիդ մեջ ինչպես է վազում տաք արյունը, ինչպես է մաշկդ հպվում տերևներին ու աննկատ քերծվում: Քայլերդ արագանում են: Գալիս եմ դեպի քեզ՝ շնչելով քո բույրը, ասում են՝ մարդն արարվեց հողից, դա էր սկիզբը, և ահա քո սկզբի հոտն եմ զգում, դրանք լցվում են շնչառական օրգաններիս մեջ՝ հաղորդելով զգայարաններիս, որ ավելի արագ քայլեմ: Ու վառվում է հողածածկույթի ամեն մի թուփ, որի վրայով ձգտում ենք հասնել մեկմեկու: Մոլեգնում է հրդեհը, ավելի՜ արագ շտապիր, ևս մի քանիսը՝ քայլ մեկ, քայլ երկու, քայլ երեք ու բո՜ց, փա՜յլ, լո՜յս ծաղիկների համար, քամի արտերի համար, թթվածին բնության համար և փոթորիկ ծովի համար: Մեր միաձուլումը շնորհ էր: Այն տվեց բնության ամեն մասնիկին այն, ինչի կարիքը նրանք ունեին: Եվ խելագարված ծովը կատաղի ծափ տվեց, կենտրոնում բարձրացնելով մեզ, ծանոթացրեց ամպերին: Մենք լցվեցինք մեկս մյուսով: Այս անգամ հավերժությունդ հոգուս մեջ ես փորագրում: Փոթորկոտ քաոսի մեջ այսքան թվաբանական ճշգրտություն, այսքան շքեղաշուք համադրություն. ա՜յ թե հանճարեղները ինչեր են տեսնում: Եվ քարացավ ակնթարթում ամեն ինչ: Ամեն ուր անշարժություն է, այլանդակ մի լռություն: Եվ աչքեր երկու զույգ, նորածնի պես մերկ երկու մարմին, երկու զույգ ոտքեր ու ձեռքեր, մարմիններ գալարված, ոլորված, միմյանցով ողողված ու թաթախված կրքով երկու մահկանացու. այս երկուսն են կառավարում բնության շարժը:

Ավա՜ղ բնության հետ համահունչ չեն մյուսները, շեղված են, կորած են նոտաները, քանզի նրանք լուռ են, երբ քաոս է շուրջը և ամեհի են, երբ անհաղորդ է բնությունը: Եվ ահա վերջ, այս հանճարեղ գլուխգործոցը վերջանում է, մարմինների ձուլմամբ հավասարեցնում մնացած

անհավասարությունը, մեկընդմիշտ հանդարտեցնում հող ու ջրի, ծաղկի ու կենդանիների ըմբոստացումը: Այդ երկուսով է ուղին դեպի ճշմարիտ ավարտը, ավարտ որտեղ սկսվելու է արդեն նվաճված հոգիների միաձուլումը:

Ահա և զգում եմ այն, ինչ չեմ զգա էլ երբեք, դու էլ չես տեսել երբեք: Դուրս ենք գալիս նյութեղեն գոյությունից, և ամեն թուփ, ամեն մի ծիլ զգեստավորում է մեզ մի վերջին անգամ, մայր բնությունը մի վերջին անգամ մեզ օրորում է: Այս անգամ կուլ է տալիս արդեն երկուսիս, տանում այնտեղ, որտեղից ամեն բան սկսվել էր, որի վերջը մյուսի ծնունդն էր: Այդ անհավանական բնության շքերթից բնությունը երկուսի հոգին արարեց մեկը:

Աչքերս ծակում է մի վառ լույս, մարդիկ են գնում ու գալիս: Կրծքիս վրա ջերմություն եմ զգում, հայացքս իջեցնում եմ, անուշ քնած ես, մատղաշ մատիկներդ բռնում են մատներս: Բացելով աչքերս՝ մաքուր, զուլալ գոյությանդ բարևն է շոյում ականջս:

Բարև՜, փոքրի՛կս...

Գաղտնի ընկերը

Գաղտնիքներ, երազանքներ, մտորումներ դեսից դենից: Ո՞ւմ են պետք դրանք, երբ բնակության վայր չունեն, երբ չկան դրանք իրականացնելու տարբերակներ և, ինչու չէ, հնարավորություններ:

Իմ հարազա՛տ անծանոթ, իմ աներևո՛ւյթ իրականություն, իմ չբացահայտված բացահա՛յտ հավատ: Այո՛, քե՛զ եմ ես գրում: Ինձ դու բնավ չես ճանաչում: Քո երփներանգ գույներում անգամ ես չկամ: Այս կեղծ ու շինծու ամբոխի մեջ ես մնում եմ քո տեսադաշտից աննկատ: Ես հանգրվանում եմ այնտեղ, բայց և դեպի վերջն եմ գլորվում, անխուսափելի ավարտին եմ մոտեցնում մարմինս ու հոգիս: Մինչ այս ես

կուզեի ասել, թե ով եմ ես. ես ախր այլ հասցեի բնակիչ եմ, այն հասցեի, որտեղի բնակիչները դուրս են ամեն տեսակ նյութեղենից, որոնց աշխարհն այլ է, ովքեր մարդկային օրենքներով չեն շնչում, ովքեր այդ մարդկայինը արտաշնչում են միայն…

Մի պահ երբ մտորում էի գրել քեզ այս նամակը, թե ոչ, մտքիս առագաստը ինձ տարավ հեռու հորիզոնից այն կողմ, որտեղ անվերջություն է, օրորեց իր գրկում ու ստիպեց ճախրել դեպի վեր, տարավ ինձ այնտեղ, որտեղ ես ընդամենը մի կետ եմ ընկալվում: Դու ամեն անգամ ամեն գրքում կետ տեսնելիս կամ նոթատետրումդ կետ դնելիս միշտ կհիշես ու կվերապրես գոյությանս փաստը: Դու երևի մոռացել էլ ես իմ մասին, այո՛, այո՛, հաստատ մոռացել ես, ես այդ գիտեմ, այդ է պատճառը, որ նորովի եմ ծանոթանում հետդ իբրև անծանոթ: Ես կետ եմ մեծ, սև կամ սպիտակ թղթի վրա, մի հուշ, մի հետք, ով եկավ ու գնաց, ում կանչեցիր, բայց չդիմավորեցիր, ով խոսեց, բայց ում չլսեցիր, ով լռեց, բայց ամենը պատմեց: Չէ՛, բնավ մի խուսափիր կարդալ այս նամակը, որը հասցեագրված է միայն քեզ: Ու խորհիր, փորձիր հասկանալ և մի զարհուրիր ընդունել իրականությունը, մի կասկածիր, թե գուցե այն սխալմամբ է հասել քեզ: Ո՛չ, հարգելի՛ս, այս թանաքի ամեն կաթիլը գրված և արարված է քեզ համար:

Ահա այստեղ դու կասես Աստված, Աստվածն է միայն արարում, գուցե և ճշմարիտ ես դու, բայց քո այդ սկզբունքների հորձանուտում դու մի օր, վստահ եմ, ամեն բան կհասկանաս, կհասկանաս, որ Աստված յուրաքանչյուրիս մեջ է, և յուրաքանչյուրս ենք ի զորու արարել:

Ինչևէ, դու ամբոխ ես, ես անզոր եմ քեզ հակառակվել, քանի որ քո ցածրության մեջ դու հզոր ես, ու ես անխտիր կպարտվեմ, քանի որ անմաքուրի օրենքներին անծանոթ եմ, և այդ պարտությունը ինձ այնքան հաճելի կլիներ:

Բայց կա մեկը, ով մնացել է ինձ ճշմարիտ ընկեր, սրտակից և հոգեընկեր, նա այնտեղ է, որտեղ կետերն էլ վաղուց կորցրել են իրենց գույնն ու նշանակությունը:

Ե՛կ նորից ես ծանոթանամ քեզ հետ, ես չէ որ կարոտում եմ այն, ինչը այդպես էլ երբեք չունեցա, ծիծաղելի է չէ, կարոտել այն, ինչը երբեք չես

ունեցել։ Ինչևէ, այդպիսինն եմ ես արարվել ու այդպիսինն եմ ես դեռ ժամանակների սկզբից։

Քո գոյությամբ ու բացակայությամբ դու ինձ քոնն ես ներարկում, որ ապրեմ, որ շարունակեմ ապրեցնել։ Անարդար կլիներ իմ կողմից քեզ չծանոթացնել ինձ հետ, չէ որ դու սովորեցնում ես զտվել, սովորեցնում ես լուսել, շարժվել, ճեղքել անդունդները, բացել ճահիճները։ Դու այնքան բան ես սովորեցնում, ինչպես քեզ հետ չծանոթացնեի ինձ, ինչպես կարող էի իմաց չտալ քեզ, որ ես կամ, որ ամբոխի մեջ կա մի կետ, որը դեռ չի խզբզվել։ Չէ որ դու թույլ ես տալիս ճախրել այնտեղ, որտեղ արգելված է անգամ քայլել, այնտեղ, որտեղ կան ելևէջներ ու լեփ-լեցուն իմաստուն երևույթներ։

Իմացած եղիր՝ դու երբեք չես եղել մոռացված, ես ընկել եմ, խոնարհվել եմ, սողացել, քրքրվել, քերվել ու բզկտվել եմ, բայց քեզ չե՜մ մոռացել։ Այս էր քո նվիրած հանրագիտարանը, այն ես սիրով ընթերցել եմ։ Այն թերթելիս մատներս ու աչքերս այրվել են, բայց վերջին տողերում ինձ վերածնված եմ գտել։ Ամեն ժամ ու ակնթարթ իմ մեջ արթնանում է կորով գոյատևելու այս վերացող հասարակության ճյուղերում, ամեն անգամ անունդ բարձրաձայնելիս մայր բնությունը կարծես շնչում է։ Բա էլ ոնց ես չգրեի քեզ այդ մասին, գուցե դու չգիտեիր, դրա համար էիր ինձ թողել մենակ։ Իմ էությունը, որը հենց քո էությունն է, դու կբացահայտես իմ այս համեստ տողերում ու երբ ես հոսանքի հարվածի պես մարմնովս զգամ, որ դու քո ոչ երկրային հայացքդ հառել ես իմ այս անիմաստ պայքարին, որտեղ ինքս իմ դեմ եմ մարտնչում, այդ ժամ ես կժպտամ, հա՜, իսկական ժպիտով կժպտամ. դու ինձ տեսար։ Քեզ եմ ուղարկում իմ փակ ու պակասավոր գոյությունը, որ դու մտաբերես ինձ, գոնե տեսնես, որ ես կամ, որ շնչում եմ դեռ։ Կուզե՞ս քեզ ուղարկեմ իմ կետավոր անձնագիրը կամ իմ չարցունքներում թաքցրած երազանքներն ու այդպես էլ չընթերցված հեքիաթները։ Լավ է հիմա ես փոշիանամ, մերձանամ օդ ու ջրի, կրակի ու հողի հետ, այս տարերքները ամեն ուր են, այդպես քեզ մոտ լինելս ավելի է հավանական։ Ու եթե մի օր դու կարոտես իմ թանաքի գույնին, ինձ հարվածիր կամ ուղարկիր քո այն ցավոտ հանրագիտարաններից, ես կվերցնեմ, ես այն հպարտորեն կկրեմ, որքան էլ որ այն ծանր լինի, ես այն կփոխանցեմ մարդկային ուղեղանյութերին։

Ահա և վերջ իմ այս թափանցիկ օրվա խաղաղ մենախոսությանը, որը հասցեագրված էր քեզ ու այսօրվա մի քանի տողն էլ էր քոնը, իմ իրական գաղտնի ընկերոջ պաշտոնն էլ, իմ ծննդյան ու մահվան օրերն էլ, իմ բարկությունն ու ուրախությունն էլ, իմ սերն ու լույսն էլ քոնն էր, միա՛յն քոնը, իմ ճշմարիտ ու մաքուր սիրո կրո՛ղ, ի՛մ Աստված:

Երկաթյա ընկեր

Հետաքրքիր ծանոթություններ շատ չեն եղել իմ կյանքում, հակիրճ պատմեմ մեկը դրանցից:

Օրերից մի օր, երբ արևը նոր էր քնում, ես մի երազ տեսա, երազում ես մեգի մեջ էի ու այնտեղ ես ինչ-որ գորշ պատկեր տեսա: Լավ չեմ հիշում, թե ինչ պատկեր էր, բայց հիշում եմ, որ ահասարսուռ էր այդ տեսարանը: Այդ պատկերը ամեն րոպե վայր էր ընկնում ու նորից վերածնվում: Կարծես դժոխային մի պատիժ՝ ես նորից ու նորից նույն տեսարանն էի տեսնում: Արթնացա, երբ արևը արդեն ծնվել էր, որոշեցի ցրել մտքերս, բարևեցի բնությանը, գրկախառնվեցի եղանակի հետ: Հանկարծ հիշեցի, որ վաղուց եմ երազել գնացք նստել, ոտքերս ակամայից տարան ինձ կայարան: Ծիծաղելի է. ես անգամ չգիտեի՝ ինչպես և որտեղից գնեմ տոմսը: Բայց մի կերպ գլուխ հանեցի, հազիվ հասա գնացքին ու քիչ էր մնում բաց թողնեի այն: Երբ այն ինձ ընդունեց իր հարկի տակ, ես հանկարծ կրկին վերհիշեցի երազս, այն պատկերը, վերհիշեցի, ու մարմնովս սարսուռ անցավ, նոթատետրս հանեցի և գրեցի մի քանի տող, որը դարձավ ճակատագրական: Ի՞նչ տողեր էին դրանք և ո՞վ ինձ թելադրեց այդ տողերը, ինչո՞ւ թելադրեց:

Ահա ես գնացքի մեջ եմ, այստեղ մեծահասակներ են, երեխաներ, վա՜յ այս երեխաները, ի՜նչ չարաճճի են այս փոքրիկ հրեշտակները: Ամեն բան կենցաղային էր: Մի կին երեխային կաթ էր խմեցնում, երեխան մոր գրկում այնքան գեղեցիկ էր ընկղմվել, այդ տեսարանը մնաց մտքումս, մտածեցի, որ մի օր կսովորեմ նկարել ու անպայման կհանձնեմ թղթին այդ հոգեվիճակը: Ես նստեցի պատուհանի մոտ: Դուրս նայեցի, ամեն րոպե փոխվող պատկերներ էին, կարծես ֆիլմի կադրեր լինեին: Երբ

ավելի խորացանք անտառի միջով, պատկերները սկսեցին կրկնվել, ու ես կրկին անհասկանալի արագությամբ վերցրի իմ նոթատետրն ու սկսեցի գրել։ Այդ կրկնվող պատկերնեը ինձ նորից գիշերվա մղձավանջս հիշեցրին։ Նորից գիտակցեցի, որ պետք է մոռանամ։ Փորձեցի շեղվեմ։ Չը՛խկ-չը՛խկ-չը՛խկ, գնում է գնացքը՝ իր հետ տանելով մարդկանց, գնում է և կարող է փոխել ուղղությունը, եթե անգամ շատ ուզենա, քանի որ նրա ճանապարհը մարդն է նախապես արդեն գծել։ Նրա ճակատագիրը վաղուց է որոշված։ Այդ ժամանակ ես մտածեցի՝ տեսնես մերն էլ է այդպես, մեր ուղին էլ է նախապես գծված։

Ի՞նչ տխուր է գնացքը, բանտարկված գնացքը։ Ես առաջին անգամ հանդիպեցի նրա հետ, ով այդ երեք ժամում դարձավ իմ ընկերը։ Մենք հանդիպեցինք փաստորեն շատ պատահական, բայց և նախապես որոշված ուղիներով, նա ինձ սկսեց պատմել իր վագոններում մաշված կյանքերից, իր հյուրերի մտորումներից։ Մենք մտերմացանք, երբ ես կարողացա նրա հետ լռել իր ցավի մասին, երբ կարողացա երկու կես անել նրա երկաթյա տխրությունը։ Հասկացա, թե ինչ անտանելի է միշտ կրկնվող ուղին, միշտ լսել ուրիշների ցավն ու տառապանքը՝ չունենալով քոնը։ Անցնել գեղատեսիլ ու հիասքանչ բնության արարած անտառների միջով ու չվայելել այդ ամենը։ Լինել այդ ամենի մեջ լոկ երկաթե մի կտոր, ով տեղափոխում է մարդկանց և դառնում համալսարան չավարտած մարդաբան։ Մի տեսակ նմանություն գտա իմ ու նրա միջև։ Մենք միասին ճանապարհ անցանք, լռեցինք ու աղմկեցինք։ Նստարանի անկյունում մի պատկեր նկատեցի, սարսուռ անցավ մարմնովս. իմ երազի պատկերն էր։ Ինչ-որ մեկը այդ պատկերը փորագրել էր վագոնի պատին։ Ես շփոթվեցի, բայց և հանգիստ էի։ Ես ջերմություն զգացի, վերցրի ու գրեցի էլի մի քանի տող նոթատետրումս։ Լռակյաց էր իմ երկաթյա ընկերը, այնքան լռակյաց, որ ես քնեցի, այն մռայլ երազը դեռ շարունակում էր ինձ հետապնդել։ Այս անգամ պատկերը դեմք ուներ։ Ես հիշում եմ միայն, որ վեր ելա շատ ուժեղ սուլոցից, ազդանշան էր, որ գնացքը տեղ է հասել։ Ես փորձեցի մտաբերել այդ դեմքը, փորձեցի գտնել այդ թվերի իմաստը։ Մոտեցա գնացքի աստիճաններին ու նորից նայեցի այդ փորագրված պատկերին ու մեղմ ժպտացի, վերցրի հեռախոսս և ուղարկեցի արդեն իսկ մշակված նամակը։ Իմ երկաթյա ընկերը դիմավորեց ինձ՝ շփոթվածիս, և ճանապարհեց արդեն ժպտացողիս։ Ես սկսեցի ավելի գնահատել այն

մարդկանց, ովքեր լուռ են ու չեն տենչում մարդկային թվացյալ ընկերություն: Իմ երկաթյա ընկերը ինձ թույլ տվեց կրճատել անցյալս և հասկանալ երազիս միտքը, գտնել նրան, ահա իմ առաքելությունը: Սթափվեցի, երբ հեռախոսս ձայն արձակեց, դա նրա պատասխան նամակն էր. «Ես էլ ձեզ էի սպասում, տեսեք լա՞վն է այս նկարը»: Նկարում երկաթյա ըկերոջս ու մշուշոտ երազիս պատկերն էր:

Ժպտացի կրկին և ուղղելով կեցվածքս՝ ոտքս դրեցի մի նոր իրականություն:

2020

Լույսեր

Ի՞նչ է ներկայացնում իրենից այս ծրագիրը: Այն ընդամենը մի քանի շաբաթում ձեզ կծանոթացնի իրական լույսի շեմ մտնելու ուղին, որին հասնելու համար պետք է ընդամենը ունենալ առողջ մտածելակերպ և կամք: Ես հակիրճ կպատմեմ արդյունավետ լուծումների և ճանապարհների մասին: Դրանք եկեք անվանեք լույսեր, որոնք պետք են ձեզ երջանիկ ներկան և ապահով հոգևոր ապագան ամրապնդելու համար: Եթե պատրաստ եք լսել, ընկալել և իմ ձեռքը բռնած անցնել բոլոր այդ լուսավոր ուղիներով, ապա դուք կստանաք լուսավորության առաջին պարգևը: Դա բնականաբար տեսանելի է լինելու թե՛ ձեր կենցաղում և թե՛ ձեր մարմնի վրա: Դուք անցյալին այլ կերպ եք նայելու, շատերի մոտ կստացվի անգամ արմատապես ջնջել անցյալի ցավոտ ու գուցե տգեղ հիշողությունները: Ոմանք արտաքինում կտեսնեն փոփոխություններ, ոմանք էլ կդառնան լույսի գլխավոր կրողը, որտեղ խտացված կլինի տիեզերական ուժը: Աշխարհը բնավ այն չէ, ինչ տեսնում ենք, աշխարհն այն է, ինչ զգում ենք: Դե՛ ինչ, փոխենք մեզ, սկսե՞նք լուսել, եթե այո, ապա տիեզերական փա՛ռք ձեզ: Գնացինք:

Նախ և առաջ խոսելով լույսի մասին՝ դա նույնն է, ինչ ճառագայթը, պետք է իմանալ, որ մենք գործ ունենք նյութի միջոցով կյանքի

վերափոխման և այդ նյութից հոգևոր բարձր արժեքի վերափոխման հետ: Այս կապը երբ հասնի կատարելության, և դա բնավ անհնարին չէ, դուք կզգաք աստվածայինի լույսը, իրական լույսը ձեր մեջ:

Իմ լույսերը Երրորդության ամենաառաջին դրսևորումներ են՝

- հոգի
- գիտակցություն
- ձև:

Մենք գիտենք, որ Հոր, այսինքն՝ Հոգու և մոր, այսինքն՝ նյութի արդյունքում էլ հենց առաջացել է լուսավոր հոգին: Հոգին հենց այդ աստվածայինի մասնիկն է, դրա առաջին և միակ զավակը: Յուրաքանչյուր մարդ փոքրիկ նմանակն է ողջ ծրագրի, որի մշակմանն ու մաքրմանն էլ ուղղված է իմ այս աշխատանքը: Նախ պետք է ծանոթանալ, թե ինչ ես դու կամ ով ես դու: Ուստի հակիրճ կներկայացնեմ յոթ լույսերը.

ա. հզորության և կամքի պատասխանատու լույս

բ. սիրո և իմաստության պատասխանատու լույս

գ. ակտիվ մտածողության պատասխանատու լույս

դ. հարմոնիկի, գեղեցիկի և արվեստի պատասխանատու լույս

ե. հստակ գիտության և իմացության պատասխանատու լույս

զ. հավատարմության և իդեալիզմի պատասխանատու լույս

է. կանոնակարգված արարողակարգի պատասխանատու լույս:

Ապրելով այս լույսով՝ պետք է նկատի ունենաք, որ այսպիսի կյանքը արտահայտում է սիրելու կամքի զորությունը: Շատերը կհարցնեն, թե ինչ է դա նշանակում. սա անմնացորդ սերն է, որը ունի կանոնակարգված սխեմա: Սա բնավ այն սերը չէ, որը դուք մինչ այս կարդացել եք այլ գրքերում: Սա իրականում բարդ, շատ բարդ և միևնույն ժամանակ շատ հզոր ուժ է իր մեջ պարունակում: Դրա դրսևորումներից առաջինն է՝ սիրել նախ և առաջ ձեր հոգին, հոգին հենց Արարչի լույսն է ձեր մեջ, որը եթե չկարողանաք ճիշտ ընկալել, երջանիկ լինելը բարդ կլինի: Իրականում երջանկություն է սիրել ձեր հոգին և ոչ թե լինել էգոիստ: Դրանք տարբեր

են: Եթե ապրեք հզորության և կամքի պատասխանատու լույսով, ապա դա նշանակում է սիրել անձին, այլ ոչ նրա սերը դեպի ձեզ: Տեսեք՝ շատերն են սիրում ու պահանջում սեր իրենց կողակցից, դա սեր չէ, դա ցածր էներգիա է (ժամանակը կգա, ինքներդ կհասկանաք): Եթե անգամ դու սիրում ես ու փոխադարձ չես զգում նրա սերը, դա չպետք է ազդի ձեր սիրո վրա: Այդ սերը ձեզ է պետք և ո՛չ իրեն, հասկացե՛ք վերջապես: Երբ գիտակցված գնաք այդ ուղով, դուք չեք տառապի:

Ակտիվ մտածողության պատասխանատու լույսին տիրապետելը այն քայլն է, որը ձեր սերը, անկախ վիճակից և սիրո օբյեկտի քայլերից, միշտ մնում է անփոփոխ: Ինչո՞ւ, նորից կհարցնեք, քանի որ այդ սերը սնում է ձեր հոգին: Այն յուրօրինակ արեգակ է ձեր ներարեգակնային համակարգում, որը պետք է լուսավորի մոլորակներին: Պատկերացրեք, եթե ամեն առիթով մեր Արեգակը մարեր, մենք գոյություն չէինք ունենա, ահա այդպես էլ ձեր սերն է: Օրինակ՝ մեր մոլորակը պատկերացրեք ձեր սիրո օբյեկտն է, մարդիկ՝ նրա քայլերը: Ինչքան վատ բաներ ենք մենք արել. մոլորակն էլ ենք աղտոտել, ամեն ինչ փոխել ենք, հեռվացել ենք, բայց Արեգակը մնացել է և շարունակում է մնալ: Ահա այդպես էլ պետք է ձեր սերը անխախտ լինի: Հետևաբար սիրո օբյեկտ իրականում ընտրում են:

Ես կհերքեմ մինչ այս գրված ու չգրված օրենքները և պաթետիկ խոսքերը: Ժամանակն է վերջ դնել տանջանքին և սովորել սիրել վերերկրային, այլ ոչ հիստերիկ սիրով: Բայց այստեղ կա մի փոքրիկ խնդիր. դա հենց սիրո օբյեկտ գտնելու խնդիրն է, որը իրականում դուք փնտրելու եք ձեր մտահորիզոնի զարգացվածության չափով: Եթե օրինակ դուք այդքան էլ հոգեպես բարձր կրթված չեք, ապա դժվար թե ձեզ հանդիպի մարդ, ում հետ կկարողանաք զարգանալ և հասնել լուսավորության բարձր կոչման: Ի՞նչ է նշանակում հոգևոր կրթվածություն: Սա նախ և առաջ բացարձակ անկեղծությունն է, գիտակցված հավատարմություն և ոչ թե ստիպված: Կրկնում եմ՝ սա ոչ թե դուք անում եք տվյալ մարդու համար, այլ հենց ձեզ համար, որպեսզի եթե անգամ ձեր ներկայիս կողակցի հետ երջանիկ չեք, կարողանաք հասնել այն որակավորման, որ գտնեք այն միակին, ում հետ կկարողանաք փոխել աշխարհը: Ես արգելում եմ ստել անգամ ինքներդ

ձեզ: Դուք պետք է մաքսիմալ անկեղծ լինեք առանց որևէ վախի, բայց սա չի նշանակում ազատություն տալ մարմնին: Մարմինը անոթ է, որը մաքուր է պետք պահել:

Հաջորդը վերաբերում է մարդկանց բարևելիս համբուրելուն: Ես կատեգորիկ դեմ եմ այդ սովորությանը: Դա էներգիայի փոխանակում է, և եթե դուք չեք տիրապետում կանոններին, ապա արգելում եմ բարևելիս գրկախառնվել կամ համբուրել: Սա շատ նուրբ հարց է: Գիտեմ՝ շատերդ դեմ կլինեք, բայց սա է ձեզ նոր, հոգևոր բարձր կետի հասցնելու, դուք պետք է լինեք մաքուր մտքով, մարմնով և հոգով: Մի՛ խաբվեք ներկայիս ինտերնետային անհասկանալի գովազդներին, որտեղ չգիտես ինչեր են սովորեցնում: Դուք ուզում եք լինել հոգեպես լիարժեք, ուրեմն եղեք: Մի՛ եղեք այս դարի մոդայի պես: Ի՞նչ է նշանակում թքած ունենալ: Սա ուղղակի աբսուրդի հասնող գովազդ է, սա արվում է մի նպատակով, որ դուք չսովորեք սիրել և բաց թողնված, դատարկ մնացած սերերը օգտագործեն իրենք: Արարչագործման ծրագիրը պետք է վերականգնել և չպետք է էգոյի տակ թաղել իրականը և ուժը, որը դուք կստանաք, եթե սովորեք լուսել:

Ցանկացած հզոր պետության հիմքում ընկած է գիտակցված կամ չգիտակցված այս լույսերից որևէ մեկի դրսևորումը: Շատ դեպքերում կան մարդիկ, ովքեր առանց տեղեկանալու արդեն իսկ ունեն այս լույսից գոնե մի մասնիկ, բայց դա հիմնականում չմշակելու արդյունքում կարող է դուրս գալ հենց այն կրողի դեմ: Այս լույսի զարգացումը ընկած է կամքի ուժի զարգացման վրա: Տեսեք՝ սիրո լույսը հենց այն հենարանն է, որտեղ կարող է զարգանալ հզորության լույսը: Երբ ձեր կյանքում ամեն ինչ շատ վատ է, դուք ունեք հնարավորություն զարգացնել այս լույսը: Միայն շատ վատ հոգեվիճակում է հնարավոր որսալ այս լույսի զարգացման ուղին: Սա նշանակում է, որ տիեզերքը ձեզ ընդունում է իր դպրոց և ձեզ մտորելու առիթ է տալիս: Բայց մտորելը դեռ շատ քիչ է, դուք պետք է կամքի ուժ ցուցաբերեք: Այստեղ կարող է փորձության ենթարկվել ձեր սիրո լույսը: Յուրաքանչյուր վատ էներգիա սնվում է թուլությամբ: Դուք պետք է պարզ ու թափանցիկ լինեք նախ և առաջ ինքներդ ձեր հանդեպ: Շատ հնարավոր է, երբ մտածեք, թե սերը ձեր թուլությունն է, դուք զրկվեք հզորություն ստանալու հնարավորությունից: Սուտ են բոլոր խոսքերը, թե

սիրելը թուլացնում է: Դա արվում է, որպեսզի ձեր մեջ չզարգանան մյուս լույսերը: Տեսեք, այսպիսին է սխեման՝ եթե մուտք գործեք գոնե հզորության և կամքի լույսի շեմ, ապա արդեն դուք կունենաք մեծ ուժ, ահա թե ինչու են մարդիկ միշտ տանջվում սիրո լույսի պատճառով, որովհետև դա հզորության և կամքի լույսին հասնելու ուղին է, և վատ էներգիան ամեն ինչ անում է ձեզ շեղելու համար: Բայց քանի դեռ դուք ինձ հետ եք, ոչ մի բան անհնարին չէ: Տիեզերքը հիմնված է աստվածային հավասարության հիմքի վրա, և դա հենց դուք եք: Մենք պետք է կարողանանք զարգացնել բոլոր լույսերը, որը ամենաբարդն է: Նախ այն մարդիկ, ովքեր ունեն կախվածություն, բոլորդ լայն բացեք ձեր ականջները, ես չեմ հավատում ձեզ, թե դուք չեք կարողանում ձեզ վրա: Ես ունեմ հիմքեր. ինչքան էլ խորը լինի այդ կախումը, հնարավոր չէ ինձ համոզել, թե չկա ելք, դուք պարզապես ցածր որակի եք սովոր: Դուք սիրում եք լինել քռեքաշ և զոհի դերում: Ես ունեցել եմ կախման օրինակ և ընդամենը մեկ օրում ազատվել դրանից: Դրա համար ինձ հարկավոր է եղել ընդամենը զարգացնել իմ հզորության և կամքի լույսը: Այսպես՝ նախ նստում եք ուղիղ և շատ հանգիստ, մենակ եք լինում սենյակում և ձեր դիմաց ապակե բաժակով ջուր եք դնում, ուշադիր նայում եք ապակե բաժակին և այնտեղ մտովի նկարում երեք օղակ, այնքան եք նայում այդ բաժակին, մինչև կարողանաք այնտեղ մտովի լցնել ձեր կախվածությունը: Բայց սա մեկ անգամ եք անելու և ոչ ամեն օր կամ քայլ առ քայլ: Չկա նման բան, ամեն ինչի կարելի է հասնել միանգամից: Քայլ առ քայլ հասնելը թույլերին է հատուկ, և սուտ կանոններ են դրանք: Ժամանակ չունենք, հարգելինե՛րս, մոտավորապես մեկ ժամվա գործընթաց է: Այնուհետև երբ այդ ջրի մեջ լցված կլինի ձեր կախվածությունը, դուք այն մեկ շնչով պետք է խմեք: Հավատացած եղեք, այստեղ կվերջանա ամեն ինչ, և դուք կստանաք իրավունք օգտագործել և կառավարել հզոր լույսերից մեկը: Այս մեթոդը մանրակրկիտ մշակված ու փորձարկված է իմ կողմից: Եթե չի ստացվի, դա նշանակում է, որ դուք հետագա լույսերին արժան չեք: Այո՛, ամեն ինչ ինձ մոտ խիստ է:

Եթե ցանկանում եք լուսավոր ապագա, ապա պետք է այս կամքի և հզորության լույսը անցնեք, բայց ոչ ստիպված, այլ՝ ցանկանալով: Այս լույսը իրականում ոչնչացման եզրին է, և միայն այն հաղթելուց հետո դուք կկարողանաք անգամ հզորության շերտը ցուցաբերել առօրյայում:

Ամենադժվարը այն կտրվի «նարցիզներին»: Այս մարդիկ պետք է կարողանան ազատվել էգոիզմի վատ դրսևորումից և էգոն ընկալեն որպես աստվածայինի հիմք, այլ ոչ թե սեփականաշնորհեն: Դուք բոլորդ մահկանացուներ եք, բայց ունեք հնարավորություն հրեշտակայինի հասնել: Բարդ է թվում, բայց դա ուղղակի թվում է: Եթե օրինակ դուք վախենում եք կամ զղջում սիրո լույսը տալ կամ զգալ, ուրեմն դուք կործանված ադամորդի եք, քանի որ այս լույսի հիմքը հենց սիրո լույսն է: Դուք ձեր շուրջ հավաքել եք այն, ինչը ցանկացել եք: Ո՛չ մեկ, բացարձակ ոչ մեկ պատասխանատու չէ ձեր կյանքի խնդիրների համար, հատկապես սա լսելուց հետո, քանի որ երբ դուք տեղեկացված չեք և սխալվում եք, դա դեռ ոչինչ, բայց ա՛յ տեղեկացված լինելը և նորից կեղտի մեջ մնալը արդեն աններելի է: Այդ դեպքում դուք նորից կհափշտակվեք վատով: Դուք ներքին կամք պետք է դրսևորեք: Ոմանք երեխա են ուզում ունենալ, որ «ընտանիքը պահեն» կամ տղամարդուն իրենց կողքը պահեն (դուք անխե՞լք եք, ձե՛զ հետ եմ): Սթափ նայեք՝ ով եք դուք, դուք ինդիվիդում եք: Դուք չեք կարող ժառանգ տալ այնքան, մինչև չհարգեք հենց ձեզ ու նոր ծնվող երեխային: Այստեղ ևս կմատնանշեմ հզորության և կամքի լույսի բացակայությունը: Լուսե կինը չի կարող մտածել, որ ինքը դժբախտ է, եթե անգամ իրեն ծեծում է սեփական հայրը կամ սիրած տղամարդը: Կզարմանաք գուցե, բայց ասեմ՝ ուրեմն դուք առաջին լույսը անգամ չեք մարսել և անգամ եթե դուք հալածված եք, ես չեմ մխիթարի ձեզ, դա ձե՛ր վաստակն է: Դուք գուցե կասեք անմեղ եք, բայց անմեղությունը հիմար բարությունը չէ, այլ հարգանքը այն մարմնի և հոգու հանդեպ, որ Արարիչն է ստեղծել. դա հենց ձեր մարմինն է: Դուք կամքի ուժ ունեցեք՝ սոված ապրեք, դաժան ապրեք, բայց հարգե՛ք ձեզ և ձեր մարմինը: Ես անցել եմ այդ ուղին, ահա թե ինչու եմ այսքան վստահ մշակել այս մեթոդը, ես սոված եմ ապրել տարիներով, ես գիտեմ հարազատ կորցնել, գիտեմ անտարբեր լինել, գիտեմ այն ամենը, ինչը ոչ մեկդ երբեք չեք էլ զգացել: Եվ այսօր ես ամուր ձեր կողքին եմ, որ բացեք ձեր աչքերը և առաջ գնաք, չկա այլ տարբերակ. դուք կամ այստեղ եք, մաքուր եք, որ ընդունեք այս լույսերը կամ մնացեք նույն կեղտի մեջ: Կամքի և հզորության ուժը պետք է անհապաղ կլանել: Այնքան կամք ունեցեք, որ կարողանաք ընդունել ձեզ ձեր մեղքերով, բայց այլևս չանել նույն սխալները: Կարողացեք լինել այն, ինչ կաք, բայց և չհորինել կերպարներ:

Այս լույսի ստանալուն պես դուք կսկսեք իրապես իսկական փոքրիկ լույսեր տեսնել մարդկանց հետ շփվելիս: Կզարմանաք, բայց կսովորեք: Մարդկային աչքը շատ բան է տեսնում, անհավանական շատ բան, պարզապես թերի ու չզարգացված լույսերի բացակայության պատճառով ուղեղը չի ընկալում շատ վերերկրային հզորության նշույլները: Այո՛, սա մի կտավի պես է, պետք է սովորեք նկարել ձեր իսկ կյանքը՝ տարբերելով գույներն ու ներկերի որակները: Ներկերն էլ հենց մարդիկ են, որոնց թույլ կտաք մոտ գալ և կընտրեք: Դուք ատոմ եք, ձեր շուրջ պտտվում են ձեզ համապատասխան այլ ատոմներ: Այլ լուծումներ չկան: Դուք ունեք այս ամենը, քանի որ արժանի եք դրան: Փոխվել պետք չէ, ուշադիր լսեք՝ դուք պետք է լինեք այն, ինչ ստեղծել ենք ձեզ: Դուք, հակառակը, փոխվել եք և պետք է վերադառնաք ձեր սկզբին: Ահա այսքանը, հզոր ու կամքի ուժով լուսե կյա՜նք ձեզ:

Ակտիվ ինտելեկտի պատասխանատու լույսը հաջորդն է, որի մասին կխոսեմ: Խորը ցավով ցանկանում եմ լռել կորցրած պատմության համար, բայց և չեմ կարող մենակ թողնել ձեզ այս դժվարին և քրքրված պահին: Իմ սիրելի՛ ընթերցող, այս լույսը հոյակապ է իր տեսակի և դրսևորումների մեջ: Անվանում ենք նրան ակտիվ ինտելեկտի լույս, այսինքն՝ մտածողության լույս: Այս լույսը շատ ավելի կապված է նյութի հետ: Ի՞նչ է նյութը՝ կհարցնեք: Նյութ կա ամեն տեղ, ձեր մարմնի ամեն բջիջում: Այս լույսը նույնպես աշխատում է սիրո լույսի հետ համատեղ: Այս լույսը մոտիվացնող լույս է, որպեսզի դուք՝ մահկանացուներդ, գիտակցեք արարման ուժը և սկսեք արարել այն, ինչ դրված է յուրաքանչյուրիդ մեջ: Արարելու ունակությունը միայն ծնունդ տալը չէ, հարգելինե՛րս, թերևս դա ամենավերջին բանն է, որ մարդը պարտավոր է անել, դուք առանց ակտիվ մտածողության, առանց լույս ակտիվացնելու պարզապես իրավունք չունեք արարելու: Սա նույնն է, եթե ծաղիկ աճեցնեք, բայց չիմանաք՝ ինչ է ջուրը և ինչի համար է պետք ջրել ծաղկին: Բնականաբար ոչ բոլորդ կարող եք լինել լույսի կրող, բայց գոնե մի փոքր տեղեկանալ պարտավոր եք, քանի որ երկրագունդը վտանգի տակ է: Մեր մոլորակը կեղեքված է: Մենք մի տուն ունենք, դա մայր բնությունն է: Այսօր, անկախ ձեր հոգեվիճակից, պարտավոր եք ձեր մեջ արարել այս լույսը: Այն պետք է հիմնված լինի փորձի վրա: Այն ինչից դուք վախենում եք, պետք է փորձեք: Եթե դա իհարկե այլասերություն չէ: Ես ձեզ կբացատրեմ նաև,

թե որն է այլասերությունը(եթե դա կամենաք լսել)։ Դուք պետք է սկսեք հենց այս պահին։ Մաքուր գոյությունը չի կարող լինել կեղտոտ միջավայրում, մաքուր մտածողությունը նույնպես։ Այսօր բոլորը ժամանակակից են դարձել։ Ռոմանտիկա են մտցնում արգելված սիրո մեջ։ Արգելված սեր է համարվում, երբ դուք սիրահարվում եք ընկերոջը կամ ամուսնացած տղամարդուն, արգելված է համարվում այն ամենը, ինչը չարտահայտված է։ Բայց սա ձեզ ներշնչել են գորշ ուժերը։ Հիմա կբացատրեմ՝ ամեն տեղ՝ գրականության, թե ցանկացած «արվեստի» մեջ անպայման կա նման դրսևորում, թե պետք է լինել ազատ։ Իսկ ո՞վ է ձեզ ասել, որ ազատությունը լկտիություն է կամ տառապանք։ Ես ազատ մարդ եմ, ես սիրում եմ այն, ինչը սիրում եմ և չեմ վախենում արտահայտել այդ սերը։ Ես թույլ չեմ տալիս ինձ կեղտոտվել՝ ուրիշի բաժնի վրա աչք դնելով։ Դա կկարճեցնի իմ կյանքը, և ես կկորցնեմ լույսերից ամենագլխավորը։ Գիտեք՝ դարեր շարունակ ձեզ գեղեցիկ սերեր են պատմել՝ գեղեցիկ՝ իբրև թե յուրահատուկ։ Բայց ո՛չ, սիրելինե՛րս, անիասկանալի ֆիլմերը, որոնք դիտում եք, դրանք ձեր մեջ սերմանում են այն, ինչը պետք է վերին չար էներգիային, որպեսզի հեշտ կառավարի ձեզ։ Վերին և ակտիվ մտածողությունը բոլորովին էլ կապ չունի կրեատիվ մտածողության հետ։ Ի՞նչ ասել է թե կրեատիվ։ Մարդն էվոլյուցիայի է ենթարկվում, բայց կորցնում է իր վերին գենը։ Դա գաղափարն է մաքուր մտածողության։ Դուք պետք է հերքեք ամեն տեսակ անմաքուրը, ամեն տեսակ կեղտոտը և անիասկանալի այլասերությունը։ Չկա ոչ մի սահմանափակում սիրո մեջ, եթե սիրում եք, սիրեք ցանկացածին, բայց եթե նա ձեր բաժինը չէ, մի՛ կենտրոնացեք նրա վրա և մի՛ կապեք ձեր էներգիան նրա հետ։ Քանի որ այդպես դուք շատ վատ էներգիաներ կբերեք ձեր կյանք։ Ես քայլում եմ փողոցով և ցավ ապրում. տղամարդը քայլում է կնոջ հետ, բայց անիավանական սոված հայացքով նայում է ինձ կամ այլ կնոջ։ Ի՞նչ է սա։ Շատ եվրոպական մտածելակերպի մարդիկ կասեն՝ դե նորմալ է, աչք է, տրված է նայելու համար։ Ո՛չ, սիրելինե՛րս, աշխարհը, երբ ստեղծեցինք, արարեցինք մաքուր, վերին մտածողության լույսի հետ մեկտեղ, որտեղ յուրաքանչյուրը պետք է անիավանական մաքուր աչքով ապրեր, որպեսզի սկսեր տեսնել Արարչի լույսը։ Եթե դուք ամենամանրուքին ուշադիր չեք, եթե դուք ամեն ինչին նայում եք «ժամանակակից», դուք ոչ մի լավ բանի չեք հասնի։ Կդառնաք բույսի պես, կտեսնեք աշխարհը, բայց

չեք զգա այն։ Այս լույսը նույնպես բարդ է ընկալելը։ Այս լույսը կամքի ուժ է պահանջում։ Ակտիվ մտածեք և մի կառչեք այն ամենից, ինչը շատ է պրոպագանդվում։ Եթե ուզում եք վատ արտահայտվել, արտահայտվեք, բայց դավաճան միտք մի՛ պահեք ձեր մեջ։ Դա կկեղտոտի ձեր ոգին, և հետդարձի ճանապարհի էլ չի լինի։ Մաքրե՛ք ձեր միտքը։

Այսօր ակտիվ մտածողության լույսի փորձ ենք անելու։ Բոլորդ գնում և վերցնում եք հող, ծաղկաման և որևէ սենյակային բույսի սերմ և աճեցնում։ Սա պետք է անեք մենակ ու աղոթելով։ Աղոթքը կարող է լինել ձեր նախընտրածը։ Դուք պետք է ազատվեք անցյալի կամ ներկայի արգելված սիրո, ընկերության կամ այլ բաների մասին մտքերից։ Պետք է այրեք բոլոր նվերները, բոլոր հուշերը, եթե դրանք անգամ նկարներ են։ Սա շատ կարևոր է։ Կախվածությունը հուշերից կկտրի ձեր ապագա թևերը, և ճախրելու համար դուք շատ անիմաստ, ռոմանտիկ և կեղեքված կլինեք։ Այնուհետև նայեք ձեր շուրջը, տեսեք՝ ով է ավելորդ։ Մի՛ վախեցեք նրանց հեռացնել ձեզնից։ Վախենալու ոչինչ չկա, պետք չէ կախված լինել ընկերներից։ Հիշեք՝ դուք միայն մեկ մարդու եք պատկանում, դա ձեր կեսն է և վե՛րջ. ո՛չ ծնողինն եք, ո՛չ երեխայինը, դե՛ մնացածն էլ չասեմ։ Սա շատ լուրջ թեմա է, և քչերը կհասկանան։ Բարդ է, գիտեմ, բայց անհնարին չէ, քանի որ դուք իմն եք, ի՛մ մի մասը, եթե ես կարողացել եմ, դո՛ւք էլ կկարողանաք։ Բույսը պետք է խնամեք, և եթե այն մեծանա, ուրեմն ճիշտ եք ապրել։ Այդ ընթացքում կհասկանաք՝ այս լույսը ճիշտ եք կառավարել, թե՝ ոչ։ Եթե բույսը չմեծանա կամ փչանա, չորանա, ուրեմն դուք սխալ ուղու վրա եք, վերանայեք ձեր մտածողությունը։ Դուք այն եք, ում հետ շփվում եք, դուք այն եք, ինչ ուզել եք լինել։ Եղեք առաքինի ազատ, այլ ոչ թե լկտի ազատ, եղեք մաքուր մտքով և աչքով, եղեք խաղաղ և ինքնաբավ։ Մի՛ վախեցեք սիրել ձեր մարմինը, բայց մի՛ տվեք ձեր մարմինն ամենքին։ Եթե զուգընկերը լավը չէ, մի փոխեք, փորձեք հասկանալ և փորձեք ձուլվել միմյանց։ Եթե շատ անգամներ չստացվի, նոր միայն ներքին մտածողության կանոնով մտածեք փոխել նրան։

Ժպտացե՛ք։

Հաջորդը հրաշագեղ, վերերկրային լույս է, որն անվանում ենք գեղեցկության և արվեստի լույս։ Այս լույսի գլխավոր գործոնը հետևյալն է՝

կարողանալ ստեղծել իրական գեղեցիկը և իրական արվեստը: Այս լույսը հիմա շեղված է, շատ է փոխված: Մենք բոլորս պետք է ձգտենք, որ գեղեցիկը վերադառնա իր այն սկզբնական տեսքին, որը ստեղծվել է հազարամյակներ առաջ: Այն փոխազդեցությունների պատճառով փոխակերպվել է և շատերի համար դարձել առօրեական: Առհասարակ ի՞նչ ասել է թե արվեստ կամ գեղեցկություն: Շատերդ կասեք, թե կարծիքները տարբեր են, և յուրաքանչյուրն ունի իր տեսակետը և էլի մի քանի բլա-բլաներ: Կներեք այսքան ուղղամիտ և ուղղախոս լինելուս համար, բայց ո՛չ, գեղեցիկը մեկն է, իսկ ա՛յ արդեն դրանից ճյուղավորված մնացած արվեստներն ու այդ արվեստները կրողները հիմա փորձում են ցույց տալ աշխարհին, թե իրենք են միակը և անկրկնելին: Դա եղել է և՛ Վինչիի հետ, և՛ Վինսենթ վան Գոգի, և՛ Դալիի, և՛ անգամ հայ նկարիչների (և ոչ միայն նկարչության մասին է խոսքը, այլ առհասարակ արվեստի ցանկացած դրսևորման): Ինչո՞ւ, որովհետև նրանք եսամոլությամբ ոչնչացրին ամեն գեղեցիկը: Եթե այսօրվանից սկսած յուրաքանչյուրդ սկսեք արարել ու ստեղծել արվեստ ու գեղեցիկի գաղափար և այդ ամենի հետ մեկտեղ զերծ մնաք եսամոլությունից, դուք ուրեմն աշխարհում գլխավոր մի եթեր կդառնաք: Մեր մարմինը արդեն իսկ արվեստի դսևորում է, նայց այն հիմա շատ է տկարացած: Գիտե՞ք ինչու, քանի որ այն խզբզված է մարդկայինի ստեղծած հրեշներով: Շատերդ տեսնում եք վատ երազներ, մղձավանջներ(կասեք, թե դա ինչ կապ ունի արվեստի հետ), դա արվեստի և գեղեցիկի, իրական գեղեցիկի պակասի հետևանք է: Դուք բոլորդ հզոր եք արդեն, քանի որ լսում եք այս ամենը: Եթե անգամ շատ բան չկարողանամ խոսքերով ասել կամ բացատրել, շատ այլ անտեսանելի ուղիներով դրանք ձեր հոգուն կհասնեն: Մի պահ մտածեք՝ ինչ գեղեցիկ բան եք ստեղծել ձեր կյանքում: Միայն չասեք, որ երեխա եք ունեցել կամ կյանք եք պարգևել: Դա ձեր ստեղծածը չէ, դա Արարչի ստեղծածն է, դուք դա ուղղակի վերարտադրել եք: Բավակա՞ն է ձեզ մոլորեցնեն, թվացյալ զորեղություններ արմատավորեն ձեր մեջ: Դուք իրական գեղեցիկ ի՞նչ եք ստեղծել: Պետք է հիասթափեցնեմ ձեզ. դուք ոչի՜նչ, բացարձա՛կ ոչինչ չեք ստեղծել, ինչպես և ես: Ինչո՞ւ, գիտե՞ք, ասեմ՝ քանի որ ամենաչնչին երկու նոտան էլ որ ստեղծել է մահկանացուն, ամենահզոր կտավը կամ քանդակը որ ստեղծվել է, դա մարդու շնորհքը չէ, դա Արարչի շնորհն է: Բոլորդ խաբված եք այն

գովեստի խոսքերով, որոնք դարեր շարունակ լցրել են ձեր մտքի անոթի մեջ: Կա միա՛յն մի բան, որ դուք կարող եք անել՝ մաքրվելով կեղտոտ եսամոլությունից ու խոստովանելով ձեր փոքրությունը, շնորհակալություն հայտնելով ձեր վերերկրային, աստվածային եսին, շնորհակալ լինել հենց նրան և դրանից հետո նոր սկսեք, հրեշտակային բնույթ ձևավորելով, (կրկնում եմ՝ ձևավորելով և ոչ թե գողանալով կերպարներ կամ հորինված տեսակ), դառնալ մետաքսի պես հարթ: Եթե դուք դժգոհ եք ձեր մարմնից կամ դեմքից, դուք գիտե՞ք, որ դա ձեր հոգու տգեղության պատճառն է: Դուք գուցե լավ մարդ եք, բայց շատ լուսավորության ճյուղեր անտեսել եք, սուտն է ձեր թշնամին: Երբ ինքներդ ձեր հանդեպ, ձեր աստվածային եսի հետ հաշտ չեք, դուք տգեղանում եք: Գիտեք, որ շատ մարդիկ, ում մենք սովոր ենք գեղեցիկ անվանել, դա նրանց իրական դեմքը չէ, դա մեր ու նրանց ներքին գեղեցկության արտացոլանքն է, որ ստեղծում է հրաշագեղ գեղեցիկի իլյուզիա: Ահա այստեղ էլ նոր միայն ձևավորվում է անհատական կարծիք ասվածը: Բայց դա կարծիք չէ, դա հենց լույսերի համընկնումն է: Օրինակ՝ ես սիրում եմ որևէ մեկին, իսկ մյուսը՝ ոչ, դա իմ և նրա միջև ընկած լույսերի ստեղծման սկիզբն է, և դրա հաշվին էլ ես զգում եմ և բոլորդ զգում եք ձեզ ինչպես ձեր տանը: Ապաքինե՛ք ձեր հոգին և ստեղծե՛ք իրական գեղեցիկը և արվեստը, ձեր հոգու անարատությունը ստեղծելն է և ո՛չ թաքցնելը:

Ուժեղ երևալ. դա ծիծաղելի է, երբ մարդ ցավի մեջ ասում է՝ ես ուժեղ եմ, օ՜, ո՛չ, ես ուժեղ եմ: Ո՛չ, սիրելի՛ս, դու թույլ ես արդեն, որ խաբում ես քեզ ու դիմացինին: Թույլ ես, ասա՝ թույլ եմ, որ հոգիդ պայքարի ու շտկի խնդիրը: Խնդիրը կոծկել և անցնել, չեք բժշկվի, մարդի՛կ: Եվ եթե ուզում եք գեղեցիկը տեսնել, եղեք գեղեցիկ նախ և առաջ ներսի՛ց:

Ահա և հասանք հստակ գիտելիքի և գիտության լույսին, որի կյանքում առկա է խորը և անվերջանալի իմաստություն: Արարչագործման սիրտը առկա է այս լույսի մեջ: Փորձեմ մանրամասնել ձեզ իմաստը, թե ինչ է արարչագործման սիրտը և ինչով է այն կապված այս լույսի հետ:

Յուրաքանչյուրս ունենք սիրտ-անոթային համակարգ, որին վերագրել ենք սիրո ներկայացուցիչ լինելու ծանր պաշտոնը և որը բոլորովին կապ չունի սիրո հետ: Անգամ այս զուգահեռները

հազարամյակներ առաջ ստեղծվել են, որպեսզի մարդուն հեռացնեն իրական գիտելիքից: Տեսեք՝ ինչպես մենք, այնպես էլ տիեզերական Արարիչը ունի սիրտ և նրա սիրտը մեր հոգիներն են: Մենք սրտի միջոցով օգնում ենք տիեզերքին, որ այն ապրի և փոխադարձ մեզ վերադարձնի էներգիա, որը կրկին կվերադարձնենք նրան: Իսկ ի՞նչ ենք մենք անում: Մենք խլում ենք, և փոխանակ վերադարձնենք նրան այդ սերը և այդ իստակ վառ, լուսավոր էներգիան, մենք այն վերացնում ենք: Երբ դուք իստակ գիտելիքի լույսը հասկանաք, դա կլինի ևս մեկ քայլ առաջ. դուք կտարբերվեք մնացած մարդկանցից, քանի որ հիմա կգիտակցեք, որ սերը և ձեր սիրտը լրիվ տարբեր նպատակների համար են: Սերը ոգու մեջ է, որը անմնացորդ է, ու այն պետք է հանձնեք միայն մեկ հոգու և տիեզերքին: Իսկ Սիրտը արդեն տիեզերքի հոգու մի մասնիկն է, որը պետք է միայն տալ հենց տիեզերքին: Երբ դուք տեսնում եք որևէ մեկին, և ձեր սիրտը սկսում է բաբախել, դա չպետք է շփոթեք սիրո հետ, դա տիեզերքի կողմից ձեզ նամակ է, որը մարդու հետ կապ չունի: Այդ մարդը ուղղակի անոթ է, որի միջոցով տիեզերքը ձեզ փորձում է ասել, որ դուք նրան, այսինքն՝ տիեզերքին պարտք եք: Դուք պետք է վերադարձնեք նրան իր համար նախատեսված դրականը, այլապես նա կհիվանդանա, և դուք կկորցնեք ձեր իմաստությունը: Իմաստությունը այն է, երբ դուք գիտեք, որ դուք ձեր մարմինը չեք: Դուք անկախ եք ձեր մարմնից: Մարմինը ուղղակի կացարան է, որտեղ ապրում է լուսավոր հոգին: Իմաստության և այս գիտության լույսը սերտ կապված են: Դա հենց այս գաղափարն է, որ դուք տիեզերքի հետ շատ լուրջ կապ ունեք: Թվում է, թե բոլորդ գիտեք, բայց աղավաղված են ձեր գիտելիքները շատ տգետ և չարամիտ մարդկանց կողմից, ովքեր ձեզ հրամցրել են և խորամանկորեն տրամադրել սուտ գաղափարներ մարդու և տիեզերքի մասին: Դրանցից մեկը հենց սրտի բաբախին է վերաբերում: Լայն բացեք ձեր ականջները և իստակ գիտությունը փնտրեք ձեր մեջ: Մեր տիեզերքը ամեն օր է մեզ ուղարկում նամակներ, որոնք չեն բացվում ձեր կողմից: Դուք դավաճանի պես միայն մտածում եք արագ ձվադրվելու և անհասկանալի կերպով բազմանալու մասին, էլ չեմ ասում այլասերված գաղափարների և իբր թե տարբերվող լինելու մասին: Մա՛րդ, դու ինչ էլ անես, չես տարբերվելու երբե՛ք, դու մարդ ես ու քեզնից միլիարդները կան: Դու չես տարբերվելու ո՛չ քո արտաքինը, ո՛չ քո ոճը փոխելով և ո՛չ էլ իբր կրեատիվ մտածելով:

Ծիծաղելի է տիեզերքի և լուրջ գաղափարի տեր հզոր տիրակալների համար ձեր այդ պահվածքը: Սթափվեք և տարբերվեք ներքին առավելությամբ: Սա բոլորովին կապ չունի գիրք կարդալու կամ հոգևոր սուտ աղոթքներով մաքրվելու հետ: Եթե կեղտ կա ձեր մեջ, հազար տարի էլ աղոթեք, չեք մաքրվի: Հստակ քայլերով են մաքրվում, հստակ գիտելիքին տիրապետելով են մաքրվում: Եվ արդեն մաքրվելուց հետո գալիս է մի նոր էտապ, երբ տիեզերքը ձեզ սկսում է փորձել: Այդ փորձությունները դուք չպետք է վերագրեք դժվարության կամ դժբախտության, այլ վեհորեն պետք է ընդունեք և ձեր ներքին գաղափարը սկսեք զարգացնել: Բավական է մտածեք, պետք է սկսեք զգալ, շոշափել, շնչել: Գոնե գիտե՞ք, որ մարդիկ իրականում սիրում են աչքերի միջոցով. երբ դարեր շարունակ բոլոր սիրո երգերը ողողված են եղել մեծ մասը սիրտ բառով, իրական սերը եղել է աչքերում: Եթե մեկը ձեզ սիրում է, նրա աչքերի մեջ յուրահատուկ ֆիզիոլոգիական փոփոխություն է լինում, դա նույնպես տեսանելի է, բայց միայն այն մարդկանց համար, ովքեր տիրապետում են հստակ գիտելիքի և գաղափարի լույսին: Եվ ո՞րն է այն, մտածեք և մի շեղվեք ու մի առաջնորդվեք անիմաստ ժամանակակից հորդորներով: Բավական է խաբվեք ու ապրեք ինտերնետային կյանքով, քանի՞սդ եք իրականության մեջ ապրում՝ երե՞քը, չո՞րսը: Դուք նայում եք ֆիլտրներով «թույն» նկարների և ձեր ինքնագնահատականը իջնում է: Դուք փակվում եք ինքներդ ձեր մեջ ու կաղում: Տեսե՞լ եք իրական գեղեցիկ մի բան, իհարկե ո՛չ: Իրական գեղեցկությունը մարդը չէ, իրական գեղեցկությունը մարդու աչքերում և քայլերում արտացոլված հաջորդ՝ հավատարմության և իդեալականության լույսն է: Լավ հիշեք, որ սա նախավերջին, գլխավոր, ամենագլխավո՛ր լույսն է: Ինչպես մարդկության զավակներն են տարբեր բնավորությունների, այնպես էլ դրանց հավատարմության դրսևորումներն են աղավաղված և տարբեր: Ես իմ գիտակից և մարդկային կյանքում չեմ հանդիպել մարդկային հավատարիմ ոգու, բայց հանդիպել եմ մարդկային կերպարով հավատարիմ հրեշտակային ոգու: Բայց ուշադրությո՛ւն՝ սա չի վերաբերում ստիպված հավատարիմ լինելուն: Սա բնավ կոնկրետ անձնավորությանը հավատարիմ լինելը չէ, սա բնավ կենցաղային հավատարմությունը չէ: Դուք, ազատ լինելով այդ պարտականությունից, պետք է դառնաք հավատարիմ ինքներդ ձեզ: Ես

գիտեմ՝ սա ահռելի մեծ ջանք է պահանջում, քանի որ մարդը, մարդկային բնույթը ի զորու չէ իր երակների մեջ ներարկել արարչագործման տիեզերական հավատարմությունը: Իդեալականացված հավատարմությունը ամենահզոր, ամենաուժեղ թռիչքը կլիներ մարդու համար, բայց այն 1625 թվականից սկսել է վար իջնել: Մինչ այդ թվականը շատ մեծ հնարավորություն կար մոլորակը փրկելու և մարդկային տգետ էվոլուցիան կանխելու: Մարդիկ մտածում են, թե զարգացել են, բայց տգիտության դիպլոմներով ուրախանում են: Այս իմ վրդովված ուղերձները ուղղված են այն մարդկանց, ովքեր հոգևոր քաղց են զգում և լույսի կարիք ունեն: Որպեսզի լինեք այս հզոր և դժվար լույսի կրողը, դուք նախ և առաջ պետք է պատրաստ լինեք այդ ամենը գիտակցել և հասկանալ՝ արդյո՞ք կարող եք այդ ամենը իսկապես ուզել, ցանկանալ, թե՞ պետք է անեք դա զուտ որպես պարտականություն կամ լոկ նրա համար, որ դա ձեզ կօգնի: Դա դուք պետք է անեք մաքուր մտքով, առանց ակնկալիքի, որ ձեզ կասեն՝ օ՜, այս մարդը հավատարիմ է:

Հավատարիմ մի՛ եղեք ձեր թվացյալ, լավ հորինված սկզբունքներին: Միշտ ասում են, թե սկզբունքային մարդիկ հզոր են. չկա՛ նման բան: Սկզբունքը պետք է լինի ճկուն և պատրաստ լինի փոխակերպվել, բայց միայն իրական լուսավորին ծառայելու համար, այլ ոչ թե մարդուն: Այս լույսը մատնահետք է մոլորակի, ձեր ապագա սերնդի հավատարմության լույսը իդեալականացնելու, ձեր հետագա փոխակերպումները կանխելու համար, որպեսզի դուք մետամորֆոզի չենթարկվեք և չդառնաք կենդանանման, կենդանածին, ապա պետք է դրսևորվեք մաքսիմալ հավատարմության սկզբունքով և սկզբունքին կցված: Սա շատ լուրջ քայլ կլինի ձեր կողմից: Չգիտեմ՝ քանիսիդ մոտ կստացվի, բաց երբ ձեր շրջապատում լինեն հստակ գոյություն ունեցող և հստակ հոգևոր նպատակի համար ծառայող մարդիկ, ովքեր կլինեն ոչ թե նրա համար, որ դուք ցրվեք, այլ կլինեն հստակ բարոյական կաղապարների ներսում: Այդ ժամանակ դուք կկարողանաք զգալ հզոր ուժը:

Տեսեք՝ եթե դուք ձեր շրջապատում ունեք անձնավորություն, ով թվում է, թե այս նշված կաղապարի սահմաններում է, բայց միևնույն է դուք ձեր մեջ զգում եք, որ հնարավոր է որևէ սիրային կամ այլ այլասերված միտք, բայց չեք էլ արտահայտվում ո՛չ դուք, ո՛չ դիմացինը, այդ միտքը, միևնույն

է, չարտահայտվելուց էլ չի դադարում գոյություն ունենալ։ Դուք չզարմանաք, որ ոչինչ չստացվի ձեզ մոտ, քանի որ դուք ձեր միտքը կեղտոտ եք պահում։ Իրականում շատ գիտնականներ այսօր պնդում են, թե մոլորակներից մի քանիսը այս լույսերի կացարանն ու ներկայացուցիչն են։ Բայց ըստ իմ բացահայտումների՝ մենք ինքներս ենք դրանց ներկայացուցիչը և մենք ենք ստեղծում այդ մոլորակները։ Օրինակ՝ եթե այս լույսերից բացի մի օր մի մարդ ծնվի, ով կկարողանա ստեղծել մեկ այլ կարևոր լույս, ապա դրանից 111 տարի հետո այն կփոխակերպվի, և մարդկությունը մի նոր մոլորակ կբացահայտի։ Եվ փաստորեն դա կլինի ևս մեկ գիտական առաջընթաց, բայց որը ստեղծել է ընդամենը մեկ մարդ իր լավ տեսակով։ Որքան շատ լինեն մոլորակները տիեզերքում, այնքան շատ կլինի հավանականությունը լույսի և էներգիայի վերածնման, քանի որ եթե մենք հոգ չտանենք մեր արեգակնային համակարգի մասին, մենք վերացման եզրին կհայտնվենք, արդյունքում կխժռենք ինքներս մեզ։ Այս լույսը յուրահատուկ շինարար է, հետագա արարչագործման ջիղը շարունակելու համար հիմք։ Կլինի՞ արդյոք մահկանացու, ով կկարողանա ստեղծել մոլորակ: Դա բնավ անհնարին չէ, հավատացնում եմ ձեզ, բայց հեշտ էլ չէ։ Բնությունը վրիժառու է, և այս լույսը վերաբերում է հենց նրան հավատարիմ լինելուն։ Դուք ունեք բնությունից տրված ամեն ինչ, բայց պաշտում եք այլ արժեքներ։ Դուք դավաճանում եք և՛ ձեզ, և՛ ձեր ապագան, և՛ ձեր ներկան։ Համակարգեք ձեր կյանքը և բոլոր ավելորդ մարդկանց հանեք ձեր կյանքից։ Մի՛ պահեք մարդկանց ու մտածեք, թե մի օր պետք կգան ինչպես իրեր։ Եթե կարծում եք, թե x մարդը մի օր կօգնի ձեզ, ապա դուք թերագնահատում եք ձեզ։ Ինչպես նա, այնպես էլ դուք ունեք հնարավորություն օգնելու ինքներդ ձեզ։ Դա անտանելի անարգանք է։ Լավ է մենակ մնալ, քան նման մտքեր ունենալ։ Իսկապես եղեք իրական մաքուր և գիտակցեք իրական բարոյականի ու հավատարիմի արժեքը, այլ ոչ թե խաբեք ձեզ՝ մտածելով, որ եթե ուղղակի շփում է կամ ուղղակի չարտահայտված միտք, ուրեմն դա դավաճանություն չէ։ Ո՛չ, դա հենց անհավատարմությունն է, երբ խաբում եք ինքներդ ձեզ։ Դուք պետք է իսկապես կամենաք և դա պետք է իսկապես ձեր որոշումը լինի։ Եթե մի օր դուք ասեք կամ բարձրաձայնեք, թե իբր հավատաիմ եք, բայց ոչ մի բան չի գնահատվում ու դեռ տեղում եք դոփում, բողոքում թեկուզ ձեր

մտքի մեջ, դուք կկորցնեք ամեն ինչ, բառիս բուն իմաստով ամեն բան: Իդեալական վերելքը այն է, երբ դո՛ւ՝ մարդ արարած, հաղթում ես ինքդ քեզ և չես խաբում երբե՛ք ու չես լինում զզվելի մտքերի կացարան:

Ահա և հասանք վերջին՝ հոգևոր կարգապահություն և ծիսկարգային ապրելակերպի լույսին: Ի՞նչ է սա նշանակում, սա հոգևոր կանոնակարգված օրենքների մասին է, որին տիրապել են շատ քչերը, բայց դա այն պատճառով է եղել, որ հասարակությունը կորցրել է ճշմարտությունը: Մարդիկ կարդում են ու չեն հասկանում: Շատ գրքեր ու իմաստություններ այլևս երբեք չեն բացվի այն մարդկանց համար, ովքեր անմաքուր են ապրում: Այլևս չի մնացել ոչ մի թափուր տեղ, քանի որ դրանք բոլորն էլ դատարկ մնացին և հոգևոր մաքուր ու խաղաղ գնացքը դատարկ ուղևորվեց այս անգամ դեպի Արարիչ տանող ճանապարհ: Քանի որ դո՛ւք՝ մարդիկ, չափից շատ եք հղփացել, չափից շատ եք չարացել ու ագահացել, բոլոր մեղքերը կուլ եք տվել ու մարսելուց հաճույք եք ստանում: Դուք չեք լսում լուռ ճշմարտությունը և վազում եք աղմկոտ ստի ետևից: Դուք քայքայել եք բնությունը, քայքայել եք մոլորակը, մարդկային արժեքը այլևս չունի ոչ մի իմաստ, քանի որ դուք ապրում եք մեկ այլ մարդու համար, դառնում եք ամբոխ ու կործանում անհատականության արարչագործման կնիքը:

Ասելիքս շատ է, լավ է լռեմ ու փորձեմ գոնե մի քանի հուշող քայլեր ասել, որ գոնե վազեք այն դատարկ հեռացող գնացքի ետևից, գուցե և հասցնեք ու վայելեք: Շատերը մտածում են, թե իրենց ինչին է պետք ամեն օր աղոթել, ամեն օր մաքուր ապրել, ինչու ծանրացնեն իրենց կյանքը, մեկ կյանք են ապրում: Հիմարնե՛ր, արդեն կուշտ եմ ես ձեր այդ սուտ ու տգետ գրականությունից, զզվելի ու եղկելի են ձեր դրամատիկ, շինծու ժամանակակից ու մոդեռն մտածելակերպն ու ապրելակերպը: Դուք արդարացնում եք ձեր անառակությունը՝ մեղադրելով կյանքին կամ ճակատագրին: Մոռանում եք, որ դուք պետք է փոխեիք աշխարհը, որ պետք է զտեիք գորշից, պետք է լինեիք կանոնակարգված, խաղաղ հոգով, որովհետև մեկ կյանք եք ապրում գուցե, բայց այնքան տգետ եք ու էգոիստ, որ չեք գիտակցում՝ այդ մեկ հատիկ կյանքը ձևավորում է միլիոնավոր կյանքեր ու արժեքներ: Ապրեք ճշմարիտի ուղիով: Լսեք դիմացինին, եթե նա թանկ է, եթե նա անգամ ձեզ վիրավորել է, մի՛

չարախոսեք, մի՛ եղեք մարդ, եղեք հրեշտակային կեցվածքով ու անարատ հոգով, եղեք Արարչի ձեռքերն ու ոտքերը, լո՛ւյս տարածեք: Դա միայն ձեզ համար չէ, դուք ունեք ծնողներ, քույր ու եղբայր, և կյանքը միշտ վերադարձնում է այն, ինչ տալիս եք նրան: Արդեն քայքայված աշխարհիկ մատրիցան կխափանվի՝ հարվածելով ձեր սիրելիներին: Լա՛վ մտածեք, ոչ թե եղեք հիմար-բարի, այլ եղեք բարոյական ու առաքինի, բայց ո՛չ ավանակ ու ձուլված, մի՛ արեք դա, որովհետև դա ես եմ ասում կամ որովհետև այդպես է գրված, արեք դա՝ գիտակցելով, որ դա ձեզ է պետք: Մի՛ ագահաբար նայեք մերկ մարդկանց անկախ սեռից ու չբավարարված լկտիի հայացքով մի՛ փորձեք ձեր դատարկ հոգին միայն տարփանքով հագեցնել: Անգամ այդ ամենը արեք լուսավոր ու ջերմ, ինչպես ծիսակարգային մի արարողակարգ, քանի որ այդ ամենը կրկին պղծված է:

Այսօր «սեքս ընկերներ» ասվածն է նորաձև դարձել, ու դա բնավ չի մտահոգում այդ տգետ սկզբունքի կրողներին: Դուք հո աննորմա՞լ չեք, ի՞նչ եք ընկել այդ հոսքի տակ, հարգեք ձեր մարմինը: Դա ազատություն չէ, դա ազատ ապրելակերպ չէ, դա մոդա չէ, դա ծիծաղելի՛ է: Ես հեգնանքով ծիծաղում եմ նմանների վրա: Մի պահ պատկերացրեք ձեզ կողքից ու միամիտ միացրեք լույսը և նայեք ձեզ, վստահ եմ՝ կիռհռաք: Գիտեմ՝ հիմա բարդ է ընկալել ասածներս, քանի որ մի րոպեից էլի կմտնեք նորությունների էջ, կտեսնեք մի հարուստ «ծիտիկի», որին կորեկ է տվել մի այլ հարուստ «արծիվ», և հետո կմտածեք՝ ինչո՞վ եք պակաս այդ ծիտիկից ու կտրվեք «անբարոյական կորեկի» գայթակղությանը: Արդյունքում կունենաք մի լավ մաշված մարմին ու մի քանի գրամ քրքրված հոգի, որը արդյունքում ոչ մեկին պետք չի գա: Կրկին ծնվելու շանսը կիավասարվի զրոյի, կկորցնեք հարազատներին ու կտեսնեք նրանց ցավը: Հետո կասեք՝ վա՜յ,այդ ո՞ւմ էի վատություն արել, միայն ինձ էի վնասել, ինչո՞ւ այսպես եղավ: Եվ հենց դա է ձեր գլխավոր սխալը, որ ձեզ թվում է՝ ինքներդ ձեզ նեղացնելը բնավ մեղք չէ, ու մտածում եք, եթե այլ մարդկանց լավ եք վերաբերվում, բայց անարգում եք ձեզ ձեր ապրելակերպով, դա միայն ձեզ է վնաս: Ո՛չ, մա՛րդ, սթափվի՛ր, դա է հենց պատճառը, որ կգա մի օր՝ կողքից կհետևես հարազատիդ, ով սխալ ուղիով է գնում և ոչինչ չես կարողանա անել, գիտե՞ս ինչու, որովհետև այն ժամանակը, որը դու կարող էիր ինքնակրթմամբ զբաղվել, տվել ես

օտարների անկողիններում գալարվելուն ու օտարների աչքերում լավը երևալուն: Այն ակնթարթները, որը պետք է տայիր քեզ վեհ ու հարգալից կերպար արարելուն, նվաստացել ես ու ծնկի իջել երկու կոպեկի համար: Այն ժամանակը, որը պետք է նվիրեիր ծնողիդ, նվիրել ես քո իսկ հորինած շինծու սիրուն, որը քեզ միայն կործանման է տարել: Այն ժպիտը ու պատիվը, որը պետք է զգար ծնողդ, որդիդ, դուստրդ, քույրդ կամ եղբայրդ, դու ոտնատա՛կ ես տվել, և նա հիմա գլուխը կախ է քայլելու: Միշտ էլ արդյունքում սերուցքը առանձնանում է սուրճից. հասարակ ֆիզիկա է: Ու միշտ էլ քո սուրճի մրուրը գոռալու, խլացնելու է ականջներդ: Կանոնակարգված ու ծիսկարգային իմաստությունը հրաշք ձեռքբերում կլինի քո կողմից «ձանձրալի» կոչումով որակավորված բարոյական արժեքի զարգացման համար: Ու չկա՛ չստացվել. դու կա՛մ նյութ ես, կա՛մ հոգի: Կողմնորոշվի՛ր, քանի որ գնացքը գնում է ու էլ ետ չի գալու: Չը՛խկ-չը՛խկ-չը՛խկ, գնա՜ց…

1. Հարաբերություններ, որոնք ավելի ճիշտ լուծում են ստանում հիմա: Մի՛ նեղսրտեք երբեք, քանի որ դուք ունեք ինձ և ձեր իրական տիեզերքը ու ձեր հեքիաթը: Այո՛:[6]

2. Նորությունը, որը շուտով մուտք կգործի ձեր կյանք, կփոխի ձեր մեջ ամեն վատ և կպչուն միտք: Ուշադիր նայեք ձեր շուրջը, տեսեք ոչ միայն աչքերով, այլև` հոգով: Միայն մի լսեք, այլ նաև հետևեք կողքինների քայլերին: Գուցե դուք եք շատ լավատես ու սպասում եք, որ խոզը մի օր մորթի կունենա: Ո՛չ:

3. Տրամաբանեք, սա է ելքը: Պետք է շատ խիստ կարգ ու կանոն` և՛ հոգևոր, և՛ կենցաղային: Ամեն բան թափթփված է: Սա խոչընդոտ կհանդիսանա հետագա լույսերի մուտք գործելու համար: Այո՛:

[6]Գրքի էջերում եղած խորհուրդների վերջում կան «այո» և «ոչ» պատասխանական բառեր: Գիրքը ընթերցելիս, եթե ունենում եք որևէ հրատապ հարց, եթե որևէ անհասկանալի իրավիճակում եք գտնվում, երկընտրանքի մեջ եք և կարիք ունեք մեկի խոսքի կամ խորհրդի, ապա հստակ ձևակերպեք ձեզ հուզող հարցը և պատահականության սկզբունքով բացելով գրքի որևէ էջ` կարդացեք ու հասկացեք տվյալ խորհուրդը, այնուհետև ձեզ հուզող, մտորումների առիթ տվող հարցի պատասխանը, որն է այո՛ կամ ո՛չ: Այսպիսով` գիրքը կօգնի ձեզ գտնել երկընտրանքի առջև կանգնեցրած հարցի պատասխանը:

4. Յուրահատուկ զգացական դաշտ է տիրում ձեր շուրջ, մի խուսափեք ձեր զգայարաններից և դրանք բացահայտելուց, ամեն բան հնարավոր է, եթե դուք զգաք ոչ թե որովայնով, այլ` կրծքավանդակով: Ո՛չ:

5. Ժամանակն է բացել ձեր թևերը, դրանք ավելի փարթամ դարձնել ու ձգտել դեպի առաքինի ու իմաստուն կյանք: Վերանայեք այն, ինչի մեջով անցել եք: Անցած ուղին ձեզ թող վերջին անգամ դաս լինի: Այո՛:

6. Ժամանակն է, որ գնաք հանգստի: Գերհոգնածությունը ձեզ ուժասպառ է արել: Ու հիմա որևէ որոշում կայացնելուց առաջ նախ մի փոքր հանգստացեք: Ո՛չ:

7. Խնդրի մասին ավելի երկար մտածեք, որ սխալ եզրակացություն չանեք: Ամեն բան այդքան վատ չէ, ինչպես դուք եք տեսնում: Ավելի սթափ եղեք ու բողոքելու փոխարեն վերցրեք ու փոխեք արմատապես ձեզ և ձեր կյանքը: Այո՛:

8. Շատ բարձ ձեռքբերում կունենաք: Կամքի ուժն է պակասում ձեզ: Աշխատեք կամքի ուժի ամրապնդման վրա: Բարձունքների հասնելու համար մի օգտագործեք սուտը, այլ արդար եղեք, որ երկար վայելեք: Ո՛չ:

9. Հանրությունը ձեզ կընդունի ավելի վառ գույներով ու ավելի վառ կերպարով, քան հիմա կաք: Քիչ շփվեք մարդկանց հետ, կրճատեք անիմաստ հանդիպումները: Կառուցեք ձեր ապագա տաքուկ տունը, արմատները գտեք հենց հավատարմության ու սիրո մեջ: Այո՛:

10. Տեղեկությունը, որը կիմանաք, ձեզ ավելի կուժեղացնի: Գտեք դրա ամենալավ դրսևորումը և փորձեք հոգեպես կայուն մնալ: Տիեզերքը ձեզ սիրում է ավելին քան դուք կարծում եք: Ո՛չ:

11. Չեք կարողանում որոշում կայացնել, ավելի ճիշտ պատրաստ չեք որոշում կայացնել, անելանելի վիճակից դուրս գալու համար նախ և առաջ մաքրվեք մեղքերից: Այո՛:

12. Շատ ժամանակ անցկացրեք լուռ ու հանգիստ միջավայրում: Թեյը այսօր ավելի կարևոր է, քան սուրճը: Ներսում հավատով լցվեք, որ դրսից էլ ծաղկեք: Ձեզ մոտ է ամենալավ կյանքը, մնում է ձեռքը մեկնեք և ճիշտ բերք քաղեք: Ո՛չ:

13. Արմատները լավ եք դրել, բայց հիմա դադար է պետք մի քանի օր: Ոչնչով մի զբաղվեք, լսեք առանց բառերի երաժշտություն, մտովի կառուցեք ձեր երջանիկ իրականությունը: Հիմա անհանգստանալու առիթ բնավ չունեք: Այո՛:

14.Վիճաբանությունը և անհամաձայնությունը լուծում չէ: Դուք միայն ձեր ես-ի մասին եք մտածում: Ո՛չ:

15. Շատ լուրջ և դժվար որոշում պետք է կայացնեք: Վերլուծեք ձեր որոշումը, լավ մտածեք, որ հետո ուշ չլինի: Բավական է այսօրվա գործը թողնեք վաղվան: Այսօր ու հիմա է օրը: Այո՛:

16. Հավատացեք, հետևեք ձեր ներքին ձայնին: Պատահական ու շատ գեղեցիկ շանս կա երջանկության, լայն բացեք ձեր հոգևորի աչքերը: Ո՛չ:

17. Դուք ընդունել եք ամենաիմաստուն որոշումը և հիմա արդեն կարող եք մտածել, թե ինչ պետք է անել տվյալ իրավիճակում: Միայն մաքուր մտքով ու կյանքով լինելուց հետո կճաշակեք իրական երջանկությունը: Այո՛:

18. Սուտ անհանգստություն է, շատ եք կենտրոնանում կենցաղային խնդիրների վրա, և դրա պատճառով առաջանում են այլ հոգևոր անհանգստություններ և ոչ միայն: Մերժեք ցանկացած բացասական էներգիա: Ո՛չ:

19. Վստահեք, սա ամենալավ առիթն է վստահել առանց վախի, բայց և մտածեք ու մի դադարեք ստուգել, եթե անգամ շատ եք վստահում: Այո՛:

20. Բավական է բոլորին պատմեք ձեր կյանքում առկա խնդիրների մասին: Որքան շատ մարդ է դրանք իմանում, այնքան շատ է այն սկսում խորանալ ու դառնալ ավելի մեծ խնդիր: Լռության մեջ գտեք ձեր լավ ընկերոջը: Ո՛չ:

21. Հաղթանակ: Շատ լավ նորություն ու շատ լավ պատասխան: Հնարավոր է նաև որևէ շահում: Այո՛:

22. Ժամանակն է նայել աշխարհին այլ տեսանկյունից: Ձեզ փորձում են կառավարել: Մի՛ տրվեք գեղեցիկ բառերին ու խոստումներին, հետևեք իրական երջանկության կանոններին: Ստիպեք, որ երջանկությունը հանգրվանի ձեր տանը: Ո՛չ:

23. Ավարտվում է բացասականը: Սա վերջն է բոլոր դժվարությունների: Միայն լավի վրա կենտրոնացեք: Կկարողանաք վատ սովորություններից ազատվել, եթե հենց հիմա դադարեք դրանք անել: Այո՛:

24. Բարի, կայուն և խաղաղ ընտանեկան կյանք: Եթե առկա են խնդիրներ, դրանք դեռ առիթ չեն, որպեսզի փնովեք կողակցին: Նյութականը կգա և կգնա, իսկ իրական երջանկությունը իրական սիրո և հավատարիմ ու միակ կողակցի հետ մեկ մարմին ու հոգի լինելն է: Ո՛չ:

25. Գործնական մեծ վերելք: Պայմանագիր կնքելուց առաջ անպայման ընթերցեք, եթե անգամ արդեն մի անգամ կարդացել էիք: Այո՛:

26. Խնդիրը կլուծվի, եթե դուք օբյեկտիվ լինեք: Պետք է ազատվեք վերջնականապես այն ամենից, ինչը ձեզ խանգարում է: Ո՛չ:

27. Երջանիկ արդյունք կլինի, մի վախեցեք: Մի քիչ գուցե բարդ է, բայց ամեն բան շտկվելու է: Մի փոքր ավելի իմաստություն ցուցաբերեք: Այո՛:

28. Հիմա կարևորը համբերատարությունն է: Կարող եք երկարատև ծրագրեր մշակել, դրանք շատ հաջողակ ու ճիշտ ուղով կգնան: Ո՛չ:

29. Էմոցիոնալ շփում և ինչու չէ մարմնական կապ՝ ահա ելքը, բայց միայն մեկ անձի հետ: Լավ առողջություն ունենալու դեպքում բոլոր հարցերը կկարգավորվեն: Այո՛:

30. Երկար սպասվածը շուտով կիրականանա: Հավատարիմ եղեք ինքներդ ձեզ և հետո միայն հավատարմություն սպասեք մարդկանցից: Ո՛չ:

31. Դուք այն եք, ինչ ուտում եք և այն եք, ինչ զգում եք: Մի փնովեք կողակիցներին, գուցե ժամանակն է հասկանալ՝ դուք իրար համար չեք: Այո՛:

32. Սիրահարվածություն, որը անիմաստ կխլի ձեր ժամանակը և կտանի ձեր բարձր արժեքները: Եթե դավաճանության մասին եք մտածում, ապա այն ձեզ անպայման կգտնի: Վերացրեք այդ միտքը ու գնահատեք այն, ինչ կա և ունեք: Ո՛չ:

33.Եթե անցյալը անցյալում է, ուրեմն դուք արժանի չէիք, քանի որ դուք նախ պետք է արժանի լինեք, նոր պահանջեք: Գուցե դուք սխալվել եք ձեզ իդեալականացնելով ու չեք նկատել, որ նրան դա պետք չէր: Այո՛:

34. Հարաբերություններ, որոնք անլուրջ են: Եթե մոտակա մեկ ամսում լուրջ քայլեր չձեռնարկեք, ուրեմն բաց թողեք այդ ծանր հոգսը: Ո՛չ:

35. Մարդիկ չեն փոխվում, փոխվում են լույսերը: Եթե իրավիճակի անձինք անիմաստ են ու ոչ լույսի կրող, մի սպասեք, որ կփոխվեն: Փոխվեք դուք դեպի լավը, ավելի վերը, բայց մի հպարտացեք: Այո՛:

36. Քաոսային շրջան է, քանի որ դուք կարողացել եք հասցնել ձեզ այս վիճակին ինքներդ: Դուք չպետք է դադարեք վստահել, եթե անգամ ողջ աշխարհը ձեզ դավաճանած լինի: Այդ վստահությունը նախ և առաջ ձերն է, նոր մյուսներին: Ո՛չ:

37. Ցավը բոլորին է պատում, բայց միշտ չէ որ ցավը հենց այն է, ինչ մենք տեսնում ենք: Հարազատի կամ մտերիմի բաժանումը ևս մեկ հնարավորություն է լինել ավելի խելամիտ և գնահատել նրան այսօր, այստեղ ու ստիպել, որ ճշմարիտ ու առաքինի ապրի: Այո՛:

38. Եթե ձեզ չեն հասկանում, դա ձեր մեղքն է: Ով է ասել, որ ձեզ պետք է հասկանան: Դուք անհատ եք ու փոփոխական անհատ: Մի սպասեք կյանքից կամ առավել ևս մարդկանցից հասկանալու ունակություն: Մարդիկ ուղղակի երևույթներ են, ովքեր ձեզ կուղորդեն, բայց որոշում կկայացնեք միայն դուք: Ո՛չ:

39.Դադար տվեք անլուրջ հարաբերություններին: Մարդկային թուլությունը ծաղրելուն վերջ տվեք, քանի որ դուք էլ եք մարդ: Եթե արդեն լույս եք, գուցե ունեք իրավունք ծիծաղել, բայց լույսը ձեր մեջ կրելու համար նախ և առաջ վսեմ և վեհ եղեք և ոչ ինքնասիրահարված ու ինքնագոհ: Այո՛:

40. Ձեր ցանկությունը կիրականանա, խնդիրները կվերանան։ Սիրեք կյանքը իր դժվարություններով։ Ո՛չ:

41. Վստահ խոսեք, ավելի հստակ եղեք ցանկացած խոսք արտաբերելիս, դա հիմա շատ կարևոր է: Հավասարակշռության մեջ պահեք և՛ էմոցիոնալ, և՛ տրամաբանական դաշտը։ Այո՛:

42. Ֆինանսական մեծ հաջողություններ, լավ առաջարկներ: Եթե կարողանաք ճիշտ դրսևորել ձեր ներքին տաղանդը, կհասնեք մաքսիմալ արդյունքի։ Ո՛չ:

43.Պատահական իրադարձություն, որը կարող է փոխել ձեր կյանքը։ Ժամանակը շատ մեծ դեր է խաղում։ Գնահատեք և միշտ շնորհակալ եղեք, ու պատասխանը տիեզերքից չի ուշանա։ Այո՛:

44. Հոյակապ մտահաղացում է։ Դուք հիմա իրավիճակը տեսնում եք այնպես, ինչպես այն կա։ Ժամանակն է ձեր կյանքում շատ բան փոխել։ Ո՛չ:

45. Բարեհաջող ժամանակահատված է։ Ինչ էլ առաջարկեն ձեզ, կարող եք հանգիստ ընդունել այն՝ իհարկե չմոռանալով տարրական զգուշության մասին։ Հիմա ինչին կպնեք, ոսկի կդառնա։ Այո՛:

46. Ձեր ջանքերը զուր չեն, ճշմարիտ եք անում այն, ինչ անում եք, միայն թե լավ ուսումնասիրեք ամեն մանրուք, որովհետև սխալը ձեզ կվնասի: Ո՛չ:

47.Ժամանակն է, որ իրավիճակը ձեր ձեռքը վերցնեք: Պետք է հասնեք նպատակին, բայց խիստ եղեք ինքներդ ձեր հանդեպ, պահապան հրեշտակը ձեզ հետ է։ Այո՛:

48.Վա՞խ կա ձեր մեջ, որ գուցե թակարդի մեջ կընկնեք. դուք ուղղակի անինքնավստահ եք։ Դուք պետք է սովորեք հենց հիմա սիրել ձեզ այնպիսին, ինչպիսին կաք ու ավելի լավը դառնալու համար ձգտեք հոգևոր դաստիարակության զարգացմանը։ Ո՛չ:

49. Պահեք ձեր տեսակետը, բայց և լսեք ամենամոտ մարդու կարծիքը, միայն նրա կարծիքը և ո՛չ բոլորինը։ Հաստատուն եղեք։ Դուք

շատ եք աշխատում, հիմա ժամանակն է այլ մարդկանցից օգնություն ընդունել: Այո՛:

50. Եղեք իմաստուն: Որևէ հարցի շուրջ մտորելուց իմացեք, որ այսօրվա ձեր կայացրած որոշումը կերտում է ձեր ապագան: Ո՛չ:

51. Ընկնելուց մի հուսահատվեք. մինչև հատակը մոտիկից չտեսնեք, չեք գնահատի բարձունքը: Այո՛:

52. Հաճախակի լռեք. լռեք ձեր ներքինը լսելու համար: Ո՛չ:

53. Ներկա պահին ձեր կյանքը հավասարակշռված չէ: Դա վատ է անդրադառնում ձեր առողջության վրա: Չի՛ կարելի, վե՛րջ տվեք ձեզ տանջելուն: Այո՛:

54. Հիմա դուք պատրաստ եք անել ամեն ինչ, որ կարողանաք հասնել ձեր նպատակին: Կյանքը հրաշքներով լի է, եթե հավատ ունեք:

55. Ամեն ինչ շատ եք ուզում ու միանգամից, դրա համար էլ չունեք ոչինչ: Փորձեք քիչ-քիչ ու հստակեցված նպատակներ կառուցել: Այո՛:

56. Ցավալիի սպասում կա, բայց դա չի հուսահատեցնի ձեզ, քանի որ հենց այնպես ոչինչ չի լինում այս աշխարհում: Վաղուցվա մարգարեությունը կիրականա: Ցավոք, մի քիչ տխուր օրեր են սպասվում, բայց վերջում լավ կլինի: Ո՛չ:

57.Դադա՛ր խառնաշփոթ կյանքին: Ժամանակն է գնալ ճանապարհորդության և սիրել բնությունն ու կենդանական աշխարհը, այլ ոչ մարդկանց: Այո՛:

58.Ավանդապաշտությունը լավ է, բայց երբեմն խանգարում է, չափի զգացումը լավ բան է, բայց ոսկե միջինը սխալ է. կամ այս կողմ կամ այն: Ո՛չ:

59.Բավարարված լինելն այն է, երբ մարդ կարողանում է հասկանալ, որ իր երջանկությունը ինքն է՝ որպես անհատ, և ոչ թե դիմացինը: Երբ սիրեք միայն մեկին, այդ ժամանակ կզգաք՝ երջանկությունը որն է: Այո՛:

60.Ծրագրերը վերանայեք, ինչ-որ բան սխալ է գնում: Մանրամասն բացատրություն պահանջեք: Ո՛չ:

61.Նոր շրջապատ կմտնեք, բայց այն ձեզ սկզբում դուր կգա, հետո կհասկանաք, որ սխալ էիք անում մեծարելով նրանց, այդ պատճառով նախապես սահման գծեք: Այո՛:

62.Զգույշ եղեք, առողջականը վատանում է վատ սովորությունների պատճառով: Հենց այսօր մաքրվեք վատ սովորություններից, որովհետև վաղը շատ ուշ է լինելու: Ո՛չ:

63.Սուտը ամենավատ դեղահաբն, որը սկզբում օգնում է ստողին ու հետո հերթով ոչնչացնում քո սիրելիներին, այլ ոչ թե՝ քեզ: Դա է պատիժը ստի: Այո՛:

64.Վախը կարևոր է, եթե մարդը չի հասկանում, ուրեմն պետք է մեկ անգամ ստիպել նրան, ապա հետո հանձնվել կամ թողնել: Ո՛չ:

65. Շանս տալու համար ձեզ շատ են կոտրել, հիմա դադարի ժամանակն է: Այո՛:

66.Մի՛ հանձնվեք: Պաշտպանեք այն, ինչ ձերն է, ու կստանաք մեծ պարգևատրում տիեզերքի կողմից: Ո՛չ:

67.Նոր բնակավայր, նոր խոշոր ձեռքբերում: Վայելեք: Այո՛:

68.Ուշադիր եղեք՝ տիեզերական նշանները ամենուր են՝ երգերի մեջ, գրքերում, նկարներում, ֆիլմերում: Ո՛չ:

69.Սիրեք մե՛կ անգամ և մեկի՛ն: Այո՛:

70.Պահպանեք ձեր հոգևոր ներդաշնակությունը, այն ձեր միակ բանալին է դեպի ձեզ: Ո՛չ:

71.Մի՛ լսեք ուրիշների կարծիքները ձեր կյանքի վերաբերյալ, կյանքը ձերն է, հետևանքները՝ նույնպես: Այո՛:

72.Մի փորձեք փախչել ձեզնից և ձեր մտքերից, քանի որ այն ինչից փախչում եք, գալիս է ձեր ետևից: Ո՛չ:

73.Տիեզերքի կենտրոնը գտնվում է ձեր սրտի կենտրոնում, սիրե՛ք ձեզ: Այո՛:

74.Զարգացրեք ձեր մեջ շնորհակալ լինելու զգացողությունը: Ո՛չ:

75.Դուք ձեր տեղում եք: Այն ինչ ձեզ շրջապատում է, համապատասխանում է ձեր հոգեվիճակին: Մի՛ բողոքեք: Այո՛:

76.Ձեր կյանքը փոխելու համար նախ և առաջ փոխեք ձեր վերաբերմունքը հավատի և հավատարմության ընկալման հանդեպ: Ո՛չ:

77.Եթե մի բան ձեզ համար ճիշտ է, չի նշանակում՝ դուք ճիշտ եք: Եթե ըստ ձեզ՝ դուք դավաճան չեք, երբ ընկերական կապ եք պահում նախկին սիրեկանի հետ, ապա դուք աշխարհի ամենաանբարոյական մարդն եք: Այո՛:

78.Մի փորձեք արդարացնել ձեր անառակ հոգևոր պահվածքը կամ չարությունը կյանքի տված հարվածներով: Անմեղ մարդիկ չկան, բայց արդարանալ էլ պետք չէ: Ո՛չ:

79.Սուտ սրբերից հեռո՛ւ մնացեք: Այո՛:

80.Սովորեք գաղտնիք պահել: Եթե չեք կարողանում զսպել ձեզ գաղտնիքը, պատմեք Արարչին, թղթի վրա այրեք ու տվեք քամուն, բայց երբեք մի՛ հանձնվեք հետաքրքրասերներին: Ո՛չ:

81.Ձեզ փորձում են: Ողջամտություն ցուցաբերեք, վաղուց երեխա չեք: Այո՛:

82.Ձեր ընտանիքն է ձեր կացարանը: Եթե այդտեղ վատ է, դուք եք ուրեմն մեղավոր: Դուք եք այն կառուցողներից մեկը ու եթե դեռ տանջվում եք, ապա կամ հեռացեք, կամ փոխեք: Ո՛չ:

83.Մի՛ տրտնջացեք: Ծուլությունը ուղարկվում է, որ ձեր ներքին հզոր ուժը փակվի, որ այլ մարդիկ օգտվեն այդ հաջողությունից: Այսօրվա օրը էլ չի կրկնվելու: Այո՛:

84.Դուրս եկեք զբոսնելու, շնչեք բնությունը, շատ շնչեք՝ իրական և ոչ թե ցուցադրական: Ո՛չ:

85.Քիչ ընթերցեք ապուշ գրականություն, այն բթացնում է ձեզ և փորձում է դարձնել անզգա ու անտարբեր: Այո՛:

86.Ազատվեք սուտ էջերից ու մի քանի սոցիալական ցանցերից, բայց և եղեք ակտիվ: Տարածեք բարիք և ոչ թե այլանդակությունը սրտիկեք: Ո՛չ:

87.Ժամանակակից լինել չի նշանակում լինել լպիրշ: Սովորեցրեք ձեր կողակիցներին ապրել առաքինի, եթե չեն ուզում, ապա ստիպեք, եթե չի ստացվում, թողեք նրան իր կեղտի մեջ: Այո՛:

88.Աղոթե՛ք, հիմա դրա ժամանակն է, հենց հիմա խոսեք Տիրոջ հետ հենց այնպես: Խոսեք առանց պատկերացնելու՝ նա տղամարդ է, թե կին, ուղղակի խոսեք: Ո՛չ:

89.Կասկածներից ազատվեք, դա քայքայում է ձեզ: Դուք ծնված եք սեր տարածելու համար, ուրեմն մի ետ կանգնեք ձեր առաքելությունից: Այո՛:

90.Հանեք ձեր միջից վատ մտքերը, նախանձը, վախերը, դրանք վտանգավոր թույներ են, որոնք թունավորում են ձեր իսկ ենթագիտակցությունը: Ո՛չ:

91.Ակնկալիր կյանքից լավը,գեղեցիկը և դու կստանաս այն: Այո՛:

92.Ազատվեք ձեր կախվածություններից, ապրեք ազատ: Ո՛չ:

93.Ձեր կյանքի որակը կախված է ձեր մտքերի որակից: Այո՛:

94.Խոսքի ուժը կախված է ձեր հավատից: Ո՛չ:

95.Դուք միակ լուծումն եք ձեր կյանքի բոլոր խնդիրների: Այո՛:

96.Երբ սկսեք նկատել ձեր թերությունները, նրանք այդ պահին կընկնեն ինչպես չորացած տերևներ: Ո՛չ:

97.Միայն ձեր մտքերն են ձեզ երջանիկ կամ դժբախտ դարձնում. դարձրեք ձեզ երջանիկ: Այո՛:

98.Դուք սխալ տեղում եք: Զգո՛ւյշ եղեք, շատ մարդկանց շրջապատում չկորցնեք ավելի կարևորը: Ո՛չ:

99.Մի՛ փորձեք տարբերվել, դա շատ ծիծաղելի է: Այո՛:

100.Մի՛ վախեցեք քայլ անել ու մերժում ստանալ, դա վեհ արժեք է: Ո՛չ:

101.Մի՛ դադարեք փնտրել լույսը բնության մեջ և միայն ձեր մեջ: Մարդիկ չեն դարձնում մեզ երջանիկ, մարդիկ ուզում են միշտ լինել ճիշտ: Այո՛:

102.Ժամանակն է հետևել երազների խորհրդին՝ ոչ թե դիմելով գուշակությանը, այլ վերլուծելով ինքներդ ձեր մեջ: Ո՛չ:

103.Մեկը եթե այսօր ժպտա ձեր շնորհիվ և եթե նա արժանի մարդ լինի, դուք իրական երջանկություն կստանաք մի քանի օրից: Այո՛:

104. Մի՛ փորձեք անպայման մեղադրել նրան, դուք էլ եք մեղավոր ու ավելի շատ: Ո՛չ:

105. Որպեսզի վայելեք եդեմական դրախտը, ամեն օր աղոթեք ու խաղաղ եղեք անգամ, երբ ամեն ինչ թվում է ավարտված: Չէ՞ որ կարող եք վերցնել ու փոխել: Այո՛:

106.Ազատվեք վախերից: Վախը գալիս է ձեր կյանք այն ժամանակ, երբ դուք մոռանում եք, որ ինքներդ եք նրան հրավիրել: Մի՛ եղեք հյուրընկալ վախի հանդեպ: Ո՛չ:

107.Ձեր էներգիան կենտրոնացրեք նրա վրա, ինչը իրականում կարևոր է և անհրաժեշտ է ձեզ: Այո՛:

108.Մի՛ մեղադրեք այլոց ձեր սխալների համար, այդ թակարդը ընկնում են բոլորը, գտեք ուժ և պատասխանատվություն ձեր սխալների հետևանքի համար մեղադրել միայն ձեզ: Ո՛չ:

109.Անցյալի վերքերը մի դարձրեք ձեր կյանքի գլխավոր թեման: Այո՛:

110.Մեծ հարստություն: Թույլ տվեք ձեր երազանքները իրականանան, ձեզ թույլ տվեք դառնալ երջանիկ: Ո՛չ:

111.Նոր կյանքի սկիզբ, երեխայի ծնունդ, նոր լույս ձեր տանը: Այո՛:

112.Փուլի վերջ. կդադարի ամեն բան լինել նույնը, կսկսվի մի նոր կյանք նոր էջով: Ո՛չ:

113. Կյանքը արվեստագիտական մոտեցում է սպասում ձեզնից: Դուք պետք է կարողանաք ձեզ դրսևորել խմբային աշխատանքում, զերծ մնալ բամբասանքից, լինել չեզոք և լուռ: Այո՛:

114.Հոգևորը ոչ թե երկրորդական է, այլ առաջնային, բավակա՜ն է արտաքինը գնահատեք: Ո՛չ:

115.Շատ լավ եք, դուրս եկեք փորձությունից և դրա համար ձեզ հանգիստ է սպասվում: Այո՛:

116.Այս ընթացքը փորձություններով լի կլինի, որպեսզի հետո դուք կարողանաք ավելի իմաստուն փուլ մտնել: Ո՛չ:

117.Վերանայեք իրավիճակը և ամեն բան, ինչ կապ ունի ներկայի հետ, հաշվի առեք փաստերը, ժամանակն է շարժվել այլ ուղղությամբ: Այո՛:

118.Շատ բան կփոխվի ու շատ մեծ թափով: Չվախենա՛ք, քանի որ դա միայն լավ նպատակի համար է: Ո՛չ:

119.Մի քիչ տխուր եք. հարցրեք ձեզ, թե ինչու: Արդյո՞ք տխրությունը պետք է տևի հինգ րոպեից ավել, իհարկե՝ ոչ: Այո՛:

120.Ամեն բան չի լինի այնպես, ինչպես դուք եք ուզում: Ինչը կորցրեցիք, էլ հետ չեք բերի: Ո՛չ:

121. Ներումը ավելորդ է, եթե այն երեք անգամից շատ է: Այո՛:

122.Վախը շատ վատ լուծում է: Նայեք վախի աչքերին և այնպես արեք, որ ձեր հայացքից կարկամի: Ո՛չ:

123.Մի փոքր թեթև վերաբերվեք այդ իրավիճակին: Այո՛:

124.Գումարի հետ հարգանքով վարվեք, որ այն չվիրավորի ձեզ ու չգնա այլ կողմ: Ո՛չ:

125.Կյանքի շատ կարևոր փուլ, չափից կարևոր: Բացահայտումը, որը կանեք, կդառնա հետագա որոշումների փոփոխման պատճառ: Այո՛:

126.Կարևոր աշխատանքային շրջադարձ: Ո՜չ:

127.Կարգավորեք ձեր առօրյան, սնվեք առողջ ու լսեք իմաստուն երաժշտություն: Մի՛ թույլ տվեք, որ այլ մարդ իր բառերով համակի և փաթաթի ձեզ իր տեսակը: Այո՜:

128.Բացեք ձեր մտահորիզոնը, այն պետք է և՛ ձեզ, և՛ աշխարհին: Ո՜չ:

129.Դրամական նվեր, որը վաղուց պետք է լիներ, բայց ձեր վատատեսության պատճառով չէր լինում, հիմա փոխվել եք դուք, փոխվել է աշխարհը ձեր հանդեպ: Այո՜:

130.Լավ հնարավորություն, որը բաց եք թողել: Ձանձրույթը սիրելիի հետ ամենահաճելի զբաղմունքն է, հավատացեք: Ձանձրույթը շատ հաճելի է, երբ երկուսով եք: Ո՜չ:

131.Ժամանակ հատկացրեք նաև այն մարդկանց, ովքեր ձեր շրջապատում են: Մի՛ կենտրոնացեք միայն ցուցադրական բարության վրա: Այո՜:

132.Անցյալի մասին հիշողությունները ջնջելու ու վերացնելու ճիշտ ժամանակն ու օրն է: Ո՜չ:

133.Հզոր ներքին ուժ: Ազատվեք կտրուկ որոշում կայացնելու մտքից, թերևս, հիմա: Այո՜:

134.Դրական փոփոխությունների շրջան: Համբերությունը ամենակարևոր ուժն է: Ո՜չ:

135.Թույլ տվեք ձեզ մի փոքր ճոխություն, դա հոյակապ կազդի, ձեր դրական էներգիան կզարգանա, և լույս կարտացոլվի ձեր կյանքում: Այո՜:

136. Դուք ճիշտ ուղու վրա եք, մի վախեցեք: Մեղավորներ չկան, մեղավորն էլ եք դուք, անմեղն էլ: Ո՜չ:

137.Հավասարակշիռ դատելու ժամանակն է, անցում դեպի հասուն կյանք: Այո՜: